

3863

4-17 00

10 AUG



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺԴ

22

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

Փ Ա Ր Ի Ձ

1936

4-09 00

00 AUG 2010

“V E M,”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱՌՆԻԿ ԳԻՒԶԱԼԵԱՆ Մեծ Յոթելեանի առքիւ

ՏՕԲԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ Յուշատետրէս

ՇԱՌԼ ԴԻԼ Հայկական շարտարապետութիւնը

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ Հայաստանի գմբէթաւոր եկեղեցիները
եւ անոնց նարտարապետական արժէքը

ՇԱԽԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ Նպաստ մը հայ եւ թուրք աշուղական
գրականութեան

ԻՌԻԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ Մ. Նալբանդեանցի անտիպ երկերը

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ Արեւալիքի օրեր

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ Համաշխարհային պատերազմը եւ
Տարօնի աշխարհը

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ Բագրատ վարդապետ Գեորգ-Թաւապալեան

ԱՆՅԵԱԼՔ Եղիշէ Թադէոսեան Ներսէս Օհանեան

ԿԵԱՆՔ ԵՎ ՄՇԱԿՈՅԹ Վասպուրականի ինքնապաշտպանութեան
40-ամեայ տարեդարձը, Վ. Փ. - Թերթերու տարե-
դարձներ, Վ. Փ. - «Անյո՞յշ» թէ «Անուշ»,

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ «Եռերդային Գրականութիւն» հանդէսը,
Ա. Խ. - Գաղութեան պարբերական մամուլը, Փ. -

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ «Սասնայ ծոեր», Յ. Զարեան Ռ. Զարդար-
եան՝ «Գու եւ Ես», Ա. Խ. - «Համագրային Տարե-
գիրք», Վ. Փ.

ՅԱԻՆԼԻԱԾ Վահրամ Եպ. Մանկունի, «Գեորգ Գ. եւ իր
ժամանակը»

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝
տարեկան 70 ֆրան

Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրան


Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիւրիա, եւ
Պարսկաստան՝ , , 50 ֆրան

ՆԱՌՈՐԿ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐԱՒԱՆՁԻՐ ՏԱՐԻՈՅ 6 ԳԻՐՔԸ՝ 25 ՅՐ.
Հասցէ՝ նամակների, դրամի, յօդւածների եւ ուրիշ տվէն
տեսակ առաքումների համար

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Ples's-Robinson (S.

Gérant : V. Hampartzoumian

Impr. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquiére, PARIS (17e)



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 2 1936 ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

ԳԱՌՆԻԿ ԳԻՒԶԱԼԵԱՆ

ՄԵԾ ՅՈՒԵԼԵԱՆԻ ԱՌԹԻԻ

I

ԿՐՕՆԻ ԳԵՐԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԷՁ

Ասուածաշնչի հայերէն թարգմանութիւնը հայ հոգեւոր կեանքի պատմութեան մեծագոյն դործերից մէկն է. իսկ ամէն հոգեւոր արժէք մասն է կազմում մշակոյթի, այսինքն այն բանի, որ ստեղծւում է հաւաքականօրէն ապրող մարդու կամքի, մտքի եւ զգացումի աշխատանքով: Մշակոյթը մեր ներաշխարհի պահանջն է դրսեւորելու, կերպաւորելու այն՝ ինչ որ կայ իր մէջ անձեւ, անկերպարան: Մշակոյթը ստեղծւում է հաւաքական միջավայրում, իսկ այդ՝ ազգային է. չկայ ժամանակից ու տարածութիւնից դուրս ընկերային միջավայր: Մշակոյթի կրողն ու կերտողը ազգային հաւաքականութեան մէջ ապրող անհատն է: Նա հոգեկան ուժերի, ունակութիւնների առարկայացումն է տարածութեան եւ ժամանակի մէջ. ու այսպիսով ամէն մէկ կերտածք խորհրդանշան է՝ լինի նա դերք, տաճար, խօսք, երգ, տնտեսութիւն, պետական կառուցածք: Մենք ապրում ենք մշակութային խորհրդանշանների շրջանում: Միայն դրսեւորելով, առարկայանալով է, որ մեր հոգեկան արժէքները դառնում են տեսանելի, հասկանալի եւ ճաշակելի:

Հայոց ինքնութիւնը, այն եղակին ու չկրկնողը, որ յատուկ է միայն հայութեան՝ առարկայացաւ հայ գրի, գրականութեան, արւեստի, հայ ճարտարապետութեան եւ մանրանկարչութեան, հայ եր-

678

511-2001

գի, շարականի, կրօնա-դաւանական մտածումի, եկեղեցու կազմակերպութեան մէջ, մէկ խօսքով այն ամէն փաստերի, որ մենք կոչում ենք հոգեւոր եւ նիւթական մշակոյթ եւ որի կառուցումի համար հայ ազգային միաւորը կատարել է երկար դարերի աշխատանք, փորձով, վերելալընդունելով: Առանց վերոյիշեալ արժէքների չկայ եւ չի կարող լինել հայութիւնը: Այս բառը՝ հայութիւնը խտացումն է մեր մշակութային խորհրդանշանների, մեր մտածութեան եւ արտայայտութեան ձևի, նկարագրի, բարոյական խառնածքի: Հայութիւնը ոչ թէ նիւթ է, այլ որակ, զգալու, կերպաւորելու ուրոյն ձև, որ սակայն հանրային արժէք դառնալու համար պէտք է թանձրանայ, շօշափելի դառնայ: Գրքերի հոլովոյթի մէջ հայութիւնը կերտել է գրի, գրականութեան, երգի, եկեղեցու մէջ. իսկ սրանք հաւաքող, մտքերը, զգացումները խտացնող, կամքերը դարձնող գաղափարներ են, հաստատութիւններ: Հայ լեզուի շուրջը համախմբած մարդկային հաւաքականութիւնը եւ նրա վրա կառուցւած միութիւնը մենք կոչում ենք հայոց ազգ, իսկ նրա հոգեւոր բովանդակութիւնը՝ հայոց ազգայնութիւն: Գրականութիւնն էլ լեզական փաստ է, ուստի նա միայն ազգային կարող է լինել: Հաւաքումի, միացումի այս փորձը մեր երկրում կատարեց գերազանցօրէն քրիստոնէութեան շրջանում: Նրա վրա պատաստեց հայոց ազգայնութեան գաղափարը: Նա տեց հայութեան ուրոյն ազգ-մշակութային միաւոր լինելու գիտակցութիւնը: Չենք ժխտում, որ հաւաքումի, միացումի այդ փորձը սկսել էր Քրիստոսից շատ առաջ, սակայն նա եղել էր սաղմնային դրութեան մէջ, տեղի էր ունեցել եզրակի անհատների գիտակցւած ջանքերով: Իսկ ազգային հաւաքականութիւնները կառուցւում են հոգեւոր արժէքների, կրօնական մըտածումների եւ հաստատութեանց հիմքերով: Միայն դրա վրա եւ դրանից յետոյ քաղաքական իշխանութիւնը դալիս է նրան զօրավիզ լինելու: Ազգութիւնը չի ստեղծւել առանց գաղափարական հիմքերի՝ որքան էլ պետական «անօթը» ուժեղ լինի: Միայն այդ պարագային նա ամրակուռ պատւանդան ունի եւ տեւական է: Հէնց այս «հոգեւոր անօթն» էր, որ պակասում էր մեր Արտաշիսեան եւ Արշակունեաց պատմաշրջանին, թէպէտ նրանք փորձեր արին ստեղծելու այն:

Շատերի համար Աստուածաշունչը կրօնական մէկ մատեան է, թարգմանութիւնն էլ արւած կրօնական կարիքներին բաւարարելու համար, ուստի եւ Ս. Գրքի թարգմանութեան 1500-ամեակը կրօնական եկեղեցական տօն է. գուտ մշակութայինը, ազգայինը կամ տեղ չունի այստեղ կամ երկրորդական արժէք ունի: Սակայն այս տեսակէտը հին է ու հնացած, նա մշակուած էր հայ պահպանողականների

բանակում նախորդ դարի 80ական թւականներին «Մեղու»ի շուրջ հաւաքւած մտածողների շրջանակում. «հայ ազգի գոյութեան յատկանիշը կրօնն է, եկեղեցին» - ահա նրանց բանաձևումը: Հիմա այս մտածողութեան պաշտպանները դժւար թէ ժխտեն, որ կրօնը ինքը հոգեւոր արժէք է, հետեւապէս նա էլ մշակոյթի տարրն է եւ միայն մէկ տարրը, այսինքն մարդկային ստեղծագործ ոգու առարկայացումն է եւ ենթակայ նոյն հոլովոյթին, ինչ որ մշակոյթի միւս մասերը եւ անկախ չէ նրանցից: Բլորովին նշանակութիւնն չունի այն հանգամանքը, որ կրօնը կը նայի կեանքին, երեւոյթներին յաւիտենականութեան ակնոցով, կորոնէ կապը մարդու եւ Աստուծոյ միջեւ, մեր գոյութեան ամենէն ինտիմ եւ հոգեւոր հիմքերը կը դարձնէ: Նա միշտ մնում է մշակոյթի միայն մէկ եւ շատ անհրաժեշտ մասնիկը, առանց որի դուցէ կարելի լինի ապրել, բայց որը շատ աւելի կենսարար, բովանդակալից եւ խորն է դարձնում մարդու ներաշխարհը, մեր ամբողջ կեանքը: Կրօնի գերակշիռ նշանակութիւնը պատմութեան որոշ շրջաններում փաստ է. բոլոր ժողովուրդները իրենց պատմական կեանքի մէկ ժամանակամիջոցում երկու սկզբունքներ՝ ազգութիւնը եւ կրօնը՝ ապրել, զգացել են միացած, ձուլւած. կրօնը նշանակել է ազգային միաւորի հետ, ազգը վեր է ածւել կրօնապէս միացած հաւաքականութեան: Պատմութեան այս ընթացքը ապրել են ներկայում ապրող եւ արդէն մեռած ազգութիւնները եւ դեռ շատերը կան, որոնք դուրս չեն եկել ազգութեան հոլովոյթի կրօնական փուլից: Բայց այս բանը ոչ ցեղական ոչ ազգային յատկանիշ է, այլ բոլոր ժողովուրդների հոգե-մտաւոր եւ քաղաքական գարգացման մէկ փուլը եւ շատ կարեւոր փուլը: Հասարակական այս երեւոյթի պատճառն այն է, որ մէկ դարաշրջանում մշակոյթի կրօնական տարրը գերիշխող է մտքերի, հոգիների, գործի վրա, առաջնութիւն է ստացել միւսների հանդէպ. ոչ միայն այդքան, այլ եւ իրենով գունաւորել է հոգեւոր կեանքի միւս արտայայտութիւնները: Կրօնի այս բացառիկ, եզակի դերը դարձնում էր նրան «ազգային միութիւնը ստեղծող եւ պահող ազգակ»: Ազգութիւնը ստանում է կրօնական դունաւորում, այստեղից էլ «կրօնական ազգ» գաղափարը: Բայց այս պատճառ չէ, որ կրօնը համարենք միակը եւ ամէն ինչ՝ այն բազմակողմանի եւ բազմաձև կառուցումի մէջ, որ կոչեցինք հոգեւոր մշակոյթ: Տրամաբանական սխալ է ամբողջը փոխրինել միայն մէկ մասնիկով, պատմական եւ հասարակագիտական սխալ է կրօնը համարել պատմութեան միակ եւ որոշիչ գործօն:

Ըստ մեր տեսակէտի պատմութեան միակ եւ մնայուն առարկան ընկերային այն հաւաքականութիւնն է, որ կոչում ենք ազգ: Միւս՝

հաւաքական ձեւերը ազդութեան հետ համեմատած պայմանական են, այսինքն իրենց հիմքը, կառուցումը ազգային միջավայրն է: Պետութիւնը բովանդակ պատմութեան մէջ մէկ մղում է հանդիսաբերում՝ դժեւ, յարմարեցնել իր սահմանները ազդութեան սահմաններին. դասակարգը դառնում է եւ դասակարգային պայքարը տեղի է ունենում ազդութեան շրջանակում. քաղաքական կուսակցութիւնները ձեւաւորում են ազգային միջավայրում. կրօնն ու եկեղեցին նոյնպէս ազգայնանում են: Որ եւ է դադարաւոր կրօնական թէ դասակարգային կարող է լինել միջազգային, սակայն նրա կերտումը, գործադրումը միշտ ազգային է: Ըստ մեզ՝ ընկերային կեանքը անդէմ, անորոշ գործ զանգածների մարմնաւոր եւ հոգեւոր հաւաքումն է եւ կառուցումը դիմաւոր, ինքնատիպ հաւաքականութիւնների՝ ազգութիւնների: Պատմութիւնը ազգութեանց կերտումի գործն է: Սակայն, ազդութիւնները լեզւա-մշակութային միութիւններ են, որոնց մէջ հոգեւոր արժէքները առանձնացած, իրար հետ կապ ունեցող երեւոյթներ չեն, այլ միացած են բնազանցօրէն այն դոյակի (սուբստանցի) մէջ, որ մենք ազգ ենք կոչում եւ որի մասին գիտենք միայն իր առարկայացման ձեւերով որպէս մշակութային խորհրդանշաններ: Ազդութիւնը այդ արժէքների բազմազանութիւնն է ու միութիւնը, բազմազանութիւնը՝ միութեան մէջ: Մեթոտի տեսակէտով դուցէ պիտանի է ու յարմար այդ արժէքները առանձին, առանձին քննել, պատմականօրէն, սակայն սխալ կը լինի, որովհետեւ դա կը նշանակէր մասը նոյնացնել ընդհանուրի հետ եւ մասնակիով մեկնաբանել ամբողջը: Իսկանն այն է, որ կրօնն էլ, եկեղեցին էլ առարկայացումն են պատմութեան միակ գործօնի, ազդութեան: Նըրանք մէկ մասն են ազգային արժէքների եւ նրա գոյութիւնն իսկ որպէս պաշտամունքի ուրոյն գրութիւն, որպէս կազմակերպութիւն եւ հաստատութիւն նշան է արդէն ազգային բարդ մարմնի գոյութեան:

Սակայն, մի խնդիր եւս կապւած է կրօնի եւ կրօնական ազգայնութեան հետ: Նա հանրային կեանքում դեր ունի, իրենով կարող է պայմանաւորել հոգեւոր եւ քաղաքական կեանքը միայն այն դէպքում, երբ մօտենայ աշխարհին, յարմարել իրականութեան: Միաստեւածութեան բոլոր կրօնները միջազգային են, հանրամարդկային իրենց զազափարներով, սակայն, նրանց կերտումը, սկզբունքների իրացումը նրանց դարձնում է ազգային, տեղական: Հանրային ազգակ դառնալու համար կրօնը վերացական բարձունքներից պէտք է իջնի իրականութեան, դառնայ կազմակերպութիւն, դաւանանք, ազգայնանայ կառուցւածքով, մտածումով, միայն եւ միայն այս դէպքում նա իր կնիքը կը դնի դէմքերի եւ դէպքերի վրա եւ կը պայմա-

նաւորի երեւոյթների ընթացքը: Միայն այս բարձունքով կարելի է խօսել կրօնի եւ կրօնական հաստատութիւնների ընկերային գործօն լինելու մասին: Քրիստոնէութիւնը ընդունած բոլոր ժողովուրդների մէջ մէկ մղում է նկատում՝ ազգայնացնել քրիստոնէութիւնը՝ երբեմն դաւանանքով, երբեմն կազմակերպութեամբ, երբեմն ծէսերով: Մի յամառ ջանք է նկատում բոլոր ազգերի պատմութեան մէջ ազգային լեզուն բարձրացնել եկեղեցու, կրօնական մտքերը, զգացումները արտայայտելու աստիճանին: Իրականութեան մէջ այդ կը նշանակէր պայքարել յոյն եւ լատին միջազգայնացած լեզուների դէմ յանուն լեզւական ինքնորոշման - մէկ ձգտում է այդ մօտեցնելու լեզուի սահմանները եկեղեցու սահմաններին եւ լեզուի ու եկեղեցու վրա կառուցանելու նոր ազդութիւնը: Եկեղեցու ազգայնացման եւ լեզուի եկեղեցականացման այս ընթացքը մենք չեչուած կերպով նկատում ենք Արեւմտեան եւ Միջին Եւրոպայում միջնադարի կէսերից սկսած: Այդ գործողութիւնը յատուկ չէ մէկ ազգի. նա բոլոր ազգերի, ժողովուրդների հողովոյթի մէկ փուլն է: Նրանով են ըսկըղբնաւորում ժամանակակից ազդութիւնների ազատագրական շարժումները: Այդ շարժումները կրօնա-դաւանական հիմքեր ունեն: Արեւմտեան Եւրոպայի ազգերը կրօնա-դաւանական ազգայնութեան այդ փուլը անցել են 14-րդ - 16-րդ դարերում, իսկ հայութիւնը այդ աշխատանքը կատարել է ժամանակակից եւրոպական ազգերի պայքարից հաղար տարի առաջ, չորրորդ եւ հինգերորդ դարերում:

Այս տեսակէտից նայելով հայկական քրիստոնէութիւնը հայոց ազգային կազմակերպութեան մէկ ձեւն է եւ ամենէն բնորոշ ձեւը: Հայոց քրիստոնէութեան կառուցումը սկսում է չորրորդ դարի սկզբից եւ վերջանում վեցերորդ դարի սկզբում: Երկու դարի մէջ նըրա դարգացումը ընթանում է, հետեւեալ փուլերով. չորրորդ դարի սկզբին նա պիտակաւանում է, ապա կազմակերպչօրէն անկախանում արտաքին աշխարհից, աւատականանում ներքին կեանքում, իւրացնում հայ հեթանոսական կրօնի կազմակերպութեան ձեւերն ու ծէսերը, այս ձեւով ազգայնանում, հինգերորդ դարի սկզբին ազգայնանում լեզուով, հիմնաւորում հայոց հոգեւոր մշակոյթը, գրականութիւնը, վեցերորդ դարի սկզբին բաժանում է արեւմուտքից՝ Բիւզանդիոնից դաւանօրէն եւ մեկուսանում: Ազգայնացումը բոլոր կենսական հարցերի շուրջը տանում է նրան մեկուսացման: Մեր պատմական կեանքում մեկուսացում եւ ազգայնացում նոյնանում են:

Հայոց ազդութեան կառուցումի առաջին փորձերը նախաքրիստոնէական շրջանում են կատարւում: Բնիկ յարէթական ցեղերի եւ

եկեր արիա-եւրոպացիները դանդաղ միաւորումը ստեղծում է ցեղական-հոգեկան կազմաւորման այն հիմքը, որ հետագայում մնում է հայութեան մէջ էականը, տիրականը: Արեւմտեան, արիականը կառուցեց յարեթական-ասիական միջնաւայրում եւ նրա գործակցութեամբ: Երկու ազգագրական տարրերը իրար հանդիպելիս տարրեր հասարակական ու մշակութային աստիճաններ էին եւ բերին ընդհանուր գործի համար տարրեր արժէքներ եւ աւանդութիւններ, որոնք եւ հիմք դարձան հետագայ հոգեւոր կառուցումների, երբ նրանք աստիճանական հոլովոյթի մէջ դառնում են մէկ հայ, արմէն: Հայոց ազգայնութեան ծագման եւ կազմաւորման գործը սկզբից եւ եթ կապում է հայ լեզուի հետ: Ըստ Մ. Խորենացու մեր աւանդութեան հերոսներից մէկը Արամը տիտանների դէմ պայքարելով գրաւում է Կապադովկիան, հրամայում է, որ այնտեղ ամենքը հայերէն խօսեն: Հայոց լեզուն դառնում է հիմքը, շողախը հայ պետականութեան երրորդ դարի վերջին եւ երկրորդ դարի սկզբին Քրիստոսից առաջ. հայութիւնը ջանք է թափում ստեղծելու մէկ լեզու. նա կերտում է Արտաշէսի պալատում եւ մշակում հայ քրմական դասի մէջ. տեղական, ցեղական լեզուներից բարձրանում է մէկ հայկական լեզուն: Մենք չգիտենք որքան լայն էր նրա գործածութեան շրջանակը, հաւանական է, որ նա լինէր քաղաքականապէս իշխող մէկ ցեղի լեզուն, որ շնորհիւ իր դիրքի նրա տեւ էր համապետական եւ կրօնական արժէք: Ցեղական հիմքերով ստեղծւած այդ լեզուն դարձաւ իշխող դասի՝ արքունիքի, նախարարութեան եւ քրմութեան լեզուն եւ այդ շրջանակում էլ մշակեց, դուրս: Մեղ համար նշանակալից է այն փաստը, որ Քրիստոսից երկու դար առաջ հայ պետական ուժին զուգահեռ ու նրա վրա կոթնած՝ հայ լեզուն է կատարում հայութեան հաւաքման գործը: Արտաշէսի մեծագոյն ժառանգը Տիգրան Մեծն է: Նա առաջինն եղաւ, որ հայոց բարձրաւանդակում կղզիացած, մեկուսացած հայութիւնը դուրս բերեց միջդրացին կեանքի ասպարէզ, չիման մէջ դրեց մեծ մշակութային-քաղաքական շարժումների հետ, փորձեց նոր հայութեան դիմադրիչը կերտել հելլենական մշակոյթի հիմքերով:

Տիգրան Մեծը դուրս բերելով հայութիւնը իր ազգագրական սահմաններից՝ մի-երկու տասնամեակ պահեց իր ձեռքին Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների ու երկիրների բախտը: Այս փաստն արդէն ենթադրել պէտք է տայ, որ նրա օրով հայութիւնն այնքան հոգեկան, նիւթական եւ ուղղական մեծ ոյժ էր, որ կարողացել էր ենթարկել իրեն այլազան ազգերին ու ցեղերին: Եւ անշուշտ նրա օրով, քաղաքական այդ վերելայրումների մէջ հայոց միութեան դիտակ-

ցութիւնը պէտք է խորանար ու արդէն սկսւած ազգային լեզուի դարգացումը էլ աւելի առաջ պիտի դնար: Այլապէս անհասկանալի կը դառնայ հինգերորդ դարի մեծագոյն լեզուի ճոխութիւնը, եթէ չընդունենք, որ նա անցել է հոլովոյթի մի երկար շրջան Արտաշէսեան եւ Արշակունեաց դարաշրջաններում: Այդ լեզուն արքունի, ոստանիկ լեզուն էր, ուստի եւ ունի իր մէջ օտար, պարսկական տարրեր, որովհետեւ Արշակունիները իրանական-պարթեական ծագում ունենալով՝ բերին իրենց հետ եւ պարսից մշակոյթը: Հայ կրօնա-քաղաքական կեդրոններում հաւաքւում էին վարիչ դասի զաւակները՝ ուսանելու, մտնելու վարչութեան մէջ, փորձելու ժամանակի կրօնական եւ վարչական դիտութեան ու գործի մէջ - նրանք այստեղ խօսում էին հայերէն, քարոզում ու ներբողներ ձօնում հայ լեզուով, որի հետեւանքով ստեղծւում էր հայերէն հասկացող եւ խօսող մի մեծ բազմութիւն: Այդ լեզուն հայ դուստանների միջոցով տարածւում էր մեր հայրենիքի բոլոր կողմերը: Այսպիսով հայոց լեզուն նախ քան հայ հոգեւորականութեան ձեռքն անցնելը եւ նրա միջոցով գրի ու գրքի լեզու դառնալը հայ քաղաքական ու կրօնական ղեկավար շրջանների լեզուն էր: Քրիստոնէութեան միջոցով՝ արժոււնիքի, քրմական-մտաւորական շրջանակից նա անցնում է հայ կղերական-մրտաւորական շրջանակը:

Երրորդ դարի սկզբին, 226 թ., Պարսկաստանում կատարեց Իւրանի պատմութեան մեծագոյն յեղաշրջումը, որ ոչ միայն արքայական հարստութեան փոփոխութիւնն էր, այլ եւ քաղաքական, կրօնական եւ ազգային մեծ երեւոյթ էր: Ապագայնացած եւ «յունասէր» պարթեաներին փոխարինում էին ազգայնական եւ յունաստեաց Սասանեանները, որոնք իրենց հետ բերում էին կրօնական եւ պետական նոր ըմբռնում: Պետական նոր ձեւը՝ բիւրոկրատիկ կազմակերպութիւնը, նրանք ոչ միայն աւանդութեամբ ստանում էին Աքեմենեան հարստութիւնից, որոնցից սերւած էին համարում իրենց, ուստի եւ իրաւատէր՝ դահլ դրաւելու, այլ եւ ընդօրինակում էին Հընոմէական կայսրութիւնից, ուր դարաւոր փորձով մշակուել էր մէկ ճկուն եւ ամէն ինչ ընդգրկող վարչաձեւ: Այս պետական կարգը հակադրւում էր Արշակունիների աւատական կառուցումին, ուր պետութեան բաղադրան մասերը շատ թոյլ էին միացած կեդրոնի հետ: Բայց էականն այն էր, որ Սասան Արդաշիրը պետական եւ ազգային կեանքի միութիւնը հիմնեց կրօնի վրա: Նրա եւ նրա յաջորդների արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը կրեց զրադաշտական - կրօնական բնոյթ: Եթէ ազգային միութեան կապը կրօնն է՝ ապա նրա վարած քաղաքականութիւնը դառնալու է հալածող, ուրիշ կը-

րօնների չհանդուրժող: Որպէս ազգ կրօնական միութիւն Սասանեանների վարչութեան մէջ յատուկ տեղ դրաւեց քրմական դասը՝ զբաղաչտական կղերականութիւնը: Նա շատ մեծ քաղաքական ոյժ դարձաւ պարսից պետութեան մէջ: Պետականանալով՝ զբաղաչտականութիւնը կորցրեց իր կրօնա-բարոյական ուսմունքից շատ բան: Նոր հարստութիւնը կրօնը ըմբռնեց որպէս հաստատութիւն, կառուցեց մոզերի նւիրապետութիւնը, որ ներքին եւ արտաքին դործերի մէջ դարձաւ իրենց յենարանը: Այդ նւիրապետութեան ձեռքն էր կրթութիւնը, գիրը, միաքը, նա հողիների կաղապարողն էր, ղեկավարը: Սասանեանների օրով մաղղեղականութեան ներքին զարգացումը կանգ առաւ, վերջնական բանաձեւ ստացաւ: Որպէս պետական կրօն նա հալածանքի ենթարկեց հրէական, քրիստոնէական դաւանանքները, որոնց հետեւողները զանգւածօրէն սպրդում էին պարսկակաքաղաքներում եւ ազատ արւեստի, տնտեսութեան ու մշակոյթի բարձր ձեւերի կրողն էին:

Կրօնական հիմքերով կառուցւած Պարսկաստանը դարձաւ մեծագոյն թշնամի Հայաստանի: Այստեղ իշխում էր Արշակունիների կրթասեր ճիւղը: Հայ արքունիքում հաւաքւած էին քաղաքական տարագիրները, որոնք փախել էին Պարսկաստանից Սասանեանների պետական յեղաշրջումից յետոյ եւ դաւադրութիւններ էին կազմակերպում նրանց դէմ: Պարթեւ քաղաքական փախստականները չէին հաշտւում եւ չէին հասկանում Իրանի բարձրաւանդակում տեղի ունեցած յեղափոխութեան իմաստը եւ ջանում էին վերահաստատել հին կարգը - Արշակունիների տիրապետութիւնը՝ իրենց աւատական դրութեամբ, հելլենասիրութեամբ: Այս հակաշարժման գլուխը կանգնած էին Հայ Արշակունիները, որոնց համար խնդիրը ոչ միայն անձնական արժանապատւութեան հարց էր, այլ եւ քաղաքական ապահովութեան խնդիր: Վտանգւում էր Հայաստանի անկախութիւնը: Սասանեանները չէին կարող հաշտել Հայ Արշակունիների գոյութեան հետ: Որքան ժամանակ Հայաստանում Արշակունիները կ'իշխեն՝ իրենք հիւսիս-արեւմտեան ճակատում վտանգւած էին: Ոչ միայն այդքան. այլեւ իրենց ազգային-քաղաքական ծրագիրը՝ ժառանգութիւն ստացած պարթեւներից, այսինքն՝ դուրս քշել հռոմէացիներին Մերձաւոր Արեւելքից, անիրազօրծելի խնդիր պիտի մնար: Հայ Աշակունիների վերացումը ոչ միայն ներքին վարչաձեւի ապահովութեան հարց էր, այլեւ Առաջաւոր Ասիայի նւաճման մէկ կարեւոր խնդիրը:

Սասանեաններից առաջ հայ-պարսկական բարեկամութիւնը հաստատւած էր թագաւորական տների կապի վրա՝ որ մեր պատ-

մութեան մէկ երկար շրջանի համար ունեցաւ բախտորոշ նշանակութիւն: Իրանականութիւնը որպէս մշակութային-պատմական ձեւ պատւաստեց մեր երկրում շատ ամուր: Նրա կրողը հանդիսանում էր հայ-պարթեւական արքունիքը, իրեն հետ եկած բանակը, պարթեւ շատ նախարարական տներ, որոնք հաստատուեցին մեր երկրում: Իրականութիւնը մեզ մօտ ոչ միայն քաղաքականութիւն էր, այլ եւ կրօն, կենցաղ, վարք ու բարք, լեզու: Հայոց պանթէոնը դրեթէ կորցրել էր իր ուրոյնութիւնը, հայ լեզուն բաղմաթիւ իրանական սացւածներ, բառեր ընդունել: Հայ հեթանոսական կրօնը, թէպէտ մի քանի բան սահած ունէր նախաարիական շրջանից, սակայն, չէր կարող դիմադրաւել կրօնապէս վերածնուող Իրանին: Մշակոյթի եւ կենցաղի տեսակէտից հայութիւնը բաժանման շատ քիչ բան ունէր պարսիկներից: Եւ եթէ պարթեւ Արշակունիների օրով մշակութային այս միութիւնը վտանգ չէր ներկայացնում հայութեան համար, ապա Սասանեանների հաստատման հետեւանքով վերջ է տրւում հայ-պարսկական խաղաղ կենակցութեան, բարեկամութեան: Եթէ Պարսկաստանը ազգայնօրէն վերածնուեց կրօնական հիմքերով, ապա Հայաստանին անհրաժեշտ էր նոյնպիսի մէկ յեղափոխութիւն:

Երբորդ դարը մի յամառ փորձ է պարսիկների կողմից ոչնչացնելու Հայաստանը, որպէս պետական միաւոր: Նրանք ոչ միայն պատերազմում են, այլ եւ դիմում են քաղաքական ահաբեկումի միջոցին. նրանք այդ ձեւով սպանեցին հայոց Սոսրով թագաւորին, որ Արշակունիների հարստութեան շահերի եւ Հայաստանի պետական միութեան ջատագովն էր: Նրանք ջանում են վերացնելու Հայաստանի իշխող թագաւորական տունը եւ եթէ այդ անյաջող անցնի՝ փոխարինել այն ուրիշով: Այդ նպատակն է հետապնդում Շապուհ Բ.ը չորրորդ դարում: Այս խնդրում նա գործակիցներ ունէր եւ հայ նախարարների մէջ, որոնք Արշակունիներին համարում էին ելուոր, իսկ իրենց բնիկ, հետեւապէս աւելի իրաւատէր հայկական դահի վրա:

Անշուշտ, հայ քաղաքական գործիչները զգում են դալիք վտանգը եւ միջոցներ որոնում ստեղծւած ծանր կացութիւնից դուրս բերելու հայութիւնը. բոլորովին հասկանալի է, որ այս գործի գլուխը կանգնում են երկու Արշակունի - պախլաներ, թէեւ տարբեր դաս-տիարակութեամբ՝ Անակի որդի Գրիգորն եւ Խոսրովի որդի Տրդատ Թագաւորը: Սրանից էլ պէտք է հետեւեցնել, որ նրանց ղեկավար միտքը Արշակունիների իշխանութիւնը փրկելն էր: Սկզբում՝ Սասանեանների վտանգը հայ ղեկավար շրջաններին ձգում է Հռոմի դիրկը, եւ վերջինիս օգնութեամբ նրանք երկար ժամանակ պայքար-

րում են Հայաստանի պետական կեանքի եւ տիրող հարստութեան համար: Բայց դրսի օժանդակութիւնն անբաւարար էր հայոց «քաղաքական անօթը» պահելու համար: Դաշինքը, քաղաքականութիւնը հիմնուած են շահերի վրա, իսկ հայութեան ամրակուռ շէնքը կարող էր կառուցել սկզբունքների, գաղափարների վրա: Շահերի, քաղաքականութեան հետեւանքով Հայաստանը ձեռք էր բերել ու պահել իր պետականութիւնը, այժմ պաշտպանների վրա պէտք է հիմնէր, կառուցէր հայոց ազգայնութիւնը: Հայութիւնը պէտք է կառուցէր ներսէն, կանգնէր իր սեփական ոտքի վրա: Միայն այդ պարագային ապահով կը լինէր եւ իշխող տունը:


Ասացինք որ Արշակունիների օրով հայութիւնը շատ բան էր իւրացրել իրանական մշակոյթից, ըստ որում նոր պայմաններում մըղուող պայքարը ոչ երկու կենցաղական ձեւերի մէջ էր, ոչ բարոյական սկզբունքների, ոչ լեզուական առաջնութեան: Հայկական հարցը այդ ժամանակ գուտ քաղաքական-քաղաքական տան հարց էր: Եթէ Սասանեաններին յաջողէր վերացնելու Արշակունեաց հարստութիւնը, կամ փոխարինելու մէկ ուրիշով, կամ ստեղծելու կրտսեր Սասանեան մէկ տուն մեր երկրում, հայկական հարցը լուծւած կը լինէր Պարսկաստանի համար միանգամայն ընդունելի ձեւով, իսկ հայութեան գոյութեան՝ որպէս ազգային հաւաքականութեան՝ մեծ վտանգ կը սպառնար: Թէպէտեւ պարսիկների հարւածը ուղղւած էր Արշակունիներին, սակայն, նա անուղղակի ձեւով հասնում էր հայ թոյլ, դեռ եւս չկազմակերպւած ազգային միութեան: Ուստի պատմական դէպքերի բերումով իրենց դասային-տոհմական շահերը պաշտպանելով՝ հայ Արշակունիները հանդիսացան հայոց ազգային միութեան կորստից փրկողները:

Բայց որն էր այն ոյժը, որի վրա պիտի պատւաստէր հայութիւնը եւ որ միաժամանակ պիտի ծառայէր որպէս անջրպետ երկու ազգերի միջեւ: Սասանեանները այդ ոյժը դտան իրենց պատմական անցեալում՝ Աքամէնեանների աւանդութեանց եւ Զրադաշտականութեան մէջ. հայերը չունէին այդպիսի պատմական աւանդութիւն: Իրենց անցեալը՝ շատ քիչ բան էր տալիս նրանց. Արշակունիները իրենց գործը չկապեցին Արտաշեսեան հարստութեան հետ, երկար ժամանակ հայ գահի վրա զգացին իրենց օտար եւ միայն Պարսկաստանում տեղի ունեցած Սասանեան յեղաշրջումից յետոյ՝ աստիճանաբար ազգայնացան՝ կապելով իրենց բախտը հայութեան հետ: Եթէ մեր պատմական անցեալում չկար այդպիսի ոյժ, ապա հայ քաղաքական եւ մտաւորական ղեկավարները լաւապէս վերահասու էին, թէ ինչ հիմերի վրա են կառուցել նոր պարսկական եւ հռոմէական կայսրու-

թիւնները: Երկուսի մէջ էլ կրօնը խոշոր դեր էր կատարում, նա զողող, միութիւն ստեղծող ոյժն էր, առանց որի պետական միութիւնը կը քայքայէր: Եւ երկու տեղումն էլ մեծագոյն իշխողները եղել են նաեւ կրօնական բարենորոգիչներ – հաստատել են, մաքրել կրօնը, մշակել նրա ծէսերը, տարածել այն, ստեղծել քրմական դաս՝ տալով նրան եւ իրաւունքներ, եւ արտօնութիւններ, եւ հասարակական ու պետական գործերին մասնակից դարձրել նրանց: Ժամանակի ոգու, մտածութեան տեսակետից հայութիւնը կարող էր կառուցել միայն կրօնի վրա. ոչ լեզուն, ոչ արքայական հարստութիւնը նրա փրկութեան խարխիւր լինել չէին կարող: Հին Արեւելքում մարդկանց աշխարհահայեցողութիւնը, քաղաքական-ազգային կազմակերպութիւնը կրօնական հիմեր ունէին: Պետութիւնների, ազգութիւնների բաժանման հիմքում ընկած էր ոչ այնքան լեզուն, որքան կրօնը:

Բէյրութ.

(Վերջը յաջորդ անգամ)



ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ

Ա.

1918 Յունիս 19-ի Չորեքշաբթի առաւօտն էր, որ լուր տարածւեցաւ, թէ Հայաստանի նորակազմ Հասարակապետութեան կողմէ պատերազմութիւն մը կ'Պոլիս էր եկած եւ իջեւանած Թոքատլեան մեծ պանդոկը, որպէս զի թուրք կառավարութեան հետ համաձայնութիւններ մը գոյացնէր:

Ամէն հայու սիրտ մեծ ուրախութեամբ, խինդ ու խանդով լցաւ, կուզէինք երթալ ողջունել այդ պատգամաւորութիւնը, որ Արարատի վեհ կողերուն շունչը հետ կը բերէր եւ զոր կը բաղկացէին՝ գլխաւորութեամբ Աւետիս Ահարոնեանի՝ Միքայէլ Պապաշանեան, Աղ. Խատիսեան, Կէնէրալ Կորկանեան, Տիգրան Միրզայեանց, Յակոբ Քոչարեան, Մ. Պունեաթեան, Թախթաճեան եւ ղեռ ուրիշներ:

Այո՛, կուզէինք երթալ ողջունել այդ պատգամաւորութիւնը, որ Հայաստանի ազատագրութեան լրարեր աղաւնին էր, բայց հնարաւորութիւն չկար, որովհետեւ թուրք կառավարութիւնը անմիջապէս Թոքատլեան պանդոկ զրկած էր երկու հայ լրտես՝ Յարութիւն Մըկրտիչեան (յետոյ սպաննւած) եւ Արմաշական բարեձաղիկ վարդապետ մը Համազասպ անուն (կարգալոյժ եղած), որպէս զի զիտեն թէ՛ ո՞ր հայերը կուզան ու կերթան պատգամաւորներուն այցելութեան:

Ես՝ մանաւանդ կը փափաքէի տեսնալ Աւետիս Ահարոնեանը, զոր 1908-ին թուրք Սահմանադրութեան հռչակած տարին, դարմանած էի Բերայի մէջ եւ յետոյ՝ ողբացեալ Մ. Զաւարեանի յուղարկաւորութեան օրը տեսած էի զինքը:

Կար սակայն հայ-կաթոլիկ ազգասէր ու եռանդոտ վարդապետ մը, որ բարեկամս էր, Յովսէփ Վ. Սարուխանեան, եւ որ յաջողած էր գաղտնաբար երթալ տեսակցիլ պատերազմութեան անդամներուն հետ: Մէկ օր խնդրեցի այս վարդապետէն գնալ Ա. Ահարոնեանի մօտ եւ խնդրել իրմէ, որ զիշեր մը հաճէր ինձ մօտ գալ: Սարուխանեան

Յովսէփ վարդապետ . կատարած էր յանձնարարութիւնս եւ տունս գալով իւր քարտը թողած էր, վրան մատիտով նշանակելով հետեւեալ տողերը,

«Մեծաշուք Տոքթ. Թորգոմեան: Մեր մարդիկը *) տեսայ .»
«ձեր ըսած անձը **) այս Երկու օրերու մէջ Երեկոյեան»
«Ժամ 9-ին ժամանակները խոստացաւ ձեզի գալ, ուստի»
«գիտնաք, վասն զի իրեն հետ տեսնեցայ: 1918 ՅՈՒՆԻՍ 25:»

Սպասելով վարդապետին բերած լուրին, եւ ահա 1918 յուն. 29-ի շաբաթ երեկոյին ուշ առեն, Բերայի մեծ պողոտային վրա կը հանդիպիմ Ա. Ահարոնեանի, կը համբուրւինք, եւ հետս զայն առնելով կերթանք տուն, ուր ժամերով կը խօսակցինք, անվերջ կը տեսակցինք . . . բայց կը թողու մեզ եւ զիշերան մութին կը դառնայ Թոքատլեան:

Պատգամաւորութիւնը մնաց Կ. Պոլիս մինչեւ 1 Նոյեմբեր 1918, յետոյ մեկնեցաւ Հայաստան:

Եւ այդ չորս եւ կէս ամսան մէջ շա՛տ ու շա՛տ անգամներ եւ ազատորէն յարաբերութիւններ ունեցայ պատգամաւորութեան հետ եւ ունիմ այդ մասին օրագրութիւն մը: Առ այժմ առանց անդրադառնալու այդ օրագրութեան, սա կէտը միայն կուզեմ յայտնել, թէ՛ ես գրաւոր կերպով խնդրեցի որ իրենց կարծիքը ինձ հաղորդեն Հայաստանի նորածին իիճակի ապագայի մասին:

Ինձ պատասխան տւին՝ Ահարոնեան, Պապաշանեան եւ Խատիսեան, որոնց զիբերը այսօր հրատարակելով, կը խոստանամ հետզհետէ ներկայացնել Օրագրութեանս կարեւոր այն կէտերը, որոնք ուղղակի վերաբերութիւն ունեցան պատգամաւորութեան Պոլիս անցուցած կարճատեւ ժամանակին հետ:

Բարից, 29 Մարտ, 1936.

I

Սիրելի բարեկամս,
Բժիշկ Թորգոմեան

Հայ աշխարհի մօտաւոր ու հեռաւոր բաղդի մասին խօսքս կուղէք:

Անակնկալներով հարուստ մեր օրերում դժւար է վճռական խօսք

*) «Մեր մարդիկը» ըսելով՝ պատգամաւորութեան անդամները իմացունել կուզէ:

**) Ահարոնեան:

արտասանել ժողովուրդների ապագայի եւ մանաւանդ՝ հայ Ազգի ճակատագրի մասին, սակայն ինձ թւում է, որ անդամ դադափարների ու հակամարտ շահերի այս համատարած բաղխումներից բարձր կան դերիչխող պատմական օրէնքներ, երկաթէ տրամաբանութիւն, որ կարող է կուան ծառայել քանի մը ընդհանուր տեսութիւնների համար Ձեզ հետաքրքրող հարցի տեսակէտից :

Սովորաբար ընդունւած էր մինչեւ այժմ XIX -րդ դարը նկատել ազգայնական դադափարների, ժխտումների յախուռն շրջան. սակայն չնայելով անցեալ դարի վերջից եւ մեր դարի սկզբից ծայր տւած ընկերական վարդապետութիւնների ահազին ծաւալումին, այսօր վստահաբար կարելի է ասել, որ յատկապէս մեր դարն է, այո՛ XX -րդ դարը, երբ ազգայնական շարժումները հասնելու են իրենց դարգացման ծայրագոյն աստիճանին հրամայողաբար լուծումն պահանջելով աշխարհի բաղդի վարիչներից :

Ընկերական վարդապետութեան ամենամեծ սխալն եղաւ իր ծաւալական չարաչար խանդի մէջ լքումի մատնել ազգային հարցը, որ եւ ինչեւ լինի աշխարհի ամենայամառ, ամենաբարձրակոչ, աղաղակող հարցերից մէկն է եւ չպիտի քաշուի հրապարակից մինչեւ արմատապէս լուծուի :

Կրկնում եմ, XX դարին էր վիճակւած լուծել այդ ցաւոտ հարցը, որ գերազանցապէս մարդկութեան հարց է :

Ասացի քիչ վերը «աշխարհի բաղդի վարիչներ», - այժմ այդ «վարիչները» ո՛չ այլ ոք պիտի լինեն, բայց եթէ ազգերը իրենք. եւ այստեղ է հրաշալի հանգոյցն ու լուծումը ազգային հարցի: Եւ տարօրինակ հակադրութեամբ, մի աննման պարագայով այս արդիւնքը պարտական ենք մասամբ նաեւ միջազգայնութեան ընկերական վարդապետութեան քարոզած միջազգայնութեան, որ միանգամայն իր չստանձնած, չը հետապնդած արդիւնքի տարաւ համայն մարդկութիւնը :

Առաջիկայ կոնգրէն լինելու է Ազգերի Արիոպագ, որ պիտի կարողանայ գերազոյն հատուցումն տալ, տառապող ցեղերին: Հայ ցեղը՝ որ ազգերի Արիոպագին պիտի ներկայանայ վաղը իր արդարագոյն դատի արիւնաղանդ շքեղութեամբ, անկասկած այսօր իր փերկութեան նախօրեայի առջեւ է կանգնած, եւ ծագող արեւի ցոլքերի առջեւ տակաւին աչքերը ինտողած, բայց զարթնում է յուսալի ու հպարտ :

Հաւատում եմ խորապէս, որ մեր ժողովրդի վերջնական փրկութեան ժամն է հնչել, բայց եւ դրա համար մեր ցեղական կուռ իմաստութեան բարձրագոյն աստիճանը պիտի կիրարկենք, դարերի գոր-

ծը կերտելու համար, մեր ընդհանուր լողունքը պիտի լինի այսօր հայ նւիրական հողի եւ թէ մանաւանդ հայ ցեղի 'ի մի համախմբումը :

Հայի «պոչաւոր» կոչումը (Ռուսահայ, Թիւրք-ահայ, Պարսկ-ահայ, ամերիկ-ահայ) պէտք է կտակել մեր անցեալ, մեր աղէտաւոր պատմութեան եւ ճակտին կնքել հպարտ, անաղարտ, շքեղ անունը՝ «ՀԱՅ» եւ «ՀԱՅԱՍՏԱՆ», ամենէն աւելի անարգւած, տրորւած, արիւնոտւած Հայրենիքը եւ այս իսկ պատճառով հայրենիքներից ամենանւիրականը :

Այս ստեղծագործական դադափարը հետապնդելու ենք, ո՛չ միայն մեր իրական փրկութեան արդարութեան յաղթանակի համար, այլ նաեւ նրա համար, որպէս զի յաւիտենապէս կարողանանք հաշտ ու խաղաղ ապրել մեր շուրջ եղող մեր բոլոր հարեւանների հետ, քաղաքակրթութեան իրաւունքի արդարութեան մեծ ու միահամուռ աշխատանքի համար ամենքի հետ :

Անհնարին է մեր փրկութիւնը առանց Հայ Հայրենիքի-կովկասեան ու Թիւրքիոյ Հայաստանի - լիակատար ազատագրումի, անհնարին է այդ ազատագրումը հայ ցեղի ցրւած բեկորների, բոլոր բեկորների՝ 'ի մի համախմբումի :

Անհնարին է խաղաղութիւնն ու վերջնական հաշտութիւնը մեր հարեւանների, մեր այսօրւայ իշխող ցեղերի հետ, առանց հայ ցեղի լիակատար համախմբումի, առանց «Հայ Հայրենիքի, լիակատար ազատագրումի :

Հին Ռուսաստանը դաժանօրէն խորթ մայր եղաւ մեզ, իսկ նոր Ռուսաստանն՝ աւելի վատթար: Հին Թիւրքիան մեր արիւնը քամեց, նոր Թիւրքիան աւելի վատթար. միայն Նոր-Հայաստանը ազատագրւած եւ վերածնւած ու համախմբւած հայ ցեղն է որ պիտի բարձրանայ այսօր մեր հայրենի աւերակների միջից, որպէս արդարութեան, իրաւունքի, քաղաքակրթութեան գերազոյն յաղթանակ :

20 Հոկտ. 1918 կ. Պոլիս.

Ա. Ախարոնեան

II

Յարգոյ Տոքթ. Թորգոմեան,

Պետական գործիչները սիրում են ասել, «Տէ՛ք մեզ լաւ Ֆինանսներ, եւ մենք ձեզ կը տանք լաւ կառավարութիւն: Այդ տեսակէտից հայ ժողովրդի վերաբերեալ պէտք է ասել, - Ստեղծեցէ՛ք առողջ ազգամիջեան եւ միջազգային քաղաքականութիւն եւ դուք կունենաք ուժեղ եւ հարուստ ժողովուրդ եւ պետութիւն :

Միքայէլ Պապազանեան

III

Յարգելի Բժշկապետ,


Հայ ժողովրդի որոնումների եւ տանջանքների երկար պատմութիւնը պարզ ցոյց է տւել, որ ամենամեծ դործօնը, որը կարող է ապահովել նրա արժանաւոր ապագան, դա իր՝ Հայ ժողովրդի կենսունակութեան ոյժն է: Նա ինքը պէտք է կռի եւ կռի իր բաղդը: Նրան համարեա չէին ժպտում եւ չէին օգնում նոյնիսկ բարեկամ համարւող երկիրները: Եւ չնայած ուժասուսա Հայ ժողովրդի թափած արեան հեղեղներին, ներկայ մեծ պատմական օրերում նա՝ Հայ ժողովուրդը պէտք է ամենից շատ յենւի իր ոյժերի եւ իր ստեղծագործական հանճարի վրա: Օտարի օգնութիւնը կարող է միայն լրացնել մեր սեփական ջանքերը:

31 Հոկտ. 1918, Կ. Պոլիս

Մնացե՛ք բարեա՛ւ,
Ադ. Խատիսեան

Յ. Գ. Ունիմ դեռ Յակոբ Քոչարեանէ եւ ուրիշներէ նամակ-պատասխաններ, որոնք յաջորդաբար պիտի երեւին:

ՏՈՒԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



ՇԱՌԼ ԴԻԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ *)

Հայաստան շատ մեծ թիւով յիշատակարաններ սրահած է. ամէնէն չինները կը պատկանին Ն. դարուն, իսկ ամէնէն նորերը՝ ԺԳ. դարու առաջին կիսուն:

Այս յիշատակարաններու մեծագոյն մասը մեզի հասած են դրեթէ անկոծ վիճակի մէջ, այսինքն թէ չեն փոփոխւած ետքէն կատարւած նորոգութիւններով ու նոյն իսկ անոնք որ կործանած են՝ պատկառազու երեւոյթ մը սրահած են:

Ուրեմն ունինք յիշատակարաններու վերջին ծայր շահեկան ամբողջութիւն մը, որոնք որքան մեծ են զանազանութեամբ եւ տիպարներու ինքնատուութեամբ, այնքան ալ՝ իրենց առաջ բերած տպաւորութեամբ: Տարակոյս չկայ որ հայկական այս արւեստը մեծ տեղ մը զբաւած է Արեւելքի մէջ քրիստոնէական արւեստի զարգացման տեսակէտէն ու կ'արժէ որ յատուկ ուշադրութիւն դարձնենք այս կէտին վրա:

Իրապէս ի՞նչ տեղ կը զբաւէ հայկական ճարտարապետութիւնը Արեւելքի քրիստոնէական արւեստի կազմութեան մէջ:

Մօտ քսան տարի առաջ Վիէնայի համալսարանի ուսուցչապետներէն Ստրէլզովսկի հրատարակեց շատ գեղեցիկ գիրք մը «Հայկական ճարտարապետութիւնը եւ Եւրոպա» (Die Baukunst der Armenier und Europa) անունով, գիրք մը՝ որուն կրկնակ երախտագիտութիւն կը պարտի Հայաստան: Նախ՝ այս գիրքը առաջին անգամ ըլլալով Եւրոպայի աչքին առջեւ զբաւ հայկական ճարտարապետութեան յիշատակարանները: Յետոյ՝ հեղինակը ատոր մէջ շեշտեց այն առաջնա-

*) Նիւրի շահեկանութիւնը ի նկատի ունենալով, «Վէմ»-ի խմբագրութիւնը տպագրում է ֆրանսացի յայտնի բիւզանդագէտ եւ կանառի անդամ Պրոֆ. Շառլ Դիլի այս բանախօսութիւնը, որ նա կարդացել է Փարիզում «Հայ Մշակոյթի Օր»-ւան առթիւ «Համագրային»-ի կազմակերպած հանդէսի մէջ, 22 Դեկտ. 1935ին:

577-200

670

կարգ տեղը, որ իր կարծիքով հայկական ճարտարապետութիւնը կը գրաւէ Արեւելքի քրիստոնէական արւեստին մէջ:

Ըստ Ստրչիգովսկիի, հայկական այս ճարտարապետութիւնն է եղած աղբիւրը՝ ուսկից ածանցւած է կերպով մը ամբողջ Արեւելքի քրիստոնէական արւեստը:

Հայաստան կը ներկայացնէ այն «հաստատուն հողը» որուն վրա կարելի է կառուցանել Արեւելքի քրիստոնէական ճարտարապետութեան ամբողջ շէնքը:

Այսպէս, ըստ իրեն, Պոլսոյ Այա Սոֆիա եւ Ռավէննայի Սուրբ Վիտալ ու նոյնիսկ Հռոմի Սուրբ Պետրոս եկեղեցիները, ինչպէս նաեւ Շանայորի գղեակը կը բխին հայկական ճարտարապետութենէ: Ստիպւած եմ քիչ մը վերապահ ըլլալ այս հաւաստումներուն մասին: Ստրչիգովսկի, որ շատ մեծ դիտնական մըն է, երբեմն խիստ յանդուգն գաղափարներ կը յայտնէ: Եւ առանց վէճի ենթարկելու հայկական ճարտարապետութեան կարեւորութիւնը քրիստոնէական արւեստի կազմութեան մէջ, խնդիր է դիտնալ թէ անոր տրւած տեղը քիչ մը չափազանցւած չէ՞:

Մնաց որ շատ կարեւոր չէ այս, քանի որ հայկական յիշատակարանները ըստ ինքեան բաւական զօրաւոր բնոյթ ունին եւ բաւական ինքնատիպ են, ու եթէ երբեմն բան մը փոխ առած են ուրիշներէն, շատ յաճախ կրնան բաւարարել իրենք իրենց:

*
**

Հայաստան իր աշխարհագրական դիրքին բերումով խիստ բընականօրէն կոչւած էր մեծ դեր խաղալու Արեւելքի քրիստոնէական արւեստի պատմութեան մէջ: Արեւելեան կողմէն սահմանակից էր Պարսկաստանի, հարաւէն՝ Միջագետքի, արեւմուտքէն՝ բիւզանդական աշխարհին, Փոքր Ասիոյ եւ հելլենական աշխարհին: Այս զանազան երկիրներուն մէջտեղ՝ Հայաստան միջնորդի դեր պիտի կատարէր:

Արդարեւ, Միջագետքէն փոխ առած է կամարակապ կաթողիկէն, ինչպէս Պարսկաստանէն՝ դմբէթը: Պարսիկ ճարտարապետները շատոնց կը գործածէին այս դմբէթը, սակայն հայ ճարտարապետները Դ. եւ Ե. դարերուն հայկական ճարտարապետութեան կազմութեան մէջ խիստ հետաքրքրական ձեւով օգտուեցան անկէ: Բաց աստի պէտք չէ մոռնալ որ Միւրիան եւս արւեստի պատմութեան մէջ խիստ կարեւոր բաժին մը ունեցած է. այսպէս, հայկական ճարտարապետութենէն մեզի մնացած ամենահին յիշատակարանները՝ Երեւոյթի եւ Տե-

կորի կաթողիկէները խիստ ուշագրաւ նմանութիւն մը ունին սիւրիական Գալլուղի եւ Տուրմանիոյ եկեղեցիներուն հետ:

Աւելցնեմ որ՝ Երեւոյթի կաթողիկէին մէջ դտնւած են յունական արձանագրութիւններ, իսկ Տեկորի տաճարին մէջ՝ ասորական արձանագրութիւններ: Պէտք է ըսել որ այս պարագան դոնէ Ե. դարուն համար, քիչ մը կը պակսեցնէ ինքնատուութեան այն բաժինը, զոր Ստրչիգովսկի փորձած է տալ Հայաստանի: Բայց ինչ որ անվիճելի է, Զ. դարուն վերջը եւ Է.ին սկիզբը հայկական այս արւեստը եզականօրէն փայլուն շրջան մը ճանչցած է:

**

Այդ շրջանին հայ ճարտարապետները ցոյց տւած են իրենց ամբողջ կարողութիւնը: Մեծ ճամբորդութիւններ կատարած ըլլալով, ուրիշ տեղերէ բաներ սորված են եւ կառուցած ահազին քանակութեամբ յիշատակարաններ, որոնք արտակարգ պէսպիսութիւն մը կը ներկայացնեն: Այս յիշատակարաններու մեծ մասին թւականը ճշգրիտ կերպով նշանակւած է. անոնք կը պատկանին Զ. դարու վերջին մասին, իսկ Է. դարը լեցուն է անոնցմով: Անոնց յատակագիծները հրաշալի են իրենց պէսպիսութեամբ: Կան դմբէթաւոր կաթողիկէներ, ինչպէս Թալին եւ Թալիշ. կան նաեւ կեդրոնական յատակադիւծով շէնքեր, որոնք կը ներկայացնեն քառաթեւ կոչւած յատակադիւծներ, այսինքն խաչ մը՝ որուն թեւերը կը վերջանան կողակներով (abside):

Ուրիշ տեղ մը կը հանդիպինք դմբէթներու, որոնք կը կռթնին շէնքը կրող ութ որմաստորջերու (niche) վրա. յետոյ կան նոյնպէս յիշատակարաններ՝ որոնք կը վերջանան եռակոնաձեւ. կան, վերջապէս, նաեւ խաչաձեւ եկեղեցիներ:

Ստոյգ է որ ասոնք արտակարգ տպաւորութիւն մը կը գործեն ճամբորդին վրա. նոյն իսկ անոնք որ կործանած ու աւերակ են՝ նըւազ տպաւորիչ եւ կենդանի չեն:

Ահա էջմիածնի մայր եկեղեցին: Ասիկա նկատւած է Հայաստանի ամենահին եկեղեցին. շինւած է Ե. դարուն եւ վերանորոգւած՝ Է.ին: Սակայն եւ այնպէս, ու հակառակ այս նորոգութեանց, շատ հետաքրքրական է անոր յատակագիծը. ունի դմբէթ մը՝ նստած չորս սիւներ եւ չորս կողակներու վրա (քառաթեթ յատակադիւծ):

Արդէն այս յատակագիծը շատ խիստ տարածւած է Հայաստանի մէջ: Այս տիպարին վրա ուրիշ մայր եկեղեցիներ ալ կառուցւած են, ոչ շատ հեռու էջմիածինէն:

Վաղարշապատի Ս. Հովհաննէս եկեղեցին, կառուցւած 618-ի ատենները, կը ներկայացնէ խիստ շահեկան յատակագիծ մը, անկիւններու չորս որմախորշերով եւ կոնաձեւ տանիքով: Վերջապէս, նոյն տեղը կայ նաեւ Ս. Գայիանէի եկեղեցին, շինւած շուրջ 630-ին, որ կը ներկայացնէ թերեւս նւազ ինքնատիպ բայց շատ յատկանշական յատակագիծ մը: Խաչաձեւ յատակագիծը կը վերագտնենք բիւզանդական ճարտարապետութեան մէջ:

Ձուարթնոցի մէջ ունինք եկեղեցի մը, նւիրւած Ս. Գրիգորի: Թէ-եւ աւերակ դարձած է, սակայն յատակագիծը խիստ նշանակալից է: Այս եկեղեցին շինւած է է. դարուն Ներսէս Գ. կաթողիկոսին կողմէ, որ Հայ Եկեղեցին վարեց 640-660 թ.թ.: Շէնքը քառաթերթ տերեւի մը երեւոյթն ունի. դմբէթը կանգնած է չորս մեծ սիւներու վրա, որոնք կը տեսնուին կողակներու հանդիպման կէտին վրա. սրբարանը կը գտնուի դմբէթին տակ: Այս յիշատակարանը խիստ ուշադրաւ է իր յատակագիծով, որ արեւելեան ծագում ունի: Գիտելի է որ դարդանկարները յունական են: Գիտենք որ Ներսէս Շինող կաթողիկոսանալէ առաջ ուսած էր Պոլսոյ մէջ եւ սորված յունարէն՝ զոր շատ կը սիրէր: Այս է պատճառը որ դիմեց յոյն ճարտարապետներու. կարգ մը խոյակներ բոլորովին բիւզանդական են. իր անունը յիշատակւած է եկեղեցիի պատին վրա գրւած յունարէն արձանագրութեան մը մէջ:

Հայաստան է. դարուն սերտ յարաբերութիւններ ունէր Բիւզանդիոնի հետ, ու ասիկա կը տեսնուի արձանագրութեանց մէջ: Այս շէնքերէն շատեր կը յիշեցնեն կայսեր իշխանութեան տարին. հիմնադիրը կը յիշատակէ «Կիւրոպաղատ», «Պատրիկ» սքանչելի տխողոսը, զոր կը ստանար հաճոյքով Բիւզանդիոնի արքունիքէն: Այս բոլորը ցոյց կուտան թէ Հայաստան որոշ չափով կախում ունէր Բիւզանդիոնէն: Զ. դարուն բիւզանդացի ճարտարապետներ Հայաստանի մէջ շինած են եկեղեցիներ, որոնք իրրեւ տիպար ծառայած են, ու ասիկա քիչ մը կը պակսեցնէ այն իրողութիւնը որուն վրա այնքան կը պնդէր Ստրչիգովսկի:

Մէկ բան ստոյգ է սակայն որ, հայկական արւեստը հետզհետէ կը հեռանայ բիւզանդական արւեստէն եւ կը լքէ զայն: Այդ կը տեսնենք Ժ. եւ ԺԱ. դարերով ներկայացւած շրջանի մէջ: Այդ ատեն Հայաստան խիստ մեծ դեր մը կը խաղայ Արեւելքի մէջ: Բաղմաթիւ Հայեր Պոլիս կ'երթան՝ իրրեւ զինուոր ծառայելու. անոնք լաւագոյն-

ներն եղան: Շատ մը հայ կարօտ ազնւականներ՝ կայսեր կողմէ կանչւած՝ հիանալի հարստութիւն շինեցին:

Միւս կողմէ մեծ ճամբորդութիւններ կատարող ճարտարապետները, որոնց մասին խօսեցայ, միայն Պոլիս չէ որ դացած են, այլ կերպով մը բիւզանդական աշխարհի շրջանը կատարելով, հայկական արւեստը տարած են Վրաստան, յետոյ սլաւ ժողովուրդներու մօտ, ու մինչեւ Յունաստան: Այս բոլորը ցոյց կուտան Հայաստանի դերը արւեստի պատմութեան մէջ:

Աղթամարի եկեղեցին, որ Ժ. դարու սկիզբի գործ է, շատ նշանաւոր է: Սակայն 1000 թւականի ատեններն է որ կը տեսնենք ըսքանչելի ծաղկում մը քառաթերթ շէնքերու եւ եկեղեցիներու, ինչպէս Խօջալանք, Մարմաշէն եւ այլն. ուրիշներ՝ որոնք սերտօրէն կապուած են Հայաստանի, թէեւ աշխարհագրականօրէն կը պատկանին Վրաստանի, ինչպէս Կեթատի եկեղեցին, Քութայիսի մայր եկեղեցին՝ քանդւած ԺԷ դարուն Թուրքերուն կողմէ: Մոկվիի եկեղեցին, արտակարգ ամբողջութիւն մը, որուն վրա կ'արժէ կանգ առնել: Յետոյ նաեւ բոլոր այն յիշատակարանները որ կը գտնուին Արփաչայով շրջապատւած ամայի լեռնադաշտին վրա, ուր կան Անիի աւերակները: Հոն կը գտնենք խիստ դեղեցիկ յիշատակարաններու ամբողջ շարք մը: Անիի մայր եկեղեցին կը յիշեցնէ Էջմիածնի մայր եկեղեցիին յատակագիծը. անիկա գործն է մեծ ճարտարապետի մը՝ Տրդատի: Այս եկեղեցիին քով, ահա՛ Ս. Գրիգոր եկեղեցին, շինւած 1001-1020ի միջեւ եւ որ վերարտադրութիւնն է Ս. Գայիանէ եկեղեցիի յատակագիծին:

Յետոյ կայ ուրիշ եկեղեցի մը, մասամբ աւերւած, ու նաեւ Ս. Գրիգոր երկոտասան անկիւնաւոր մատուռը՝ որուն տեսքը բոլորովին մասնայատուկ է: Լեռնադաշտին վրայի ուրիշ եկեղեցիներ ցոյց կուտան մեզի թէ այս մեծ շարժումը տեւած է մինչեւ Անիի կործանումը:

Այստեղ կայ խիստ արտակարգ շահեկանութիւն ներկայացնող յիշատակարաններու ամբողջութիւն մը: Ասոնց ինքնատուրութիւնը անվիճելի է. այս յիշատակարաններու յատակագիծը կրկնութիւնն է է. դարու շէնքերու յատակագիծին:

Հայկ. արւեստի գործ այս եկեղեցիներու կողքին կը թափանցէ բիւզանդական ազդեցութիւնը, գլխաւորապէս Վրաստանի մէջ (Պրիււրտաթ եկեղեցին՝ զուտ բիւզանդական ոճով), ինչ որ ցոյց կուտայ թէ ուրիշ տարրեր կը խառնուին հայկական աւանդութեանց:

Սակայն եւ այնպէս կայ ամբողջութիւն մը յիշատակարաններու որոնց արժէքը նւագեցնել բացարձակ տղայութիւն պիտի ըլլար :

**

Ի՞նչ յատկանիշներ կը ներկայացնէ հայկական այս արւեստը :

Նախ՝ խիստ կարեւոր պարագայ մը . Հայաստանի յիշատակարանները բիւզանդականներէն կը տարբերին շինւածանիւթերու տեսակէտէն : Բիւզանդական շէնքերը աղիւսէ շինւած են , մինչ Հայաստանի մէջ քար կը գործածէին , ու այս տեսակէտէն կը մօտենան ռոմանական եկեղեցիներուն :

Ուրիշ յատկանշական գիծ մը այն եղանակն է՝ որով Հայերը կոնստանտնուպոլիսէն կը պսակէին գմբէթը , թէեւ զուտ հայկական գիւտ մը չէ այս : Ս . Գրիգոր Նիւսացի նամակի մը մէջ կը նախատեսէր արդէն այս կոնստանտնուպոլիսէն կը գտնուին Հայաստանի մէջ : Բայց աւելի շատ ուշագրաւն է՝ մէկ կողմէ հայ եկեղեցիներու արտաքին զարդանկարը որով անոնք կը զանազանին բիւզանդական եկեղեցիներէն , միւս կողմէ ներքին տեսքը այս եկեղեցիներուն , որոնք զգալի տարբերութիւններ ունին բիւզանդականէն : Անիի Ս . Գրիգոր եկեղեցին ունի երկար կամարներ , խիստ փոքր պատուհաններ ու երբեմն պարզապէս ճեղքեր , որ թոյլ կուտան լոյսի թափանցումը : Քանդակագործութիւնը արտակարգ տեղ մը կը զբաւէ զարդանկարչութեան մէջ : Այս զարդանկարներէն մաս մը , կարելի է տեսնել Ազթամարի եկեղեցիին մէջ , կառուցւած 915-921-ի միջեւ : Իր սիլուէթի կողքին՝ ճակատին կողմը ունի քանդակւած զարդանկար մը , որ կը ներկայացնէ բոյսեր , կենդանիներ եւ մարդկային դէմքեր , ի մէջ այլոց արձանը եկեղեցին կառուցանել տւող հիմնադիրին :

Ներսի կողմը կարելի է տեսնել մօտաւորապէս այն երեւոյթը զոր կը ներկայացնեն , առհասարակ այս քիչ մը մութ , քիչ մը խորհրդաւոր եկեղեցիները , որոնք հոգին կը վերացնեն՝ միստիկ պաշտումով մը : Հոն կը տեսնուի մէկ մասը այս ճարտարապետութեանց յատկանիշներէն .- զանգւածային շէնքեր , խիստ ու կշռաւոր գիծեր , մութ ներքին , ու ատով իսկ բուռն շահեկանութեան արժանի են :

Այս բոլորը մի՞թէ կը նշանակեն թէ Ժ . եւ ԺԱ . դարերու այս արւեստը բացարձակապէս ազգային արւեստ մըն է , արւեստ մը՝ որ ամէն բան տւած է Բիւզանդիոնի քրիստոնէական արւեստին : Երբե՛ք :


Ստրչիգովսկի Հայերուն կը վերագրէ Նէայի եկեղեցին . կարելի չէ գիտնալ թէ անիկա հայկական է թէ ոչ : Տարակոյս չկայ որ Հայերը քաղաքականօրէն կարեւոր դիրքեր զբաւած են Բիւզանդիոնի

մէջ եւ մէկ քանին կայսերական դահ բարձրացած են : Ասկէ դատ , երբ երկրաշարժ մը տապալեց Այս Սոփիայի գմբէթը , Վասիլ Բ . կայսրը կանչեց հայ ճարտարապետ Տրդատը , որ դարմանեց այդ աղէտը :

Եզրակացութիւնը որուն կը հասնինք ամէն անգամ որ փորձ կընենք գիտական ուսումնասիրութիւն մը կատարելու , հետեւեալն է .-

Դժւար է սահմանել հայկական արւեստի ինքնատուութեան , տարողութեան եւ ազդեցութեան աստիճանը , սակայն մէկ բան ստոյգ է որ անիկա լայն ազդեցութիւն ունեցած է քրիստոնէայ Արեւելքի մէջ : Պոլսոյ մէջ ունեցած գործունէութենէն դատ , կը տեսնուի որ այս արւեստը հասած է մինչեւ Ռուսիա : Մոկվիի եկեղեցին անվիճելիօրէն Քիէվի ռուսական Ս . Սոփիա եկեղեցիին տիպարն է : Կարելի է նոյնիսկ հարց տալ ինքնիրեն թէ զայն կառուցանող ճարտարապետը հայ մը չէ՞ : Այս արւեստին կը հանդիպինք նոյնիսկ Յունաստանի եւ Պելլոպոնէսի մէջ : Հելլենական ազդեցութեան կողքին կը տեսնենք հայկական ճարտարապետութիւնը : Պէ՛տք է աւելի հեռուները երթալ : Ռոմանական արւեստին մէջ ի՞նչ աստիճան կը տեսնուի այս ճարտարապետութիւնը : Շահեկան տպաւորութեանց նմանութիւն մը կը գտնենք հոն :

Այս բոլոր հակաճառութիւնները , մեծ կարեւորութիւն չունին ի վերջոյ : Մէկ բան ստոյգ է , այն՝ որ այնպէս ինչպէս որ կան , հայ ճարտարապետութեան այս յիշատակարանները Հայաստանի զարդը կը կազմեն : Պէտք է ընդունիլ եւ հաստատել թէ՛ արեւելեան ժողովուրդներու շարքին՝ հայկական ճարտարապետութիւնը երբեմնի Հայաստանին փառքը եւ անոր կենսունակութեան ապացոյցը կը կազմէ :



Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՄԲԵԹԱԻՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ *) ԵՒ ԱՆՈՆՑ ԺԱՐՏԱՐԱՊԵՏԱՆ ԱՐԺԷՔԸ

Երեսուն տարիներ առաջ սկսաւ գմբէթաւոր եկեղեցիներու մասին հրատապ պայքարը Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ: Փոշիներու տակ ծածկւած Անիի մէջ՝ լուիկ մնչիկ կաշխատէր Թ. Թորամանեան ճարտարապետը, մինչեւ որ նախ Պրոֆ. Մառ, ապա Ստրիչիքովսկի անւանի ճարտարապետը Անիի այցելութեանը առթիւ՝ ճանաչեցին թէ ան անյայտ մնացծ դանձ մըն է: Ստրիչիքովսկի, որ մինչեւ այն ատեն արեւմտեան ճարտարապետութիւնը կը ջատագովէր, դարձաւ ջերմ պաշտպան հայկական արւեստի առաջնութեան եւ խիզախօրէն հարց դրաւ. Արեւելքը թէ Արեւմուտքը եղած է գմբէթաւոր եկեղեցիներէ խանձարուքը: Ստրիչիքովսկի այդ խիզախ քայլն չէր կարող առնել, եթէ «վարպետ» Թորամանեան անոր ծանօթացուցած չլլար հայկական արւեստին հետ:

Հայկական գեղարւեստի պատմութիւնը, կարելի է երեք շրջանի բաժնել: Առաջին՝ նախապատմականը, երկրորդը՝ պատմականը եւ երրորդը՝ քրիստոնէականը:

Ա. Նախապատմականը, շատ աղքատ է այսօր: Չկայ դժբախտաբար այնքան նիւթ ձեռք բերած, որով կարելի ըլլար կազմել գեղարւեստի համառօտ պատմութիւն մը:

Գեղարւեստի արժանաւոր գործերու նշաններ կը գտնուին այսօր մեր հայրենի հողի վրա նախապատմական շրջանէն, ինչպէս բեւեռաքանդակ գրութիւնները, զարդանկարներ եւն.: Հայ ժողովուրդը անշուշտ ունեցած է իւր քաղաքները որոնց մէկ քանիսի անունները մի-

*) Տպագրում եմք «Հայ Մշակոյթի Օր»-ւան առթիւ կազմակերպւած համդէսի մէջ կարդացւած երկրորդ բանախօսութիւնը, միւրը լրիւ կերպով ներկայացրած լի-նելու համար:

այն մնացած են, սակայն քաղքենի աներէ, ապարանքներէ, դղեակներէ գրեթէ ոչինչ մնացած է:

Բ. Հայկական գեղարւեստի բեղմնաւոր շրջանը կը սկսի պատմականէն, այսինքն Մեծն Աղեքսանդրի արշաւանքէն եւ կը տեւէ մինչեւ ցվերջ Գ. դարուն Յ. Գ.: Այս շրջանի ճարտարապետութեան պատմութիւնն ալ դեռ չունինք, բացի այն պատմական պրպտումներէն որոնք երեւցան «Բագրամվէպ»ի մէջ:

Գ. Երրորդ (քրիստոնէական) շրջանէն է, որ կը սկսի իսկապէս հայկական գեղարւեստի ճարտարապետական ուսումնասիրութիւնը:

Եւրոպական դիտնականները, ծանօթանալով մեր քրիստոնէական շրջանի գեղարւեստին, կը դարմանան թէ ինչպէս ժողովուրդ մը, որ անցելոյն մէջ ինքնուրոյն գեղարւեստ ունեցած չէ, Գ. դարուն մէջ կը սկսի կառուցանել այնքան հրաշակերտ գմբէթաւոր եկեղեցիներ:

Այս հարցին պատասխանը անոնցմէ ոմանք գտած են այն բացատրութեան մէջ, թէ հայ ճարտարապետութիւնը աղբւր է քաղաքակրթւած մեծ ազգերու գեղարւեստին եւ թէ այն բնաշխարհիկ (autochtone) չէ:

Այդ տեսակէտին մենք համաձայնիլ չենք կրնար: Հայ գեղարւեստը, մեր համոզումով, արդիւնք չէ օտար ազդեցութեան, այլ բնաշխարհիկ ու բնածին է: Աւելին՝ այն զօրեղ կերպով աղբւր է մերձաւոր եւ հեռաւոր ազգերու, որոնց կարգին նաեւ բիւզանդական արւեստին վրա: Այդ եղրակացութեան մենք եկած ենք մասնաւորապէս ի նկատի ունենալով քրիստոնէական շրջանի ճարտարապետութիւնը, որ գերազանցապէս եկեղեցական եղած է: Այդ շրջանէն մեզի հասած են բազմաթիւ գեղեցիկ շէնքեր, որոնք հիացմունք պատճառած են օտարներուն, որոնց կարգին յիշենք, օրինակ, այն իտալացի ճարտարապետը, որ ուղարկւած էր յատկապէս ուսումնասիրելու Հայաստանի եկեղեցիները:

Հայկական ճարտարապետութիւնը, ինչպէս ըսինք, եղեր է եկեղեցական եւ իբրեւ այդպիսին կը դառնայ կեդրոնական համաչափ շինութեան գմբէթի շուրջը:

Գմբէթը յիշած է Ռիկ-Վէտայի գերբերու մէջ եւ «գմբէթ» բառը գննտերէնէ կը ծագի: Հայերը մօտ երկու հազար բառեր փոխ առած են այդ լեզւէն, ինչպէս կը հաստատէ Հիւրճման: Այդ բառերէն մէկն ալ գմբէթն է:

Հնուց ի վեր ասիական ազգեր շինած են այլ եւ այլ կերպով քառակուսի կամ կլորակ պատերու վրա, իսկ գերեզմաննոցի մէջ չորս սիւներու վրա քիւբէ, քիւբէ կոչւածը: Հիմա ամէն մէկը կուզէ ի-

րեն սեփականացնել հայկական դմբէթը, անտեսելով պատմական այն փաստը, որ առաջինը քաղաքակրթեալ ազգերու մէջ հայ մը եղաւ այն ճարտարապետը, որ վերցուց գմբէթը պատերու վրայէն եւ յանդըզնօրէն դրաւ գայն կեդրոնի մէջ չորս կամարակապ սիւներու վրայ, ստեղծեց անկիւնաքեւեր (pendantifs), կազմեց շրջանակ (corniche) մը, իբրեւ հիմն եւ վրան դրաւ գնդաձեւ (sphérique) գմբէթը:

Այդ ճարտարապետը Գրիգոր Լուսաւորիչն էր որ իբր առաջին քարագործ ճարտարապետը, դեռեւս Դ. դարուն սկիզբը, հանձարեղ նորութիւնը մտցուց քրիստոնէական ճարտարապետութեան մէջ այն պահուն, երբ դեռ Բագրիւրիկալ տափակ ծածքով եկեղեցին էր տիրապետողը: Կոստանդիանոս Մեծն Հռոմէն բերաւ այդ ոճը:

Ազաթանգեղոս, Տրդատի քարտուղարը, կը գրէ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնարկութեան պատմութիւնը, որի համաձայն Լուսաւորիչ գերբը տեսիլք կը տեսնէ եւ լուսեղէն մարդ մը, Միածինը ցոյց կուտայ տեղը եւ ձեւը շինելիք տաճարին: Այս երազին վրայ, նա հետեւեալ օրը կը հաւաքէ ժողովուրդը, կը պատմէ իւր տեսիլը, եւ կը նկարագրէ տաճարին ձեւը, որ բոլորովին նոր կը թւի տեղւոյ քարագործներին, այն ատեն ինքն կառնու զլար նարտարաց, եւ կը գծէ եկեղեցւոյ յատակագիծը (պլանիմետրիա):

Հիմա հասկանալի է արեւմտեան յոյներու դանդատն ի հնուան Փոքր Ասիոյ քարագործներու, իբր ըմբոստներու ընդունւած ձեւերուն դէմ:

Այժմ կը տեսնեմ Կիւմրուայ Ս. Փրկիչ եկեղեցին, զոր 1860 թրւականին շինեցին երեք խիզախ եւ անդրազէտ հայ վարպետներ Ուստա Թաթոս Անդրիկեան, ուստա Պապան եւ ուստա Մանուկ հանձարեղ հիւանը, որ ամէն ձեւի զարդաքարերու օրինակ կաղապարներ փայտէ կը շինէր քարտաշներու համար: Սոքա թւարանութեան միայն չորս գործողութիւնները սովորած էին տարրական դպրոցի մէջ. աւանդական գործնական փորձառութիւնը կառաջնորդէր անոնց եւ բնածին տաղանդը. նոքա կանգնեցին Անիի Մայր Եկեղեցւոյ ճիշդ օրինակը:

Մեր հակառակորդները հայ գեղարւեստի արժէքը նւաստացնելու համար ըսին, որ հայ գեղարւեստը կախում ունի պարսկականէն, ասորականէն, հռովմէականէն, բիւզանդականէն:

Պարսկականէն չենք կրնար ազդած ըլլալ, որովհետեւ շէնքերը, որ իբր օրինակ կը բերեն, ոչ միայն բնաւ կապ չունին կեդրոնական գմբէթի համաչափ շինութեան հետ, այլ եւ տեղական չեն, օտարամուտ են: Օրինակի համար. ա. — Կիւրասի դամբարանը. ասոր համար Կտեսիաս յոյն պատմիչը, որ ուղեկից էր Մեծին Աղեքսանդրի՝ կըսէ, «Արիստարուղոս ճարտարապետը, Մեծն Աղեքսանդրի հրամանով, շի-

նեց Կիւրոսի դամբանը, Փոքր Ասիոյ յոնիական ճաշակով»: Ուստի ոչ թէ պարսկական, այլ յոնիական կամ փոխփոխական արւեստն էր, որ ընտանի էր Հայոց, իբր ազգակից անոնց:

բ. — Դարեհի շիրիմը. Գիտնականք կը համարին թէ դանիկա կամ բիւսէսի Եգիպտոսէն բերած գերիները շինեցին, դատելով ճարտարապետական զարդաքանդակներէ, որ յատուկ է Եգիպտացւոց, որ են փաղակները (gorges) որ դռներու վերին բարաւորի վրայ կը քանդակւէին, եւ որովհետեւ այդ այդպէս է, ուրեմն պատահական չէ: Նոյն արւեստը Դարեհէն առաջ գիտէին Փոքր Ասիոյ գաղատոսները (քարտաշները):

գ. — Պերսեպոլիսի շինութիւնք. — Գետնի վերազանցել քան զինուէ եւ Բաբելոնը, իւր քաղաքի կամ ամարանոցի շինութեան համար տեղափոխեց Պարսկաստան Փոխփոխ երկու քաղաքների Երկտորիայի եւ Մելիտոնի բնակիչները, անոր վրայ բանեցուց յոյն հանձարեղ եւ հմուտ արւեստաւորներ: Ուստի կրնանք ասել որ հոն յատուկ պարսկական արւեստ գոյութիւն չունի:

դ. — Սարուխստանի նշանաւոր պալատը. — Կարծիք մը կայ որ դարձեալ փոխփոխ արւեստաւորներ շինած ըլլան ոչ թէ Աքեմենեանց ժամանակ, այլ Պարթեւ թագաւորաց, որովհետեւ նման շինութիւններու կը հանդիպին Փարսիստանի մէջ, որոնց վրայ կը գտնուին փողրակներու (gorges) նշաններ: Դիոյլաֆոս, որ առաջինը այցելեց այդ կողմերը, կը նկարագրէ այսպէս. «Սարուխստանի պալատի՝ քառակուսի ձուլածեւ (ovale) գմբէթը կը հանդիս չորս տափարակ անկիւնաքարերու վրայ տրամպի (trompe) ձուլակամարով փոխանակ անկիւնաքարերու (pendantifs) եւ կողովածեւ գմբէթի կամարի մէջ մասն ալ յեցած է պատերու վրայ, որով չկայ բնաւ նմանութիւն հայկական գնդաձեւ գմբէթի հետ, որ կանգնած է կամարապսակի վրայ (corniche) որ իբր հիմն կը ծառայէ անոր: Ուստի անկարելի է այս ճնշած ձուլածեւ գմբէթն ազդած ըլլայ հայկական գեղարւեստի վրայ:

Բ. Կախումն Ասորուց կամ Սիրիոյ արւեստէն. Մեր հակառակորդները այս կարծիքը կազմած են թիւր ենթադրութեան մը վրայ, աւանդական կամ պատմական սխալի մը պատճառաւ, այսինքն հաւատ ընծայելով Արգարու զրոյցին, որով իբր թէ քրիստոնէական կրօնքի հետ, Սիրիոյ եկեղեցական զարգացման արւեստը մտեր է Հայաստան:

Աւանդութենէ աւելի՝ պատմական ապացոյց մ'ունինք որ Հայաստան Գ. դարու կիսուն Աղեքսանդրիոյ եկեղեցական վարչութեան կը հպատակէր: Առ այս Եւսեբիոս եկեղեցական պատմիչը կը յիշէ

Մեծն Դիոնիսիոս Հայրապետի դրած նամակը, Կեսարիոյ եպիսկոպոսի միջոցաւ, առ Մեհրուժան հայ եպիսկոպոսն Փոքր Հայոց: Այսինքն ինձ կը թւի Ծովիաց աշխարհի եպիսկոպոս եղած ըլլայ, որ հակեալ էր առ Հռոմայեցիս, Տրայանոսի խորամանկ քաղաքականութեան հետեւանքով:

Մեհրուժան անունը յատուկ է Արծրունի տան, որով անտեղի չէ ենթադրել որ Մեհրուժանի իշխանութիւնը մինչեւ Մեծ Հայոց մէջ տարածուած ըլլար: Թող զայս Հայաստանի լուսաւորիչները՝ Ս. Գրիգոր եւ Տրդատ իրենց մանկութեան ժամանակ կրթւեցան Կեսարիոյ մէջ. եւ ապա իբրեւ երկրորդ առաքեալ Հայաստանի, Լուսաւորիչ եւ իւր որդիքը եւ թոռները յաջորդաբար ձեռնադրւեցան Կեսարիոյ արքեպիսկոպոսէն. ի՞նչ աւելի պատմական ապացոյց որ քրիստոնէական կրօնքը պաշտօնապէս Կեսարիայէն եւ ոչ Սիւրբիոյ ճամբով մտաւ Հայաստան. . . . հետեւապէս եւ ոչ անոր ճարտարապետական արւեստը աղղած է հայկականին վրա:

Գ. Հայաստան պարտակա՞ն է Հռոմին. Արեւմտեան ճարտարապետներու մեծամասնութիւնը տակաւին կոթնած կայսերական Հռոմի գեղարւեստի վրա, որ կեդրոնէն ճառագայթել է մինչեւ կայսրութեան հեռաւոր սահմանները, կըսէ թէ Հայաստան չէր կարող դիմադրել անոր մշակոյթին, անոր գերիշխանութեան տակ գտնելով: Այս գաղափարով մի իտալացի դնահատուած ճարտարապետ Յ. Թ. Ռիվոլիօա (որուն ջերմեռանդն հաւատացող Անդրիացիք են) համոզուած էր, կամ թէ կուզէր համոզել թէ՛ կեդրոնական հաւաքապի գմբէթի ծագումն անպայման հռոմէական արւեստ է եւ անոր ծնունդը կը փնտռէր մութ գետնադամբաններու մէջ: Հողի երեսին վրա գտնուած շէնքերը որոնք նախնիթաց կը համարէին իտալական վերածնութեան հրաշագեղ եկեղեցիներին քննութեան առնելով եւ ի բաց թողլով շատ մը երկրորդական շէնքեր, կանգ պիտի առնեմ կարեւորագոյններու վրա, որոնք համալսարանի ճարտարապետութեան ուսանողներու ընթացաւարտ քննութեան Lauréatի ծրագրին մէջ կը մտնան: Ժամանակագրական կարգով:

ա.) Պանթէոնը, Ամենազից տաճարը, բ.) Միներվա Մետրիկա, գ.) Սրբուհի Կոստանցա, դ.) Ս. Յովհաննէս Լատերանեան Մայր Եկեղեցւոյ մկրտարանը:

1.— Այսօրւան Պանթէոնը. դա երրորդ շինութիւնն է: Ազրիանոս կայսեր հրամանով շինեց յոյն հռչակաւոր ճարտարագէտ եւ ճարտարապետ Ապոլլոդորոս Դամասկացին շուրջ 120 թ. Ն. Ք., հետեւապէս հռոմէական արւեստ չէ:

2.— Միներվա Մետրիկա. դա շատ հետաքրքրական նորութիւններ կրող մի շէնք է, սակայն ոչ ժամանակը եւ ոչ շինողներու անունը յայտնի են: Բայց որովհետեւ այսպիսի մի շինութեան հանդիպած են ժամանակով Ազրիանոս կայսեր դաստակերտի (villa) մէջ, Տիվոլիի մօտերը եւ օրինակը Լիվիանոսի կոչուած պարտէզներու մէջ կը դանւի, եւ որովհետեւ կայսրը Արեւելքէն բերած էր նախադադափաւրը, ուստի հոովմէական չէ, այլ արեւելեան:

3.— Սրբուհի Կոստանցա, (անուն Կոստանդիանոսի աղջկայ). շատ գեղեցիկ, շատ շքեղ համարուող կամարակապ սինագոգը շէնք մ'է. տարակոյս չկայ որ հեթանոս դարուն կը պատկանի. շրջաբոլոր կամարի ջրաներկ դարդանկարները, ոչ մի առնչութիւն ունին քրիստոնէական կրօնքի հետ. անոնք աղեքսանդրեան գեղարւեստի դարոցին կը վերաբերին. Կոստանդ Կլորոս կայսրը, անտարակոյս իւր անձի եւ իւր տոհմի համար մի դամբարան կառուցել է: Ամմիանոս Մարկեղինա զարմիկը կը հաստատէ թէ Փլաւեան տոհմի շիրմն եղած է: Նոյնը կը վկայէ Թոմասինի «Հռոմ եւ իւր շրջակայք» գրքին մէջ: Մինչեւ ժե դար կը մնար գետեղած նրա կեդրոնի մէջ պորփիրէ մեծղի դադաղը, որ հիմա Վատիկանի թանգարանը փոխադրուած է, եւ ոչ Կոստանեան Մոնոպրաւը կայ վրան քանդակուած:

4.— Ս. Յովն. Լատերանեան Մայր Եկեղեցւոյ Մկրտարանը. Ներոն կայսրը, առաջին դարուն, դրաւեց լատերանեան ընտանեաց պալատը, որ այն ժամանակէն, իբր կայսերական սեփականութիւն, ծառայեց մինչեւ Վաղենտինոս Գ. այսինքն 455 տարին: Յետոյ Ատտիղասի յաջորդներէն Օդոակըրը տիրեց մինչեւ 493 թ. եւ այսպէս ելեւէջներով հասաւ մինչեւ Պէպինոս Կարճահասակ Յրանսայի թաղաւորը, որ ութերորդ դարուն իջաւ Իտալիա եւ տիրեց Ռավինայի, ջնջեց Բիւզանդիոնի փոխարքայութիւնը եւ երկիրները նւիրեց Հռոմի Ս. Պետրոս Եկեղեցւոյ ժառանգութիւն յամի 751: Որով ութերորդ դարուն հազիւ թէ շինուած ըլլայ լատերանեան եկեղեցին. հետեւապէս Մկրտարանի շինութիւնն ալ Թ.—էն մինչեւ ժԲ. դար կը ձգձգուի, այսինքն վերջնապէս Մայր Եկեղեցւոյ շինութենէն վերջ, առանց որոյ Մկրտարանը գոյութիւն չէր կարող ունենալ: Ուստի Գ. դարու շէնք չէ եւ ոչ Կոստանդիանոսի հիմնարկութիւն: Որ է ասել հայկական գեղարւեստէն մի քանի դարեր յետոյ, ուստի աղբեցութեան մասին խօսելն իսկ չարժէ:

Դ.— կը պարտի՞ Հայաստանի բիւզանդական գեղարւեստին. Պրոֆ. Շ. Դիլ ասել է. Արեւելք Հռոմից մի բան չէ ասել, այլ ընդհակառակը:

Բիւզանդական գեղարւեստ ասելով, ըստ գերազանցութեան, ե—

Թէ կը հասկցելի կեդրոնական, համաչափ անկլինաթեւերու վրա շին-
 ւած դմբէթը, այս այլ ձեւը ոչ մի ազդեցութիւն չէ դորձած հայ-
 կական գեղարւեստի վրա, այլ ընդհակառակն: Արեւելքը, այսինքն
 Հայաստան գլխաւորապէս կը թափանցէ հելլենականութեան մէջ եւ
 իրեն ուժեղ բազուկները կ'երկարէ դէպի հիւսիս մինչեւ սկանտինաւ-
 ւեան երկիրներ, եւ դէպի Արեւմուտք մինչեւ Հարաւային Փրանսա:

Մենք կը խորհինք, որ եթէ արեւմտեան գեղարւեստի աւանդա-
 կան սեւեռումներ եւ կանխակալ կարծիքներ մէկ կողմ նետէին
 եւ ըստ իրականութեան դատէին արեւելեան բարձրաւանդակի, այ-
 սինքն Հայաստանի քրիստոնէական ճարտարապետութիւնը, պիտի
 համոզէին որ Յուստինիանոս ամէն կողմերէ հրաւիրած ճարտարա-
 պետներու խորհուրդներէն կօզուէր Ս. Սովիայի վերաշինութեան
 համար: Ասոնց գլխաւորներն էին Անթիմոս Աղալլացին եւ Իգիդորոս
 Միլետացին, երկուքն ալ փոխադասներ էին, գերազանց մարդիկ ի-
 րենց արւեստին մէջ, կըսէ Պրոկոպիոս: Ըստ մեր ուսումնասիրու-
 թեան, ոչ պակաս ընտիր եւ վարժ եղած են հայ ճարտարապետներ,
 որոնք իրենց հայրենի աւանդական արւեստի մէջ գերազանցող մը
 չունէին, որոնց հետ տեսնւած եւ խօսած պիտի լինի Յուստինոս
 Այրարատեան աշխարհի մէջ (Պերսարմենիա), երբ առաջին անգամ
 Սիդայի եւ Բելիսարիոսի հետ արշաւեց տիրապետելու համար. երկ-
 րորդ անգամ երբ Մեծն Սոսրովի հետ դաշն կնքեց (532 թ.) եւ զնաց
 ստուգելու «Պերսարմենիայի» արեւելեան նոր սահմանները, որ կընդ-
 գրկէր բովանդակապէս մեր Այրարատեան աշխարհը, յորում են Հա-
 յոց հրաշակերտ եկեղեցիները: Շ. Դիլ հայ ճարտարապետներու հա-
 մար քօղարկեալ կերպով կըսէ. «Թէ շատ անգամներ Յուստի-
 նիանոսի երկու հռչականուն ճարտարապետները յուսահատեցուցիչ
 տեղէ ազատեցին»:

«Նիկա»ի ամօթն սրբւած էր եւ Ս. Սովիայի վերաշինութեան
 համար տախտը (platée) պատրաստ էր: Պալատի խորհրդաժողովին
 Յուստինիանոս սեղանին վրա դրաւ Ս. Հռիփսիմէի տաճարի ամբող-
 ջական ծրագիրը եւ որոշեցաւ որ նոյն յատակագծի (planimétrie) նը-
 մանութեամբ կազմել Ս. Սովիայի մակարդակը եւ կայսրը, Թէո-
 դորայի հետ, հրամայեցին շինել աշխարհի ամենամեծ, ամենակա-
 բեւոր եւ ամենագեղեցիկ եկեղեցին, զոր երբէք տեսած չէր Յոյն-
 Հռոմէական աշխարհը: Եւ այդ եկեղեցւոյ հրաշատեսիլ, երկնաման
 վերամբարձ, վահանաձեւ զմբէթը, որուն համար Պրոկոպիոս կըսէ
 Թէ կարծես ոսկի շլթայով երկնքէն կախւած ըլլայ, պիտի կազմէ
 Հայ ճարտարապետներու անկողոպտելի փառքը:

ՇԱԽԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ

ՆՊԱՍՏ ՍԸ

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԲ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ակնարկ մը թրքական, պարսկական եւ արաբական գրականու-
 թեանց պատմութեան վրա *) .-

Թուրքական գրականութիւն. - Թուրքերը կը սնդեն թէ, իսլամու-
 թենէն առաջ, կը մշակէին ժողովրդական բանահիւսութիւն մը ինք-
 նատիպ արեւստով եւ երաժշտութեամբ: Թէ աշուղական ծաղկած
 արւեստ մը ունէին, - աշուղները թրքական թոնկուղ ցեղին մէջ կը
 կոչէին շաման, ալթայ ցեղին մէջ՝ քամ, եաքութ ցեղին մէջ օյուն,
 քրկըղ ցեղին մէջ՝ պաքսի, օղուղ ցեղին մէջ՝ օզան: Թէ այս աշուղ-
 ները կը դորձածէին ազգային նւագարաններ, - չէօֆիւրը կամ գո-
 փուրը, որ կը յիշեցնէ արաբական ուտը:

Ժողովրդական ծագում ունեցող այս բանահիւսները, նւագի ըն-
 կերակցութեամբ, կերգէին բանակներու, պալատներու եւ ազգային
 սօնախմբութիւններուն մէջ:

Հակառակ մեր պատմիչներուն թշնամական վկայութեան, Ալի-
 շան չուրանար Թուրքերու քաղաքակրթութեան հին ծագումը: Այ-
 սուհանդերձ մենք, Հայերս, այնքան ծանօթ ենք նախաքրիստոնէական
 հայ արւեստին, որքան Թուրքերը նախիսլամական իրենց մշակոյ-
 թին:

Յետիսլամական շրջանէն Թուրքերը ունին բազմաթիւ գրական
 յիշատակարաններ: Բոլոր այդ յիշատակարանները թաթխւած են

*) I.- Essai sur l'Histoire de la Littérature Ottomane, - K. J. Basma-
 djian, 1910, տպ. Պոլիս:
 II.- Իրան թարիխի էտէպիյաթը (Թուրքերէն), - Հիւսէյին Տանիշ, 1916.
 տպ. Պոլիս:
 III.- Littérature Arabe, - Clément Huart, 1923, Paris.
 IV.- La Prose Arabe au IV Siècle de l'Hégire (X siècle), - Zaki Mubarak,
 1931, Paris.

միսքիսիզմով: Թուրքերը այս շրջանը կանաճեն քասավվուֆի, - արդարեւ իսլամացած ժողովուրդներու իմացականութիւնը ամբողջովին ընկղմած է սուֆիզմի մէջ:

Այս շրջանին, ժողովրդական բանահիւստութեան հիմնադիրը, Ահմէտ Եէսէվի, կը գրէ ռամհորէն լեզուով բանաստեղծութիւններ, որոնց մէջ կը պակսի քնարերգական զգացումը: Քէօփրիւլի Չատէ Մէհմէտ Փուատ եւ Սատէթտին Նիւզէթ կը վկայեն, որ Եանէվիի բանաստեղծութիւնները բարոյաշունչ եւ ցուրտ երգեր են: Կրօնա-կան վարդապետութեան մը մտահոգութիւնները ցամքեցուցած են իր մէջ քնարերգական ամէն յորդում:

Ճէլալէտտին Բումի, այլ անամբ Մէվլանա, (1207-1273) ունի ռամհորէն քերթլածներ, որոնք եւս թաթխած են սուֆիզմով: Թուրքերը շատ կը պարծենան այս փիլիսոփայ-բանաստեղծով, զոր կը համարին իրենց ազգային գրականութեան հիմնադիրներէն մին, թէ-եւ Մէվլանա շատ քիչ գրած է թուրքերէն: Քառեակ մը, իբրեւ նը-մոյշ, իր ստեղծագործութիւններէն, որոնք իրապէս արժէքաւոր են -

Պիկեանէ մէկիբիտ մէրա գին կիւյեմ,
Տէր կիւյի շիւմա հանէի հուտ միմույեմ,
Տիւշմէն ցէյեմ էրչէնտ քի տիւշմէն բիւյեմ,
Ալամ Թիւրքէսք էկէրչի Հիմտի կիւյեմ:

Թարգմանութիւնը -

Օտար մի կարծէք դիս, ես ալ այս երկրէն եմ, - Ձեր աշխարհին մէջ օջախս կը փնտռեմ, - Թէեւ թշնամի կը կարծւիմ, բայց թշնամի չեմ, - Թէեւ հնդկերէն կը խօսիմ, սակայն զտարիւն թուրք եմ:

Այնուհետեւ կուգան Աշրք փաշաները: «Այս շրջանին, կը գրէ Բասմաջեան, օսմանեան ամբողջ գրականութիւնը կրօնաշունչ է եւ կը գտնուի արաբական բանաստեղծութեան, այլ մանաւանդ պարսկական քերթողութեան ազդեցութեան տակ»:

Արաբական գրականութիւնը - Իսլամութենէն առաջ, արաբական բանաստեղծութեան մասին շատ քիչ ծանօթութիւն ունինք: Իսլամութենէն վերջ, արաբական գրականութիւնը ամբողջովին ինկած է քասավվուֆի ազդեցութեան տակ: Քերթողները աստուածպաշտութիւն (ըշֆ) կերպէն, կը թափառին երկրէ երկիր, բարոյաշունչ քերթլածներ կը ձօնեն մեծատուններուն՝ փոխարէն ստանալով նէրնք: Այսպէս կը ստեղծուի գրական մուրագականութիւն մը, որ ոչինչ ունի արհամարհելի կամ գոհարիկ, - շրջիկ քերթողը յանպատրաստից կը հիւսէ մաղթերգութիւն մը եւ փոխարէն կը ստանայ նէր մը: Աւելի վերջը գաւիտներն են (ճգնաւոր), որ վանքէ վանք, մենաստանէ մե-

նաստան կը ճամբորդեն, կիջնեն գիւղերն ու քաղաքները, երգելով փառքն Ալլահին: Բոլոր այս ճգնաւորները քերթողներ են, որոնք շարունակական յարաբերութեան մէջ են ժողովուրդին հետ: Շատ քիչեր կան, որ կերպէն աշխարհիկ սէրը, - իրական աշուղներն են ասոնք, թէեւ այդ անունը երբեք չի տրուի իրենց:

Ապու-Պէքր Մոհամմէտ Իպն Կիւզման գրած է բաղմաթիւ զէնէլներ (ժողովրդական տաղաչափութեան ձեւ մը), զորս երգելով կը շրջէր քաղաքէ քաղաք եւ կապրէր նւիրատուութիւններով:

Մուհիթտտին Ապու Ապտուլլահ Իպն էլ Արապի, բեղուն քերթող մը (ծնած 1165 ին), որ Թէրքիւման-էլ-Աշվաֆ քերթլածներու հատորին համար բաւական նեղութիւն կրեց՝ ամբաստանելով թէ կերպէ մարմնական սէրը, այնքան որ ստիպեցաւ յայտարարել թէ սուֆիական քերթլածներ են իր ստեղծագործութիւնները, թէ աստուածային սէրն է երգած, եւ երբեք մարմնական սէրը:

Շէմսէտտին-էտ-Տահան Մոհամմէտ Պին Ալի, իւղի արդիւնաբերութեամբ կը զբաղէր, ինչպէս կը մատնէ իր անունը: Ունի քերթլածներ, որոնց դաշնաւորումն ալ ինքն է կատարած: Երաժիշտ-բանաստեղծ մըն էր:

Բոլոր այս բանաստեղծները, սակայն, իրենց տաղաչափութեամբ եւ լեզուով, չէին կրնար ուղղակի մատչելի ըլլալ թուրք ժողովուրդին, որ կը խօսէր չաղաթայ կամ ուլիուր կամ օղուղ բարբառով: Այսուհանդերձ սուֆի վարդապետութիւնը թուրք մտաւորականներուն միջոցաւ ի վերջոյ ազդեց նաեւ թուրք ժողովուրդին վրա:

Պարսկական գրականութիւնը - Նախիսլամական շրջանի պարսկական բանաստեղծութենէն ունինք նմուշներ, որոնք կը վկայեն միջերկրականեան իմացականութեան խնամութիւնը, - այդ մասին յետոյ: Ճիրտուտի եւս կը վկայէ որ սասանեան արքունիքին մէջ ի պատուի էին րամիշկերները (երգող, նւագող բանաստեղծ), որոնք չէնկ եւ սիքա կը նւագէին եւ յանպատրաստից երգեր կը յօրինէին:

Իսլամութենէն վերջ, պարսկական բանաստեղծութիւնը եւս խեղդեցաւ սուֆիզմի ալիքներուն մէջ:

Ի՞նչ կը հետեւի այս արագ ակնարկէն - Թուրքերը, Արաբները եւ Պարսիկները, իսլամութենէն վերջ չունին գրականութիւն մը, որ գերծ ըլլայ քասավվուֆի ազդեցութենէն: Արաբները եւ Պարսիկները փորձեր կատարած են մօտենալու ժողովուրդին, սակայն յաջող չեն այդ փորձերը: Մասնաւորաբար Պարսիկները, որոնք կը կազմեն միջերկրականեան իմացականութեան աղնական ներկայացուցիչներէն մին՝ իրենց Ճիրտուտիներով, Ուայեամներով, գինիի եւ կնոջ պաշտամունքին մէջ դրած խորունկ փիլիսոփայ-

յութեամբ, կարծես ընդմիշտ զրկած են այն ճառագայթներէն, որ իրենց հողոյն կուտար սրիսմակի մը խաղերը: Սուֆիզմը դասացուցեր էր բոլոր զգայարանքները:

Թուրքերը, որ դեռ մինչեւ վերջերս գերի են արարական եւ պարսկական գրականութեան, - Քէօփրիւլի Զատէ կը խոստովանի թէ թուրք ազգային գրականութեան վկայութիւնը պէտք է փնտռել ոչ թէ անցեալ շրջանի, այլ վաղան գրականութեան մէջ *) , - իրենց ժողովրդական բանահիւսութեանց մէջ անգամ կը մատնեն քասալվուֆի ազգեցութիւնը:

Հետեւինք թուրք աշուղներուն .-

Եունուս էմրէ թուրք աշուղ մըն է ԺԳ. դարէն: Իր ստեղծագործութիւնները այնքան թաթխած են միսթիսիզմով, որ անոնց իմաստը բացատրելու համար հարկ է դիմել դաղտնիմացութեան մէթոտներուն (բէմգի):

Աշբօ օլտում պէնտէյի քանանէյիմ,
Պահրա տիւշքիւմ քալիպի տիւրտանէյիմ,
Պալու փէրտէն կէչմիշիմ պիւր տանէյիմ,
Եանայբւմ էյ շէմի բուշէն Եանայիւմ:

Ազատ թարգմանութիւնը .-

Աշբօ դառնալի վերջ ընդունեցի Աստուծոյ իրական ծառայութիւնը: Մարգարտանման իր իմաստութեան տիրանալու համար՝ մտայն մշմարտութեան ծովուն մէջ. մարդկային գոյութեան եւ հասկացողութեան վեր անձ մըն եմ: Ե՛յ Ալլահ, որ կը լուսաւորես աշխարհը, քանի որ օժտած եմ այս ստորագիւններով, թող որ աշքին կրակին մէջ իյնամ, այրիւմ ու մրկիւմ:

Ինչպէս կը տեսնուի, հոս աշբօն ոչ մէկ կապ ունի մեր աշուղ բանին իմաստին հետ:

Եունուս էմրէ այսպէս կը վերջացնէ .-

Աշբա տիւշմէյէն քիշի մահնուպ տըր,
Աշբօ օլան աշբընա մէնլիւպ տըր,
Աշբա Եանմաֆ Եունուսա մէրդուպ տըր,
Եանայբւմ էյ քանի քանան Եանայբւմ:

*) Պու կիւնքիւ էտէպիթ, - Քէօփրիւլի Զատէ Մէհմէտ Ֆուստ, տպ. Պալիս, 1924, (կարդալ «Ազգ. Գրականութիւն» գլուխը):

Աշբօ փաշա, զոր քիչ վերջ յիշեցինք, կապրէր Հայոց Կիլիկեան անկախութեան շրջանին: Թէեւ հարուստ, կապրէր ճգնաւորի պէս զրկանքով, համաձայն թասավլուֆեան վարդապետութեան թելադրանքներուն: Կը կրէ Եունուս էմրէին ազգեցութիւնը: Իր կարիպնամէն փորձ մըն է պարսկական սուֆիզմը տարածելու Թուրքերու մէջ:

Թուրք աշուղներու պատմութիւնը, ճիշդ է որ, կը սկսի ԺԶ դարուն: Այլեւս իրական սագ շայիրիներն են, որ կը յիշատակին այս շրջանն սկսեալ: Առաջինը կը կոչուի Պահշի, որ Մոնկոլներու կամ Ուլկուրներու լեզուով կը նշանակէ գրագիր: Ասկէ կը հետեւցնեն թէ թրքական հին օգաններու (երգիչ) վերջին ժառանգութիւնն է: Իրմէ ծանօթ է տեսիլան մը, որ ոչ աշուղական նկարագիր ունի, ոչ ալ տաղանդի նշոյլ:

Այս շրջանէն կը յիշատակին նաեւ Քիւլ Մէհմէտ, Էօքսիւղ Տէտէ, Հայալի, Քէօր Օղլու, եւ ուրիշներ: Այս ժողովրդական երգիչներուն գործերը եւս շատ հետու են աշուղական կոչելի, - սովորական յանգարանութիւններ, վերջին տունին մէջ իրենց անունը յիշատակելու փորձ մը եւ այսքան:

ԺԷ. դարու թուրք աշուղներն են Քիւլօղլու, Քայքըճի Քիւլ Մուսթաֆա, Աշբօ Էօմէր, Կէվէքի, Քարաճա Օղլան, եւ ուրիշներ: Այս շրջանի աշուղները եւս զուրկ կը մնան ստեղծագործական տաղանդէ, յաճախ կը մատնեն բարոյաշունչ եւ միսթիք արեւստի մը նկարագիրը (Աշբօ Էօմէր):

ԺԸ. դարու աշուղները կը կոչուին Քապասաքալ Մէհմէտ, Հօճա Օղլու, Հիւքմի, որոնք նազ արժէքաւոր են՝ բաղդատմամբ ԺԷ. դարու աշուղներուն:

ԺԹ. դարու աշուղներէն յիշենք Տէրտլի, Պայպուրթլու Զիհնի, Էրզրումլու Էմրաճ, որոնք մէտրէսէի ապրանք են եւ կը մատնեն կրթօնական զանազան աղանդներու փիլիսոփայութիւնը իրենց գործերուն մէջ:

Իմ այս Փորձիս մէջ կը զգուշանամ աւելի երկար ծանօթութիւններ տալէ, - այս փորձը իբրեւ նախադիմ պիտի ծառայէ ապագայ ընդարձակ աշխատութեան մը: Այս պատճառով չուզեցի տալ այս աշուղներուն կենսագրութիւնը, որ այսպէս շահեկան էր այս յօդածին տուն սուղ թէզին պաշտպանութեան համար: Ոչ ալ ուզեցի

նմոյշներ տալ՝ քաղելով թրքական նոր հրատարակութիւններէ: *)
 Քերթողական ձեւի քննադատութիւնը թողունք մէկ կողմ: Քննելով միայն ոգին, որ կենդանութիւն կամ անհատականութիւն կուտայ հայ եւ թուրք աշուղական ստեղծագործութիւններուն, երեւան կուգան երկու տեսակէտներ, - մէկ կողմը արեւելեան միսթիք վարդապետութիւնը, որ կը մատնէ զգայարանքներու յոգնութիւն մը, հաճոյքին ուրացումը, անդրաշխարհեան խաղաղութեան կարօտը, վերջապէս՝ եսին մերժումը:

Միւս կողմը՝ միջերկրականեան վարդապետութիւնը, որ կը փառարանէ բոլոր հաճոյքներուն իմացումը, զգայարանքներու գիւնովութիւնը, արեւին ու կեանքին սէրը, եսին պաշտամունքը:

Մէկ կողմը միսթիսիզմը, զոր հնդկական ու չինական քաղաքակրթութեանց աւազանէն բերին մոնկոլական արշաւանքներու ճամբաները, - միւս կողմը հէտոնիզմը, զոր միջերկրականեան իմացականութեան կանանչ ոստերը, երկարելով դէպի Փոքր Ասիոյ ներսերը, ծաղկեցուցին հայկական բարձրաւանդակէն մինչեւ իրանեան եւ արաբական աշխարհը: Ժամանակ մը սուֆիզմին ալիքները կը խեղդէին միջերկրականեան իմաստութեան ծաղիկները, ժամանակ մըն ալ զգայապաշտութեան ալիքները կը մարէին արեւելեան ճգնակեցութեան ճրագները յեռներու մեկուսարաններու մէջ, - փոխն ի փոխ: Պարսիկները եւ Արաբները կը վկայեն այդ մակընթացութեան եւ տեղատուութեան: Հայ մտքի ստեղծագործութիւններուն պատմութիւնը շատ քիչ կը կրէ այդ երեւոյթին հետքերը: Ու մինչեւ վերջ կը պնդեմ թէ մեր աշուղները շատ քիչ պարտական են թրքական աշուղներուն: **) Եթէ երգին վերջին տունին մէջ հեղինակի

*) Քէօփրիւլի Զատէ Մէհմէտ Ֆուատ պէյի աշխատութիւնները.- Թիւրք սաղապերէրէ, ԺԶ. դար, - տպ. Պոլիս, 1930:
 Նոյն խորագիրը, ԺԷ. դար, - տպ. Պոլիս, 1930:
 Նոյն խորագիրը, ԺԹ. դար, - տպ. Պոլիս 1929:
 Զիաէտտին Ֆահրիի աշխատութիւնը, - Էրզրում շայրէրէրէ, - տպ. Պոլիս, 1927:
 Սաստէքտին Նիզիէթի աշխատութիւնները.- Հալք շայրէրէրէ, - Քարաճա Օղւան, տպ. Պոլիս 1927:
 Նոյն խորագիրը, - Կէվէրէրէ, տպ. Պոլիս, 1928:
 Թիւրք էտէպիյաթը թարիխի, տպ. Պոլիս, 1931:
 **) Դիտելի է, որ թուրք աշուղները շատ քիչ անգամ իրենք գիրենք կամուսնանալու, միւս կողմէ թուրք գրականութեան պատմութեան հեղինակները եւս չեն սիրեր գործածել աշուղ բառը.- Քէօփրիւլի Զատէ սաղապերէ կը գործածէ, իսկ Սաստէքտին Նիզիէթի՝ հալք շայրէրէ:

անունի գործածութիւնը արեւելեան սովորութիւն մըն է (պարսկական կամ արաբական), աշուղ բառին տրւած իմաստը բոլորովին հայկական է *): Աշուղ, եթէ աղաւաղումը չէ ասողին, անպայման եւ միայն այդ իմաստը ունի մեր մէջ, - երգող, երաժիշտ, ճայնաւոր արտասանող:

(ՎԵՐՋ) Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

*) Յ. Օշական նորավէպ մը ունի (Թիւրքմէնին աղջիկը), որում հետեւեալ հատածը յատկանշական է.- (Հովիւ մըն է, որ սիրային դժբախտ պատմութեան մը վերջ կը կուրանայ, անպէտ կը դառնայ եւ եկեղեցւոյ ամէնօրեայ յամախորդ կը դառնայ). «Իրկում առտու կոչնակը չփախցուց եւ անուշ ձայն ունենալուն՝ սորվեցաւ բոլոր համով շարականները: Իրկումը, օճախիմ մօտ կերպէր ան: Այս երգերէն իրեն ինկաւ նոր մականուն մը, Աշըլը»:

ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԸ

Զարմանալի է Միքայէլ Նալբանդեանցի *) գրական աշխատանքի ճակատագիրը: 1866 թւականից, այսինքն բազմաշարչար հայրենասէրի մահից յետոյ, մինչեւ 1900 թւականները սկիզբները, բացի մի քանի ժողովրդականութիւն ստացած երգերից, նրա մնացած գործերը անձանօթ էին հայ ընթերցող հասարակութեան: Ըսկիզբները, հայ մտաւորականութեան վերին խաւերն իսկ հազիւ կարգացել էին Նալբանդեանցի «Հիւսիսափայլ»ում լոյս տեսած «Յիշատակարանները» կամ միւս յօդածները: Թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ կրթւած խաւերը երգում էին ու անգիր անում «Ազատն Աստուած» եւ «Մեր Հայրենիք»ը, լսած էին, որ Մ. Նալբանդեանցը «յեղափոխական է», «աղբասէր է», որ «բանտարկւած է» ու «աքսորի մէջ մեռած», բայց շատ հետու էին մեր պատմական մեծ դէմքի իսկական պատկերը ճանաչելուց: Պատճառներ շատ կային եւ դրանցից գլխաւորը, ի հարկէ, Թիւրքիայի եւ Ռուսաստանի քաղաքական տիրող կացութիւնն էր ու սրա հետ կապւած գրաքննչական խիստ օրէնքները: Նման եւրոպական մի քանի պատմական դէմքերի, մեր մէջ էլ Մ. Նալբանդեանցը ծանօթ էր ժողովրդին իր անունով, իր երկու ոտանաւորով ու իր հմայքով, բայց անձանօթ էր իր գրւածքներով: Ու առաջին անգամ, 1900 թ. սկզբներին միայն ձեռնարկւում է Նոր-Նախիջեւանում նրա երկերի հրատարակութիւնը, երկու հատորով: Բայց, չնորհիւ գրաքննչական պայմաններին ու Նալբանդեանցի գրութիւնների ցիր ու ցան վիճակին, այդ երկու հատորը, ինչպէս այժմ պարզւում է, լիակատար չէ: Վերջին երեսուն տարիների ընթացքում, Նալբանդեանցի մասին բոլոր գրողները ընդգծել

*) Մենք գործ ենք անում Նալբանդեանց եւ ոչ թէ Նալբանդեան, յարգելով մեր մեծագոյն հրապարակագրին որ գործ էր անում «եանց» եւ ոչ թէ «եան» վերջաւորութիւնը: Բացի դրանից, մեր բոլոր մէջբերումներում գործածելու ենք ընդունւած հիմ ուղղագրութիւնը եւ ոչ թէ այն, որ պարտադրւած է Խ. Հայաստանում:



ՄԻ.Բ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

են, որ «կան Մ. Նալբանդեանցի ուրիշ անտիպ աշխատանքներ՝ գըր-
ւած բանտում եւ արտասահմանում, որոնք սակայն, մինչեւ այժմս
կորուած են համարւում»: Ժամանակ առ ժամանակ, բոլորովին պա-
տահարար, գտնւում ու տպւում էին Մ. Նալբանդեանցի այս կամ
այն անտիպ աշխատանքների բեկորները՝ ոտանաւորը կամ գրի ա-
ռած մտքերը, բայց մինչեւ վերջին տարիները նրա երկերի ամբող-
ջական հրատարակութիւնը տեղի չունեցաւ: Պէտք է ասել, որ այդ
պակասը մասամբ լրացւում էր վերջին ժամանակներում: Խ. Հա-
յաստանի կառավարութիւնը, բարերախտաբար, լուրջ ուշադրութիւն
դարձրեց այդ գործի վրա: Նա, Եր. Շահազիզի ջանքերի շնորհիւ,
Նոր Նախիջևանից Երեւան փոխադրեց Մ. Նալբանդեանցի թանգա-
րանը եւ այնտեղ գտնւած մի քանի ձեռագիրները, իսկ երկու տարի
առաջ յանձնարարեց պ. Աշոտ Յովհաննիսեանին ձեռնարկել Մ. Նալ-
բանդեանցի երկերի ամբողջական հրատարակութեան:

Այդ աշխատանքը աւարտւած է եւ այս օրերս լոյս է տեսած Մ.
Նալբանդեանցի անտիպ գրւածքների մեծ հատորը՝ Ա. Յովհաննիս-
եանի լուսարանութիւններով ու բացատրականներով, որոնք 800 էջ-
նոց հատորի համարեա կէսն են բռնում: *) Հատորը պարունակում
է .— 1) Մ. Նալբանդեանցի ձերբակալման ու բանտարկութեան ժա-
մանակ տրւած «Սենատական ցուցմունքները», ուսերէն եւ հայերէն
լեզուով, 2) Մ. Նալբանդեանցի բանտում գրած ծոցատետրը, 3) Բան-
տի յիշատակարանը, 4) «Պոլսահայ Լուսաւորչական համայնքը»
յօդածը, 5) «Հայ լեզւի ուսումնասիրութիւնը Եւրոպայում եւ հայ
գրականութեան գիտական նշանակութիւնը», 6) Նամակներ Այվա-
զովսկու վարդապետարանի մասին եւ 7) Կրիտիկա Պ. Պոօշեանի
«Սօս եւ Վարդիթեր» վէպի: Սրանց Ա. Յովհաննիսեանը կցում է իր
«կոմէնտարները», բացատրութիւնները եւ պարզաբանութիւնները,
այսինքն 50-60-ական թւականների հայկական կեանքի հասարակա-
կան-քաղաքական մթնոլորտի պատկերը, մէջբերելով բազմաթիւ
տւեալներ ու նիւթեր նոյն շրջանի հայ եւ ոչ-հայ դէմքերի եւ քաղա-
քական դէպքերի մասին՝ կապւած Մ. Նալբանդեանցի կամ անձնա-
ւորութեան եւ կամ նրա աշխատանքների հետ:

Իր խմբագրած հատորին Ա. Յովհաննիսեանը կցել է «Ան-
ւանական բառարան»՝ 70 էջից բաղկացած եւ մի «անւանացուցակ»՝
մօտ 700 անուաներով, որոնք յիշատակւած են կամ Մ. Նալբանդեան-

*) «Մ. Նալբանդեան. Անտիպ յերկեր. խմբագրութիւնն եւ կոմէնտարներ Ա.
շոտ Հովհաննիսեանի. Պետական հրատարակութիւն, Յերեւան, 1935. Մակվա.
800 էջ, Մ. Նալբանդեանի յերկու պարտէտներ ժողով. ճկարիչ Մար. Սարյանի»:

ցի երկերում եւ կամ խմբագրողի գրւածքներում: Ինչպէս էլ մօտե-
 նանք Ա. Յովհաննիսեանի արած պարզարանութիւններին, ինչքան էլ
 որոշ վերապահումներ ունենանք նրա այս կամ այն բացատրութիւն-
 ների ու կարծիքների, ինչպէս եւ նրա գործածած պատմափիլիսո-
 փայական մէթոտի վերաբերմամբ (Ա. Յովհաննիսեանը ուսումնասի-
 րում է Մ. Նալբանդեանցին «գլխալէկտրիկական մատչելիալիզմի» կամ
 «մարքսիստական» տեսակետից), բայց եւ այնպէս անաչառութիւնը
 պահանջում է խոստովանել, որ Ա. Յովհաննիսեանը կատարել է մի
 հակայական աշխատանք, ի յայտ բերելով ոչ միայն Մ. Նալբանդ-
 եանցի անտիպ գրւածքները, ցուցմունքները, նրա հասարակական
 կեանքի մի քանի անյայտ դէպքերը, այլ եւ ուսումնասիրել կամ ծա-
 նոթացել է բոլոր այն նիւթերի հետ, որոնք հրատարակւած են եղել
 հայ հրապարակագրի մասին: Աւելին՝ Ա. Յովհաննիսեանը ծանօթա-
 տիպ մնացած թղթերի հետ եւ գտել է բազմաթիւ տեւալներ Մ. Նալ-
 բանդեանցի վերաբերեալ: Օրինակ՝ նա մէջբերումներ է անում Սըմ-
 բատ Շահաղիզի, Մսեր Մսերեանի, Կ. Շղեանի եւ ուրիշների անձնա-
 կան անտիպ արխիւներից, ցարական ոստիկանութեան դաղտնի թըղ-
 արխիւները» հրատարակութիւնից: Չենք կասկածում, որ այս տե-
 սակ դիտական մի հրատարակութիւն կապւած է անյաղթելի դժա-
 րութիւնների հետ ու երեւի պահանջել է երկար տարիների աշխա-
 րութեանցի վերաբերեալ գրութիւնների «խոշորագոյն մասն անյայտ է տակա-
 լին կամ յայտնի միայն անամբ», ուստի եւ խմբագրողը ցանկու-
 կերի դիտական հրատարակութեան համար անհրաժեշտ նախապա-
 սում է Ա. Յովհաննիսեանը, նախ քան հեղինակի «Երկերի» լրակա-
 րելից մէկն է ոչ միայն ընթերցողի սեփականութիւն դարձնել օր ա-
 հասարակական հարցասիրութիւն առաջացնել դէպի հրապարակա-
 խօսի ձեռագրական ժառանգութիւնը յայտ բերելու խնդիրը: Հատ ու
 դժարին այդպիսի մի գործ յաջողութեամբ առաջ տանելու համար:
 Հարկաւոր է ընթերցողների եւ հետախոյզների լայն հասարակայնու-
 թեան գործակցութիւնը: Անհրաժեշտ է հասարակական հարցասի-
 րութիւն դէպի գրողի ժառանգութիւնը: Առանց դրան անհնարին է

լոյս ընծայել «երկերի» նոր ժողովածուն՝ XIX դարի մեծագոյն հը-
 րապարակախօսին արժանի խնամքով եւ լրակատարութեամբ»:
 Եւ, յիշուի՝ չնայած Ա. Յ. -ի բոլոր ջանքերին, տակաւին չեն
 յայտնաբերւած ոչ միայն Մ. Նալբանդեանցի մի շարք անտիպ ձեռ-
 գիրները, այլ եւ նոյն իսկ նրա տպագիր աշխատանքներից մէկը՝
 «Մէկին խօսք, միւսին հարս» վէպը, որից, չնայած Ա. Յովհաննիսե-
 անի եւ ուրիշների ջանքերին, չէ գտնուած եւ ոչ մէկ օրինակ: Այդ վէ-
 պը տպագրւել է Մոսկւայում յիսուական թրակաաններում եւ ըստ մի
 քանի տեւալների՝ ոչնչացւել է Մ. Նալբանդեանցի ձեռքով: «Վէպի
 բովանդակութիւնը մինչեւ իսկ յայտնի չէ» *), ասում է Ա. Յովհան-
 նիսեանը: Այս վերջինիս ասելով՝ մինչեւ այժմ չէ գտնուած եւ կորուս-
 են համարւում նաեւ Մ. Նալբանդեանցի «Մեր տեսածը եւ լսածը»
 անտիպ կարեւոր աշխատութիւնը, ինչպէս եւ դեռ արտասահմանեան
 ճամբորդութեան ժամանակ նրա գրի առած յիշատակարանը, որի
 մասին Նալբանդեանցը բանտից ուղարկւած իր մէկ նամակում
 հետեւեալն է գրում. - «Մի օր դուցէ Աստուծու այցելելով մի-

*) Վաղ պատմական օրերից ազօտ կերպով յիշում եմ հետեւեալը: Հօրս մօտ
 կար (Մ. Նալբանդեանցի մտերիմ ընկերն է եղած Մոսկւայի համալսարանական օ-
 րերից) մի օրինակ այդ բարակ, մօտ 75-80 էջ կազմող «Մէկին խօսք, միւսին հարս»
 մտնով: Այդ պատմութեամբ, կամ վիպակով, պատմում էր Նար-Նախիջեւանի
 կեանքից առած մի իրական դէպք: (Վիպակի լեզուն աշխարհաբառ էր, տեղ տեղ
 էլ, մանաւանդ մի քանի տուն երգերը, Նար-Նախիջեւանի բարբառով): Վէպի հե-
 ղում է մի երիտասարդ, որ իր սիրած օրիորդի հետ ամուսնանալուց առաջ որոշում
 է մալ ուխտի գնալ Մշոյ Սուլթան Ս. կարապետի վանքը: Միանալով Ն. Նախիջե-
 վանցի երիտասարդներից բաղկացած 11 հոգիանոց ճիւղով մի խմբի, նա ուղեւոր-
 ւում է Ս. կարապետ: Ծարուակաւորեան մէջ պատմում է ճանապարհին պատահած
 մի քանի արկածների, այլ եւ Ն. Նախիջեւանի հարսանիքների, վարդավառի եւ
 ուրիշ տոների, ծիսերի ու սովորութիւնների մասին: Երբ երիտասարդը երեք ամսից
 յետոյ վերադառնում է Ս. կարապետից, տխուրեամբ իմանում է, որ իր նշանածը
 մէկ ուրիշի հետ է ամուսնացել: Յիշում եմ որս պատմածներից եւ այն, որ Նալ-
 բանդեանցը, գրելով այս հասարակ, անպառնայ լեզուով էլ կարելի է ամենաաւերայ բա-
 ցնել իր հայրենակիցներին, որ աշխարհաբառ լեզուով յորդորել նրանց, որ ձեռք վերցը-
 նելի մասին գրել, եւ ցանկացել է այդ ձեռքով յորդորել նրանց, որ ձեռք վերցը-
 նել իրենց բրբառ-տուտախօսում գաւառաբարբառից եւ գործածեն աշխարհաբառը: Երե-
 չեմ սխալուում, գրեալը տպւած է Մոսկւայում 1857-8 թւականներին: Չը գիտեմ
 ի՞նչպէս եւ ե՞րբ Նալբանդեանցի վէպի այդ, երեւի միակ օրինակը, հետագայում
 կորուցեց որս գրադարանից:

չատակարանս կարգի կրերեմ եւ կտպեմ ուշադրութեան արժանի տեղեկութիւնք եւ դիտողութիւնք մեր ցիր ու ցան եղած հայերի մասին»*) : Մինչեւ այժմ չգտնուած գրութիւնների շարքումն են նաեւ հետեւեալ աշխատութիւնները : - Նրա մերկացումները ուղղւած Զէյթունի ապստամբութեան հետ կապւած «հերոս», «իշխան» Լեւոն Լուսինեանի դէմ : Այդ գործի մասին յիշատակութիւն կայ Նալբանդեանցի դատարանական ցուցմունքների մէջ : Բացի այդ, յայտնի է նոյնպէս (այդ մասին քանիցս յիշում է Նալբանդեանցը Ա. Սուլթան-չահին բանտից գրած իր նամակներում), որ բանտում Մ. Նալբանդեանցը գրել է . ա) «Աշխարհաբառի քերականութեանը վերաբերող ուսումնասիրութիւններ», բ) «Բնապատմութեան ներածութիւնը», գ) «Քիմիայի եւ շերամարտութեան ձեռնարկ», դ) Կիրակոս Գանձակեցու պատմութեան առթիւ մի յօդւած եւ ուրիշ աշխատութիւններ : Սրանք բոլորը մինչեւ այժմ չեն գտնուած : Դրանց վրա պէտք է աւելացնել բանտից նրա գրած հարիւրից աւելի նամակները, որոնց մէջ նա արծարծել է ուշադրաւ մտքեր, լեզւի, գրականութեան, պատմութեան ու գիտական մի շարք հարցերի մասին, եւ որոնցից միայն երեսունը յայտնաբերւած են մինչեւ այժմ : Միւսները, ըստ երեւոյթի, պէտք է ընդմիջտ կորուած համարեն :

Ա. Յովհաննիսեանի լոյս ընծայած հատորի մէջ ամենահետաքրքրական կտորներն են Նալբանդեանցի «Սենատական ցուցմունքները» եւ Պերճ Պոռչեանցի «Սօս եւ վարդիթեր» վէպի քննադատութիւնը :

*) Աւելորդ չենք համարում Մ. Նալբանդեանցի մինչեւ այժմ չգտնուած աշխատութիւնների առթիւ մէջ բերել հետեւեալը, որ լսել ենք Նալբանդեանցի երկու ընկերներից : Երբ ուս կառավարութեան ժանդարմները խուզարկում էին Մ. Նալբանդեանցի իրերը եւ բզբերը ու ամբողջը 'ի մի էին հաւաքում, Նալբանդեանցը մի պահ հեռանում է կողքի սենեակը եւ այնտեղ մնացած ձեռագիրների մի կապոց գաղտագողի յանձնում է հօրը, որ նա «խորունկ տեղ պահէ» :

Հայրը այդ կապոցը տանում է նախ, խոհանոց, բայց երբ ժանդարմները եւ ձերբակալւած Նալբանդեանցը կառք մտած հեռանում են, առնում է այդտեղից կապոցը եւ ձերունի հարուստ Մովսէս Խաչեանին է յանձնում, որը առհասարակ համբային գործերով չէր հետաքրքրւում եւ, ուրեմն, ազատ էր կասկածներից ու խուզարկութիւններից : Մի քանի ամիս անցած Նալբանդեանցի հայրը իմանում է, որ Խաչեանը չափազանց «խորունկ տեղ է պահել» կապոցը՝ նա արտաքինում էր ձր-գել այն . . . Երբ երեք տարի յետոյ Նալբանդեանցը բանտում իրեն այցելող մի ընկերից իմանում է այդ մասին՝ երկու ձեռքերով բռնում է գլուխը եւ բացազանում . «աւա՜ղ . . . եթէ մինչեւ այժմ որ եւ է կարեւոր բան էի գրած, այդ ձեռագիր կապոցի մէջն էր. . . » :

նը, որի առաջին վարիանտը մի քանի տարի առաջ տպւեց, բայց ոչ ամբողջութեամբ : Ա. Յովհաննիսեանը գտել է ոստիկանակ . արխիւներում Սենատի «Առանձին Յանձնախումբի» երկար շարք հարցերը՝ ուղղւած Նալբանդեանցին եւ վերջինիս գրաւոր պատասխանները ուղղւած Նալբանդեանցը, դէպի Եւրոպա եւ Հնդկաստան (որտեղ գնացել էր յօգուտ Ն. Նախիջևանին կտակած գումարները աղատելու համար) կատարած իր երկու տարւայ ճանապարհորդութեան ընթացքում, բացի Հնդկաստանի քաղաքներից ու կղզիներից՝ այցելել է Ալեքսանդրիա, Իզմիր, երկու անգամ Պոլիս, Խաթալիկան քաղաքներ, Գերմանիա եւ մի քանի անգամ Փարիզ ու Լոնդոն : Ամէն տեղ ոչ միայն սովորական ճանօթութիւններ է ըստեղծել, այլ եւ հաստատել է որոշ գրական-հասարակական կապեր : Ի մօտոյ ճանօթացել է նոյն ժամանակների հայ հանրային գործիչներին մտքերի ու գործունէութեան հետ, աղբել է նրանց վրա եւ ազդել է նրանցից : Արտասահմանից մի շարք յօդւածներ է ուղարկել Պոլսի «Հիւսիսափայլ»ին, որոնք տպւել են «Յիշատակարան Մեղու»ին, նուէլի» ընդհանուր խորագրին տակ, քանիցս աշխատակցել է Պոլսում Յարութիւն Սըվաճեանի կողմից հրատարակուող «Մեղու»ին, լոյս է ընծայել Փարիզում «Նրկու Տոզ» անկրկնելի ոճով ու սուր լեզուով գրած հրապարակախօսական բովանդակութեամբ մէ գրքոյի եւ նոյնպէս Փարիզում, 1862 թ. սկզբներին, հրատարակել է Սիմէ-Օն Մանիկեան կեղծ անուն տակ «Նրկուագործութիւնը որպէս ուղիղ անապարհ» գիրքը : Բացի այդ՝ Լոնդոն կատարած իր այցելութիւնների ընթացքում ճանօթացել ու շատ մտերմացել է նոյն ժամանակագարեօյի եւ Միքայէլ Բակունինի, ինչպէս եւ մի քանի լեհ ու իտալացի յեղափոխականների հետ :

1862 թ. յունիս ամսին նա վերադառնում է Պետերբուրգ, որտեղից ուղեւորւում է Ն. Նախիջևան՝ Հնդկաստանի իր առաքելութեան հաշիւները ներկայացնելու համար : Շուտով (14 յուլիս), Պետերբուրգից եկած գաղտնի հրամանի համաձայն, ոստիկանութիւնը խուզարկում ու ձերբակալում է Նալբանդեանցին, տանում է Նոր Նախիջևանից Պետերբուրգ եւ յուլիս 22 -ին բանտարկում նրան հրաժնում : Բանտում Նալբանդեանցը ամբողջով զրկու էր արտաքին յարաբերութիւններից : Բանտում Նալբանդեանցը մտնում է երեք տարի, որից յետոյ, հանում է այնտեղից առաջացած հիւանդութեան պատճառաւ եւ աքտորւում Ռուսաստանի խուլ անկրկններից մէկը : Հիւանդ Նալբանդեանցը, երեք ամիս տանջւելուց յետոյ, վախճանում է 1866 թ. մարտ ամսին, իսկ երկու շաբաթ յետոյ Ն. Նախիջևանի հասա-

րակութիւնը, հանդիսաւոր կերպով բերում է նրա աճիւնը Ն. Նախի-
 շեան եւ թաղում քաղաքի մօտ գտնուող Ս. Սաչ վանքի բակում :
 Սկզբում, թէ ինքը, Նալբանդեանցը եւ թէ նրա համախոհները
 համոզւած էին, որ ձերբակալման գլխաւոր պատճառները Գարբիէլ
 Վ. Այվազովսկու մատնչական նամակներն էին, քսութիւններով ու
 մեղադրանքներով լի՝ որոնք նա քանիցս ուղարկել էր՝ ստորագրւած
 ու անստորագիր՝ ուսու ներքին գործոց նախարարութեան ու քաղա-
 քական ոստիկանութեան : Բայց ճիշդն այն է, որ Նալբանդեանցի
 ձերբակալման պատճառները այն նամակներն էին, որ դրել էր նրան
 Լոնդոնում ապրող ուսու յեղափոխական Մ. Բակունինը : Նամակնե-
 րը գտել էին Լոնդոնից Ռուսիոյ սահմանները ուղեւորող Բակունինի
 համախոհ Վէթոշնիկովի մօտ : Վերջինիցս գրաւել էին նաեւ նոյն ժա-
 մանակւայ միւս հոչակաւոր ուսու քաղաքական տարադիրներէն՝ Հէր-
 ցէնի, Օգարեօլի եւ Կելսիեւի ձեռքով գրւած նամակները : Նալբան-
 դեանցի հետ մէկտեղ ձերբակալուել էին նաեւ «Լոնդոնի պրօպագան-
 դիստները» խմբակի գործով մեղադրող 32 հոգի ուսու աչքի ընկնող
 մտաւորականներ, որոնց թւում եւ նշանաւոր հրապարակախօս-քնն-
 նաղատ Չերնիշեւսկին : Սրա գործը սակայն քննուած էր առանձին :
 Պէտք է ասել, որ 1861 թ. ուսու գիւղացիների ազատագրումից յե-
 տոյ, շարունակ տեղի էին ունենում ուսու գիւղացիական ապստամ-
 բութիւններ, որոնք թէեւ տեղական եւ մասնաւոր բնոյթ էին կրում,
 բայց վերին աստիճանի մտահոգում էին կառավարութիւնը : Դրա
 հետեւանքով բազմապատկուել էին կառավարութեան բանեցրած խնս-
 տութիւնները թէ գիւղացիական եւ թէ նրան համակրող ուսու մըտա-
 ւորականութեան վերաբերմամբ : Ծագած խռովութիւնները զսպելու
 համար, կառավարութիւնը փաստօրէն պատերազմական դրութիւն
 էր յայտարարել մայրաքաղաքում : Փակուել էին ուսու նշանաւոր ամ-
 սագիրները՝ Չերնիշեւսկու «Սօլրէմէնիկ»-ը եւ Դօբրօլիւբովի
 «Ռուսկօէ Սլօզօ»-ն : Այս բոլորը առիթ ծառայեց ուսու պահպանո-
 ղական մամուլի եւ կառավարչական խաւերի ձեռքին՝ մեղադրելու
 «Լոնդոնի պրօպագանդիստներին» եւ սրանց պարագլուխ Բակունինին
 եւ Հէրցէնին ամէն տեսակ քաղաքական յանցանքների մէջ (մայրա-
 քաղաքներում տեղի ունեցած մի շարք հրդեհները) այլ եւ այն բա-
 ցաղաքներում տեղի ունեցած մի շարք հրդեհները) այլ եւ այն բա-
 կաներին ապստամբական օջախներ պատրաստելու նպատակով Ռու-
 սաստանի բոլոր մասերում՝ հիւսիսից մինչեւ Անդրկովկաս : Կեդրո-
 նական գաւառների գիւղացիական խլրտումներից կառավարութիւնը
 ահաբեկուած էր եւ կարծում էր թէ ապստամբութիւններ կարող են
 տեղի ունենալ նաեւ Ռուսաստանի ծայրամասերում՝ Լեհաստանում,

Փոքր Ռուսիայում, Հիւսիսային Կովկասում, Անդրկովկասում եւ
 մանաւանդ Կովկասում, որ վաղուց է արդէն հանգիստ չէր լեռնա-
 կանների անվերջ ըմբոստութիւններին հետեւանքով : Ռուս կառա-
 վարութիւնը երկիւղ ունէր ոչ այնքան «Լոնդոնի պրօպագանդիստ-
 ներից» որքան նրանց գործակալներից, որովհետեւ սրանք էին, վեր-
 ջին հաշուով, խօսքից գործի անցնողները եւ ապա ուրեմն ցարիզմի
 ահեղ թշնամիները : Այս յանցանքներով մեղադրուողներին այնպիսի
 նշանակութիւն էր տրուում, որ գործի քննութիւնը յանձնարարուած
 էր պետական Սենատին, որին կից ստեղծուել էր «Յատուկ Յանձնա-
 ժողով»ը : Անձնապէս ուշադրութիւն էր դրաւել Մ. Նալբանդեանցի
 «գործը», չնորհիւ նրա մօտ ձերբակալման ժամանակ գտնուած մի
 քանի թղթերին, որոնց թւում Բակունինի կազմած տպագիր յայտա-
 րարութիւնը, որ պարունակում էր գաղտնագրեր ու յատուկ գաղտ-
 նի բառարան, ապա Նալբանդեանցին Պոլսից ուղղւած հայերէն մի
 նամակ որտեղ խուլ ակնարկներ կային «Կոմիտէներին» կազմակեր-
 պութեան, ինչոր մասօնական օթեակների ստեղծման, «Մարտիրո-
 սին յանձնելու նամակի (գաղտնի բառարանից երեւում էր որ Մար-
 տիրոսը յայտնի խտալացի յեղափոխական Մաձձինին էր) մասին» եւ
 այլն : Ռուսերէն լեզուով կոչը դիմում էր «ուսու, լեհ եւ բոլոր սլաւոն
 ընկերներին», բացի այդ, թղթերի մէջ կային նաեւ Բակունինի,
 Մաձձինիի, Գարբիալիի լուսանկարները : Կառավարութեան տրա-
 մադրութեան տակ կային Վէթոշնիկովի ձերբակալման ժամանակ
 յայտնագործուած միւս նիւթերը, որոնք ըստ ամենայնի շատ մեծ
 կասկածի տակ էին դրոյում Նալբանդեանցի անձնաւորութիւնը : Բացի
 Լոնդոնից վերադարձող Վէրշնիինի մօտ գտնուած Բակունինի նամակ-
 ներից, գրաւել էին նոյնպէս չորս օրինակ ոմն Ս. Մանիկեանի հեղի-
 նակութեամբ լոյս տեսած «Նրկրագործութիւնը» գրքից (Սենատա-
 կան ցուցմունքներից երեւում է, որ կառավարութիւնը մինչեւ վեր-
 ջը չիմացաւ, որ Մանիկեան Նալբանդեանցի թղթերի մէջ գտնուած է
 մունքներից երեւում է, որ Նալբանդեանցի տեղեկագիր պայթուցիկ
 եղել թրքահայ լեզուով գրած ընդարձակ մի տեղեկագիր պայթուցիկ
 նիւթեր պատրաստելու մասին եւ մի շարք այլ թղթեր, որոնք ակ-
 ներել էին դարձնում Բակունինի եւ նրա «գործակալների» 1862 թ-ին
 Կեդրոնական Եւրոպայում, Բալքանեան երկիրներում եւ Ռուսաս-
 տանում ազգային յեղափոխական շարժում առաջ բերելու ծրագիրը :
 Բակունինի այդ ծրագիրը խօսում էր սլաւ ազգերի ընդհանուր դաշ-
 նակցութեան մասին : Իտալիայի ազատագրումը մահացու հարւած է
 հասցնելու աւստրօհոնգարական միապետութեան, որը տապալելու
 է Հունգարացիների եւ Իտալացիների հաւաքական ուժով եւ դրա հե-

տեանըով խորտակելու է նաև Թիւրքիան: Ռուսաստանը հասու-
 նացած է, ասում էր ծրագրերը, գիւղացիական յեղափոխութեան հա-
 մար, որ պիտի բռնկի, եթէ գիւղացիութիւնը չստանայ ազատութիւն
 եւ հող: Կառավարութեան ձեռքն էր ընկել, ինչպէս երեւում է «Սե-
 նատական ցուցմունքներէց», Բակունինի Գարիբալդիին ուղղւած մի
 նամակը, որտեղ խօսուում է Լեհաստանի մասին եւս: «Մեր նպատակն
 է, գրում էր Բակունինը, Մոսկւա-Պետերբուրգ կենտրոնների ոչըն-
 չացումը, կատարելալ ազատութիւն եւ ինքնավարութիւն. անկախու-
 ժում են Ռուսաստանի պետութիւնը: կեանքի եւ մահու պատերազմ
 Աւստրիայի, ինչպէս նաև Թիւրքիայի ու մասամբ Ռուսաստանի դէմ,
 որչափ որ վերջինս լեհական երկրամասից է կազմւած եւ, վերջապէս,
 սլաւոնական բոլոր ժողովրդների ընդհանուր դաշնակցութիւն. . .
 Ռ՝րտեղից է սկսելու շարժումը, հարցնում էր Բակունինը: Արդեօ՞ք
 առաջ կը դայ Իտալիայի յանկարծակի ապստամբութիւնի՞ց, մաճառ,
 սլաւ, հայ եւ յոյն ժողովրդների մէջ, թէ, այնուամենայնիւ, տեղի
 կունենայ Ռուսաստանում - ահա հարցը: Մենք գործ կ'ընենք բոլոր
 միջոցները, որ այդ ապստամբութիւնները նպաստեն ու յանգին մի
 նպատակի - «Իտալիայի լիակատար ազատագրմանը, ամբողջ արե-
 ւելքի ապստամբութեանն ու ազատագրմանը»:

Մանոթանալով գրււած նամակների բովանդակութեանը, ա-
 սում է Ա. Յովհաննիսեանը, ոտտիկանական օրգաններին դժւար չէր
 նկատել որ, «Լոնդոնի պրոպագանդիստները» արտակարգ ջերմ վե-
 րաբերմունք ու անասհման վտտահութիւն ունեն դէպի Նալրանդեան-
 ցը: Օգարեծովի մի նամակում գրւած Սեռնո-Սօլօվեօվիչին, Նալ-
 հօգի»: Հէրցէնը նոյն Սեռնո-Սօլօվեօվիչին, որ ձերբակալւած էր,
 գրում էր Նալրանդեանցի մասին. «աղնւադոյն մարդ եմ համարում
 մեր արեւելեան բարեկամին, որին շարունակում եմ յիշել եւ սիրել»:
 Ռուս վիպագիր Ի. Տուրգենեւին գրած Հէրցէնի մի ուրիշ նամակում
 գտնում ենք «Նալրանդովը - բժշկութեան աղնւադոյն եւ բարի դօկ-
 տօր» որակումը: Կառավարութեան ձեռքն էր ընկած նոյնպէս Բակու-
 նինի իր քրոջ գրած նամակը, որտեղ ռուս յեղափոխականը բնութա-
 գրում էր իր հայ բարեկամին, համեմատելով ռուս ահանաւոր գրող
 Տուրգենիեւի հետ. «Նալրանդովը ոսկի մարդ է. ամբողջովին հողի եւ
 ամբողջովին անձնւիրութիւն է. դու կը սիրես նրան առաջին անգա-
 մից: Ա՛յ օրինակ Ի. Տուրգենեւը, նա ուրիշ բան է: Նա նոյնպէս շատ
 բարի է, Աստուած էլ գիտէ, որ Աստուած է: Նա եւ խելօք է եւ սիրա-
 լիբ, բայց չի մոռանում իրեն եւ չունի այն սուրբ պարզութիւնը, ինչ

որ ունի Նալրանդովը, որը գրււում է ոչ թէ խելքով, այլ սրտով,
 թէեւ գուցէ որպէս իսկական հայ մարդ, շատ խորամանկ է, երբ
 հարկաւոր է լինում այդ»:

«Սենատական ցուցմունքներ»ից եւ Ա. Յովհաննիսեանի պրպը-
 տումներից պարզւում է նաև մի շատ կարեւոր փաստ, որը մինչեւ
 այժմս թիւրիմացութեան մէջ էր ձգել Նալրանդեանցի անձնաւորու-
 թեամբ գրաւուող բանասէրներին: Հարցը վերաբերում է Նալրանդ-
 եանցի մօտ գտնւած եւ Պոլսից գրւած այն նամակին, որի հեղինակը
 մինչեւ այժմ համարւում էր «Մեղու» թերթի խմբագիր Յարութիւն
 Սվաճեանը: Բանիցս այցելելով Պոլիս, Նալրանդեանցը, ինչպէս
 յայտնի է, հաստատել էր այնտեղ լայն կապեր առաջադէմ հայ մը-
 տաւորականների հետ: Միեւնոյն ժամանակ Լոնդոնի պրոպագան-
 դիստների աչքում Թիւրքիան ոչ միայն մօտալուտ ապագայում տա-
 պալելիք պետութիւն էր, այլ եւ աշխարհագրական տեսակէտից մի
 շատ յարմար երկիր, որտեղից հեշտութեամբ կարելի էր Լոնդոնի
 յեղափոխական հրատարակութիւնները տեղափոխել Կովկաս, Անդը-
 կովկաս եւ Հարաւային Ռուսաստան:*) Նալրանդեանցի ձերբա-
 կալութեան ժամանակ երեւան էր եկել մի շատ հետաքրքրական փաս-
 տաթուղթ: Դա 1862 թ. 14 մայիսի թւագրած եւ Նալրանդեանցի
 հասցէով Պոլսից Պետերբուրգ ուղարկւած մի նամակ էր, որի հեղի-
 նակը, ինչպէս ասացինք, ցարդ համարւել է Յ. Սըվաճեանը: Այդ
 նշանաւոր նամակը, որից մէջբերումներ է արւած «Անտիպ Երկեր»ի
 մէջ, ստորագրած է «Ս. Թ.» տառերով: Շատերի կարգին նաև մենք
 Նալրանդեանցի համախոհ եւ մտերիմ բարեկամ ու «Մեղու» թերթի
 խմբագիր Յ. Սվաճեանին ենք վերագրել այդ գրութիւնը մեր այն վի-
 պագիր կենսագրութեան մէջ, որ տպւեց «Հայրենիք» ամսագրի 1929-
 30 թ.թ. գրքոյկներում, «Մ. Նալրանդեանցի փոթորկալից եւ եղերա-
 կան կեանքը» խորագրով: Այժմ հաստատապէս եւ վերջնա-
 կանապէս կարելի է ասել, որ այդ նամակի հեղինակն էր Սերովբէ
 Թազուրեանը, որը Պոլսի Բարեգործական Ընկերութեան ղեկավար-
 ներից մէկն էր (տնօրէն ժողովի անդամ): Նամակի գրութեան պա-
 հին, Թազուրեանը գրաււած էր Փրանկ-մասօնական օթեակի կազ-

*) Երեսուց տարիներ յետոյ, ինչպէս գիտեմք, Պարսկաստանը իր աշխարհագրա-
 կան դիրքի շնորհիւ, դարձաւ այն յարմար երկիրը, որի վրայով հայ եւ ռուս յե-
 դափոխական հրատարակութիւնները Կովկաս եւ Ռուսաստան էին փոխադրւում:

կունինին անիշխանական համարողները, մոռանում են նախ որ 1862 թվին ինքը Բակունինը անիշխանական չէր տակաւին եւ ապա՝ անգիտանում են այն իրողութիւնը, որ «Երկրագործութեան» մէջ հեղինակը պարզապէս նպատակ չէ ունեցել ծանրանալու Թիւրքիայի քաղաքազատագրման վրա: Նալրանդեանը «Երկրագործութեան» մէջ գրում է եւ ընդգծում թէ՛ տեսական սահմանից չէ պիտոյ դուրս գանք այս անգամ». նոյն գրքում հայ հրապարակագիրը ակնարկում է այն մասին, որ մտադիր է մի այլ անգամ անդրադառնալ պետութեան խնդիրին. «տէրութիւնք ազդ չեն, - գրում է Նալրանդեանը, եւ տէրութեանց շահը ազգի շահի հետ բնաւ վերաբերութիւն չունի, քանի որ տէրութեանց կազմութիւնը այնպէս է, ինչպէս որ կան այսօր. Ի՞նչ է տէրութիւնը, այդ մասին մի ուրիշ ժամանակ»: Բաւական է ուղղութեան նւիրած կտորը, տեսնելու համար այն մեծ հաւատը որ տածում էր նա դէպի «ազգի կենսանորոգ եւ որոտնդոտ յարութիւնը» եւ որի «ներկան թշուա է եւ որի ստրկութիւնը եւ աղքատութիւնը պահանջում է զիմադրութիւն . . .

Հայաստանի ազատագրման հեռանկարը նա շղկապում էր ոչ միայն Ռուսաստանի այլ եւ բոլոր միւս բռնակալութիւնների դէմ արծարծող յեղափոխական շարժումների հետ: Նալրանդեանցը հակադէմ ճակատագրի յուժման մէջ: Դա երեւում է ոչ միայն նրա գրութիւններից, այլ եւ «Սենատական ցուցմունքների» ժամանակ նրանի հետ կապած Լեւոն Լուսինեան կողմը «Հայաստանի իշխանին»: Անցեալ դարի կէսերին երեւան էր եկած կասկածելի անցեալով եւ ներկայով մի ինչոր «Հայաստանի իշխան», Լեւոն Լուսինեան անուանութեան անւան տակ մի շարք բախտախնդիր ելոյթների էր դիմել: այդ բախտախնդիրը, Չէյթուեի սպասամբութիւնից շատ տարիներ պէս ուսհապատակ, ցարական բանակ, որոչ ոռճիկով եւ արտօնել, որ կրէ Լեւոն Ե.ի սահմանած Լուսինեան շքանշանը: Դրանից առաջ նա ուղարկում է ցարին մի անստորագիր բրօշուր Լուսինեանների տան մասին: Երկար է այդ բախտախնդիրի պատմութիւնը: Այսքաղի իր դեասպանից, որ ոռւս կառավարութիւնը, տեղեկանալով Փարիզի իր դեասպանից, որ «իշխանի մտաւոր ունակութիւնները որոչ խանգարում ունեն», մերժում է «իշխան»ի խնդիրը, որից յետոյ նա անց-

նում է Եւրոպա եւ, երկար տարիներ եւրոպական պետութիւնների դռները բախելուց յետոյ, յաջորդաբար արտաքուսում է Փարիզից, Լոնդոնից (մի ինչոր մութ գործի համար) եւ այլ տեղերից: 1860 թվին այդ «իշխան»ը նորից դիմում է ոռւս պետութեան եւ այս անթամ նոր կայսր Աղեքսանդր Երկրորդին: Իր դիմումը վերտառում է «Memorandum du Prince d'Arménie à S. M. I. Alexandre II, Empreur de toutes les Russie».

Ահա այս տեղեկագիրը աչքի առաջ ունէր Նալրանդեանցը «Սենատական ցուցմունքների» ժամանակ «իշխան»ի արած իր մերկացումներով: Նա կանգ է առնում նոյնպէս այն «չըջարեական»ի վերա, որ «իշխան»ը ուղղել էր 1862 թվին «Տաւրոսի սրտտեկտորի» պետութիւններին: Ըստ երեւոյթին՝ թիւրքահայ զաղութներում եւ յատկապէս Պոլսում առասպելներ էին տարածւած «Լեւոն Իշխան»ի անւան շուրջը: Դեռ 1861 թ. պատմում էին, որ «իշխանը» մտել է Կիլիկիա, հանրագրեր է կազմել Չէյթուեցիների ստորագրութեամբ, որոնցով դիմել է Նապոլէոն Գ.ին՝ հայկական Տաւրոսում ինքնավար իշխանութիւն ստեղծելու համար: Ասում էին դարձեալ, որ այդ վար իշխանութիւն ստեղծելու համար: Ասում էին դարձեալ, որ հանրագրերով «Լեւոն Իշխանը» ուղեւորել է Փարիզ՝ հաւաստիացնելու Նապոլէոն կայսեր, թէ Տաւրոսի լեռներում 70 հազար զէնք բուրնելու Նապոլէոն կայսեր կան, որոնք, Լիբանանի նման սպասում են ներու ընդունակ հայեր կան, որոնք, Լիբանանի նման ստողծրանսիայի «ադատարար» միջամտութեանը: Կային նաեւ ասողներ, որ հայկական «զահատաւանգի» այս բանակցութիւններն են հէնց, որ առիթ տւին Թիւրքերին 1862 թ. Օդոստոսին պաշարելու Չէյթուե, որի ցոյց տւած քաջարի զիմադրութեան հետ քաղաքական յոյսեր էին կապում որոչ խաւերի Հայերը: Նալրանդեանցը «Սենատական ցուցմունքների» մէջ բացատրական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի Հայաստանի ազատութեան անունով հրապարակ իջած այդ «չառլատանը» (Նալրանդեանցի խօսքերը), որին Նալրանդեանցը, համարում է նաեւ անգլիական հաշիւն ապրող բախտախնդիր: «Սենատական ցուցմունքներում» Նալրանդեանցը յայտնում է նոյնպէս, որ ինքը Լուսինեանի հրատարակած շրջաբերականի դէմ արդէն գրել է բողոքագիր եւ մտադրութիւն է ունեցել թարգմանել եւրոպական բոլոր լեզուներով՝ զգուշացնելու Եւրոպային եւ Հայերին «չառլատանի» արցասական վերաբերմունք ունէր ոչ երեւում է, որ Նալրանդեանցը բացասական վերաբերմունք ունէր ոչ միայն Լուսինեանի հանդէպ, այլ եւ կասկածով էր վերաբերում այս վերջինիս յետեւը թագնւած ոյժերին եւ ամենից առաջ անգլիական կառավարութեանը: Հակասանգլիական այդ վերաբերմունքը, ինչպէս

նեւին հին լեզուից խոսնելու, առանց դաւառական բարբառների, կամ
 օտար լեզուների աղբեցութեանց ստրկանալու: Բոլոր դաւառական
 բարբառների էական տարբերքը, որ իրենց ձեւով եւ կազմութեամբ ա-
 ւելի ընդունակ են կենդանի՝ ընդհանրութեան լեզու վրա պատուաստ-
 ւելու, պիտի ընկնին ճարտար հեղինակները քուրայի մէջ եւ այնտեղ
 քիմիարար միանալով պիտի դուրս գան, «ոչ որպէս թլպատութիւն կամ
 անթլպատութիւն, այլ որպէս նոր արարած»: Վէպում գործածւած մի
 քանի ոչ հարադատ հայերէն դարձւածքների առթիւ, Նալբանդեանցը
 երկարօրէն խօսում է լեզուների փոխադարձ աղբեցութեան փաստի
 մասին եւ ի միջի այլոց գրում է հետեւեալը. « . . . Կարելի՞ է խոր
 դործ դնելու: Մենք չենք ուզում երկար խօսել այս մասին, որովհե-
 տեւ մեզ համար աչքի յայտնի ճշմարտութիւնն է այս: Սակայն, չենք
 ասում, այլ մանաւանդ ընդդէմ ենք, որ աղբի լեզուն էլ աւելի ստոր-
 կանայ եւ ընկճել թուրքի աղբեցութեան տակ: Այս մասին շատ ցաւա-
 լի երեւոյթ տեսնում ենք Տաճկաստանի հայոց մէջ, որոնք տաճիկ
 լեզուն ստրկանալու համը հոտը տարել են: Աւելցուր սորա վրա եւ
 Փրանսիական լեզուի բաղդասութեան եւ ձեւերի աղբեցութիւնը, ո-
 կրքութեան անուշով ներս են բերում աղբի մէջ եւ խանգարում են լե-
 զուն: Մենք որ նոր լեզուն ինքնուրոյն ազատութիւն ենք քարոզում եւ
 հին լեզուի ձեւերից անկախութիւնը, որպէսզի ազատօրէն եւ ինքը ի-
 ընդ առի՞, որ ուշաբարձութեամբ կարող էինք քարոզել, որ այդ լե-
 զուն թուրքի կամ սատանայի ձեւերին ստրկանայ: Բայց երբ այս կամ
 մէջ, դորանից խրատներով, թէ վա՛յ, թուրքը որովհետեւ այսպէս է
 ասում, ես նորան չմանելու համար պէտք է որ դործ չդնեմ այդ ձե-
 կամեցածին պէս կարող է գրել եւ խօսել, ինչ ձեւ ուղէ դործ դնել.
 Բայց բոլոր ազգը չունի այդ ազատութիւնը. նա չի կարող ներկան ու-
 թանալով անցածի անունով ապրել: Այն ուղղութիւնը, որ առանց մի
 տում է բռնարարել, մենք հրատարակում ենք մաքուր եւ զուտ ֆա-
 նտիկոսութիւն: Նոր լեզուի մէջ գրեթէ բոլոր հին լեզուի նախադրու-
 թիւնքը դարձել են վերջապետութիւնք, ածականը անհոյժ եւ թուով ան-
 համաձայն, միշտ նախադաս դոյականից, յատկացուցիչը միշտ նա-
 խադաս եւ այլն եւ այլն, որ նոյնն է եւ տաճիկերէնի մէջ, եւ որովհետեւ
 այդպէս է, ուրեմն եւ պէտք է հին ձեւի տակ շարել եւ կապակցել,
 թէ եւ նոր հոլովներով, այժմեան հայի խօսքը: Բայց ժողովրդի ան-

կաջին ծանր է եւ անբնական, - ինձ ինչ փոյթ, - ես բուն հայերէն եմ
 խօսում. ժողովուրդը խանգարել է իր բաղդասութիւնը, նորա լեզուն
 ստրկացել է թուրքի բաղդասութեան . . . միայն լեզուն չէ, ինքը
 աղբն էլ ստրկացել է թուրքին. եւ լեզուից առաջ է ստրկացել: Բայց
 ի՛նչ խօսիս . . . »:

Դժբաղդարար մեր յօդւածի նեղ սահմանները մեզ թոյլ չեն տա-
 լիս ուրիշ հետաքրքրական մէջբերումներ անել Նալբանդեանցի այդ
 նոր յայտնարեւած «կրիտիկայ»-ից: Առենք միայն, որ վէպի առթիւ
 նա յարուցանում է մի շարք կարեւոր դիտողութիւններ եւ մտքեր,
 կապւած հայ հասարակական կեանքի հետ: Այստեղ էլ, ինչպէս նրա
 ուրիշ երկերում երեւան է դալիս դարձեալ Նալբանդեանցի լայն հե-
 տաքրքրութիւնը դէպի մարդկային կեանքի ու աղբային մշակոյթի
 բոլոր ճիւղերը:

Ինչպէս ասացինք, Ա. Յովհաննիսեանի հրատարակած հաստ հա-
 տորը երկու հաւասար մասերի է բաժանուած: Առաջինը պարունակում
 է Նալբանդեանցի անտիպ երկերը, իսկ երկրորդը՝ Ա. Յովհաննիսեա-
 նի ուսումնասիրութիւնը այն շրջանի (50-60ական թւականները) մա-
 սին, որը կապւած է Նալբանդեանցի հասարակական-քաղաքական
 մտքի զարգացման հետ: Այսպէս՝ նա մի առանձին գլուխ է նւիրում
 «Ռուսահայ աղբային շարժման եւ երիտասարդ Հայաստանին»: Նիւ-
 թերը քաղում է ուս «կենտրոնական դիւանից» (1862-65) այլ եւ այն
 ժամանակէն ուս պահպանողական եւ կիսապաշտօնական «Մոսկով-
 քի վէպում» օրաթերթում հայերի դէմ յարուցած բանակուից:
 Երբ վաթսուներկան թւականների սկզբներին դուրս եկաւ Սմբատ Շա-
 հապիզի «Լեւոնի վիշտը» պօէմը, ուս կառավարութիւնը դադարի նա-
 մակով դիմեց իր հայ պաշտօնեաներից կարապետ Եգեանին եւ խնդրեց
 նրա բացատրութիւնները այդ պօէմի առթիւ: Ռուս կառավարութիւնը
 ստացել էր մի դադարի նամակ, «Յարի եւ հայրենիքի հաւատարիմ»
 ստորագրութեամբ, որը ըստ երեւոյթին Նալբանդեանցի ոխերիմ թըշ-
 նամիների՝ Սալբ-Այվադովսկի խմբակի մարդկանց գործն էր: Նա-
 մակը հրաւիրում էր միեւնոյն ուշադրութիւնը Ս. Շահապիզի նոր լոյս
 տեսած «Լեւոնի վիշտը» պօէմի վրա: Գրութեան հեղինակը յայտնում
 էր, թէ պօէմի մէջ կան կառավարութեան դէմ ուղղւած ակնարկներ:
 Պօէմը դրատում է իտալական եւ լեհական ապստամբութիւնները (չը-
 մոռնանք որ 1863 թ. Լեհաց ապստամբութիւնը ուս կառավարու-
 թեան դէմ, արեան մէջ խեղդւեց), ներշնչում է հայերին քաղաքական
 ազատութիւն նւաճելու միտքը եւ այլն: Պօէմը ուղղւած է նոյնպէս
 կրօնի, հաւատքի, եկեղեցականների եւ նրանց ծիսակատարութիւննե-

ստեղծանում էին եւ պարզուում էր, որ գնում են: Իսկ երբ վրա հասանք, մեր առջեւ ճամբայ բացին հեւ ի հեւ քայլող մի քանի հարիւր տարազիրներ: Սայլերը զգալապէս դանդաղեցրին իրենց ընթացքը. ճանապարհը տեղ-տեղ դեռ բռնած էր տարազիրներով: Չարձամբայի շրջանի դիւղացիութեան մի մասն էր, որ դեռ լոյսը չբացած ճամբայ էր ընկել Չախալիից եւ գնում էր մի քանի հեծեալ պահակների հսկողութեան տակ: Ճանապարհի ուղղութեամբ նրանք խումբ-խումբ, համր ու ուշադիր, քայլում էին: Ուռած, կարմրած, կեն-խումբ, համր ու ուշադիր, քայլում էին: Նրանց չէին հետաքրքարոնացած դէմքերից ծորում էր քրտինքը: Նրանց չէին հետաքրքրում անցնող սայլերը: Թէ՛ մեր եւ Թէ՛ իրենց երթը կարծես թէ բռնական եւ հասկանալի մի բան էր: Փոքրիկները մի պահ կանգ էին առնում եւ ցրիւ հայեացքով վերէն -վար չափում էին անցնող սայլերի շարքը: Խմբից-խումբ կային յետ մնացած տարազիրներ, որոնք արդէն իսկ դժուարութեամբ էին քայլում: Ոմանք կաղում էին եւ մէկ կամ միւս ոտքը փաթաթել, կապել էին բղբուած լաթերով: Ոմանք էլ քայլում էին ուրիշների օգնութեամբ: Ծծկերները մեծ մասամբ թառած էին մայրերի շալակին. իրենց ծալծլած տեսքից երեւում էր, որ քնած են: Այստեղ ու այնտեղ պատահում էին անասուններ՝ եղ, հորթ, այծ, որոնց թէ՛ քաշում, թէ՛ զընում էին: Կարաւանը երբեմն «քոչւորները» տպաւորութիւն էր թողնում, բայց սրանց յատուկ աղմուկ, իրարանցում չկար: Մի խմբի յետեւից, ճամբու եզրով, մեն մենակ քայլում էր մի դեռատի կին. կռնակին կապել էր երկու-երեք տարեկան դանդաղահար մանկիկը. մէկ ձեռքում ունէր մի փոքրիկ կապոց, իսկ միւսով բռնել էր հինգ-վեց տարեկան տղեկի թաթից եւ բարկացած քաշքշում էր իր հետ: Փոքրիկը թէեւ չէր լաւիս, բայց պարզ էր, որ չէր ուզում գնալ: Մայրը կանգ առաւ: Նանախատում կամ համոզում էր փոքրիկին: Տղեկը կարծես թէ համոզւեց. ահա նա, բաղի պէս աջ ու ձախ օրօրելով, քայլում է, մէկ ոտք յետ մնալով մօրից: Բայց երկար չտեւեց այդ եւ ճիշդ մեր սայլի մօտ տղեկը ծունկի եկաւ ու նստեց: Շատ տարիներ են անցել, բայց դեռ թարմ է յիշողութեանս մէջ այդ կնոջ մեզ ուղղած հայեացքը. նրա աչքերից կրակ էր թափւում, այլ եւ ցատում՝ յանդիմանութիւն ու ծայր աստիճանի յուսահատութիւն . . .

Շշմած այդ տեսարանից, դարձայ Գարեգինին եւ առաջարկեցի որ մեզ մօտ առնենք փոքրիկը:

— Մեզնից չի կախւած, դառնութեամբ պատասխանեց նա ու անցանք:

Վերջապէս ոտաւորների թափօրի ծայրին հասանք. առջեւից

յամբաքայլ գնում էր մի հեծեալ ոստիկան, որ կարծես թէ քնած էր . . .



Հասնելով դիմացի վերելքի ծայրին, մենք վար սահեցինք առջևից ընթացող սայլերի յետևից: Աջ եւ ձախ կողմերից երբեմն յայտնուում էին խրոխտութեամբ արշաւող ոստիկանները, որոնք մերթ յետ ու մերթ առաջ էին ընկնում: Սայլերի շղթան ծուռում էր, թեքում, օձի պէս ծալլելով, ապա կրկին շտկուում էր ու ճարահատեալ շարունակում էր առաջ գնալ: Մէկ-երկու վայրկեան եւս՝ եւ ահա խախտեց կարգն ու կանոնը. սայլապանները մըցման մէջ մտան: Եւ բազմաթիւ սուլոցներ, ոռնոց ու դղրդոց, շխշխկոցներ ու հարահրոցներ իրար անցած՝ մեր շուշը ստեղծեցին դժոխային մի տակնուվրայութիւն: Մեր յամր ու հանդարտ սայլապանը նոյնպէս համակել էր ընդհանուր տրամադրութեամբ: Ուլ գիտէ, գուցէ հին սայլապանի հպարտութիւնն էր խօսում նրա մէջ: Սայլ-սայլի յետեւից՝ նա յաղթահարում էր միւսներին ու առաջ անցնում: Մեր առջևից այժմ ընթանում էր կոյսերի սայլը: Թւաց, թէ պիտի անցնիք եւ նրանց, բայց ճանապարհը գնալով սեղմեց եւ մենք մնացինք այդ սայլի յետեւին փակած: Կոյսերից դեռատին նստած էր դէպի առաջ եւ ինչոր իրարանցման մէջ էր: Նա ձեռքերով ծածկել էր դէմքը եւ նստած տեղը ճօճուում էր: Տարիքոտ կոյսը թեքել էր դէպի սայլապանը եւ նրա հետ ընդհարման մէջ էր: Յանկարծ դեռատին վար առաւ դէմքից ձեռքերը եւ մի սուր ճիչ արձակեց: Ես նստած տեղից վեր ելայ ու տեսայ . . . սայլապանը մտրակում էր ձիերը, եւ, ջուլնտի յետ պառկելով, ընկնում էր դեռատի կոյսի ծնկերին: Միւսը ուզում էր իր ընկերուհուն յետ քաշել, բայց սայլապանը, վերջինի զիստերը գրկած, քաշում էր դէպի իրեն . . . Նոյն այդ պահին սայլերը փախչում էին կատաղութեամբ եւ թւաց, թէ կոյսերի սայլը ճամբու եզրին պիտի շրջի: Սակայն կառապանը յանկարծ շտկեց եւ, ձիերը թեքելով հակառակ ուղղութեամբ սանձեց: Ճանապարհը այդ մասում բաւականաչափ նեղ էր եւ այնքան բարձր էր դաշտից, որ հարկադրեց կանգ առնել նաեւ մեր սայլանացանը: Իսկ մեր յետևից իրարու զարնելով կանգ առան նաեւ մըք պոկւած, դեռ ընթանում էր առջևում, բայց քիչ վերը կանգ առին նաեւ նրանք: Սոսկայի իրարանցում սկսեց: Ամէն տեղից աղաղակներ լսեցին: Անտեղեակ դէպքի պատճառին ու խնդրին, հասարակութիւնը կորցրել էր իրեն: Միաժամանակ կառապանները հայհո-

յում էին միմեանց: Մի քանի հոգի քաշքշում էին կոյսերի գածած սայլապանին, երբ վրա հասան պահակները: Տարիքոտ կոյսը սայլից իջել էր եւ լալով պատմում էր դէպքը պահակներից մէկին. միւսը սայլի մէջ դէմքով ընկել էր դիմացը եղած կապոցի վրա եւ անձայն ցնցուում էր: Երկար չտեւեց խնդիրը. ոստիկանը խիստ ըսպանալիքներով վար տարաւ գածած սայլապանին ու մի ուրիշին բերելով՝ կոյսերի սայլը յանձնեց նրան . . .

Մերեւր փայլում էր ուղղահայեաց, երբ դանդաղութեամբ սկըսեցինք քերել սարերի լանջերը: Մօտենում էինք Կաւախին: Դեռ ընդամէնը երկու օր առաջ ամէն մի սամսոնցու համար այս դաւառական քաղաքի հետ կապւած էին հազար ու մի ակնկալութիւններ. ոմանց թուում էր, թէ այնտեղ պիտի մնան. ոմանք յոյսեր էին կապում «հայասէր» Բեքիր-փաշայի հետ, որը այժմ այնտեղ էր, իր պում «հայասէր» Բեքիր-փաշայի հանդատի, ինչ որ անստոյգ ծննդավայրում. ոմանք էլ մթերքի, հանդատի, ինչ որ անստոյգ միջնորդութիւնների հաշիւներ էին անում: Սակայն առաւօտից արդէն պարզ էր, որ բոլոր ակնկալութիւնները օդն են ցնդել:

Հազիւ տասը հազար շունչ կազմող այս գաւառական քաղաքի բնակչութիւնը բաղկացած էր բացառապէս թուրքերից: Կային շատ քիչ թուով յոյներ: Խորտուրորտ, փոշոտ փողոցի երկու ուղղութիւնները ստանում էին անհաշիւ թուրքեր: Լուռ, անկաթեմբ նստած ու կանգնած էին անհաշիւ թուրքեր: Լուռ, անկաթեմբ սայլերը: Մի ներկայանալիք շէնքի սուրճ էն խմում, նշանակալից մի քանի մարդիկ. նրանցից ոմանք սուրճ էն խմում, նշանակալից մի քանի մարդիկ. նրանցից ոմանք սուրճ էն խմում, նշանակալից մի քանի մարդիկ: Մի քիչ անդին, դէպի վար երկարում էր մի կում է, սրճարան էր: Մի քիչ անդին, դէպի վար կանգնած էին կանարէն: Աջ, ձախ հողածածկ տանիքների վրա կանգնած էին կանարէն, աղջիկներ, անխնամ պարուրած չարաֆների մէջ: Կիսամերկ թուրք փոքրիկներ, սայլերին ընկերացած, անհանդարտ ու աննպատակ, վաղվում էին: Ընդհանրապէս մեր առջև պարզող տեսարանները, կարծես թէ, մեզ նորից վերադարձնում էր կեանքին: Սակայն վերջացաւ . . .

Սարի լանջից սահելով իջնում էինք անդադար: Մէջ ընդ մէջ պարզում էին չորացած, դեղնած մարդադետիւններ: Դիմացը, հեռուում երեւում էին կարատաղի լեռները: Այնքան արագ վար լեռները: Քիչ յետոյ սայլերը կանգ առին. ոտքով պէտք էր անցնէինք ներք: Եւ այնտեղ պարզեց մի սրտաշարժ տեսարան, որ դժար լեռները: Եւ այնտեղ պարզեց մի սրտաշարժ տեսարան, որ դժար է մոռանալ: Վերջին մի շարաթւայ ընթացքում, տարբեր քարանդակ սարաների մէջ արգելափակւած ազգականներն ու բարեկամները նորից գտնում էին իրար: Կանայք լալով փաթաթում, հարցուփորձ

էին անում միմեանց եւ այնպիսի մի ձեւով էին պատմում իրենց քա-
շածնների մասին, որ կարծես, թէ մեծագոյն թշուառութիւնը արդէն
անցել էր . . .

Ինձ համար բոլորովին աննկատելի կերպով առաջ անցայ: Հա-
կառակ վրաս եկած թուրութեան, թուամ էր, թէ անվերջ կարող եմ
քայլել: Հազար ու մի հին ու նոր վերջիշումներ անցնում, դառ-
նում էին գլխիս մէջ . . . Վերը սարի դադաթին կանգնած էին եր-
կու հեծեալ ոստիկաններ: Արեւի ճառագայթները խաղում էին նը-
րանց թեւերից կախած հրացանների փողերին: Լերկ լեռները տեղ-
տեղ ծածկւած էին մացառներով, թփերով: Այստեղ այնտեղ երե-
ւում էին, որպէս հրդեհից զերծ մնացած, մեծակեաց ծառեր: Ծա-
նապարհը գնալով շրջում էր: Աւելի վերը, երկու լեռնադադաթներ
ճանապարհի լայնութեամբ, միացւած էին տախտակէ հասարակ
կամուրջով: Գոմնտի մի նեղ ու անբանուկ արահետ տանում էր
դէպի մի անմարդաբնակ շէնք, որը երեւի լքւած հանգստակայան
էր: Լեռներից հոսող հեղեղատները, ժամանակի ընթացքում, փո-
րել, փորփրել էին լեռնադադաթների լանջերը ու ճամբայ էին բա-
ցել: Կիրճն այնքան խորն էր, որ ներքեւի վճիտ վտակը նման էր
վար ընկած պսպղուն գոտու: Տեղ-տեղ վտակը պատսպարւել էր
գունաթափ եղած մացառների տակ: Կամուրջի աջ կողմից, վերէն -
վար, բացւած էր Ե-7 մետրի լայնութեամբ մի անդունդ: Ուղիղ
վար, մի սալ քար, խճաքարերով պարուրւած, կազմել էր բլրակ:
Անբացատրելի ազդեցութիւն ունէր այդ անդունդը վրաս: Գամուած
մնացել էի կանգնած տեղս. կարծես, թէ ինձ յուզող բոլոր հարցերի
լուծումը այստեղ էր: Որքան մնացի կանգնած, չգիտեմ ու, յան-
կարծ, սարսուռի մի ուժգին հարւած ցնցեց ինձ, ծնկներս ընդար-
մացան . . . Յետ քաշւեցի ու անցայ, բայց ուժերս արդէն հատել
էին. սիրտս բարխում էր, ոտքերս առաջ չէին գնում: Կամուրջից
դուրս, մի քանի քայլ անդին նստեցի: Վարը ցրւած հասարակու-
թիւնը, սարի լանջն ի վեր, կարծես թէ չորեքթաթ էր տալիս . . .

Գիմացի ոլորտի ծայրից, անսպասելի կերպով, դուրս ընկա-
կը ինձ վարմանք պատճառեց: Ուշն ու միտքը վրաս էր. կամուրջն
անգամ չնկատեց. շնչայեղձ էր եղել:

- Ահա՛, թէ ուր էք . . . ելէք, երթանք, հասնինք զազա-
թին . . . Յոգնեցա՞ք . . . կը նայիմ հոս, կը նայիմ հոն՝ չկաք . . .
- Ողբարիկը գիտէ՞, որ եկար, Տիգրան:
- Գիտէ՛, գիտէ, ինձի ըսաւ, թէ հոս էք, արտօնեց, որ գամ . . .

Օ՛, ինչ բարձր է հոս . . . Միւսիւ Վահան, Թոռամանը կը յիշէ՞ք .
կը յիշէ՞ք Կարա-Սամսոնի է՛ն բարձր բլուրը, որ վաղէվազ կեղնէ-
ինք ու գլտորւելով կիջնէինք . . .

Տիգրանը բոլորովին մոռացել էր, թէ ուր ենք, բայց պատաս-
խան չստանալով լրջացաւ ու լռեց:

Հասարակութեան առաջին խմբերը մօտենում էին ոլորտին: Նը-
րանցից վար մարդ, կին, ծեր, երիտասարդ մագլցում էին դեռ: Ա-
ւելի վար սայլերը կիսակլոր պատի պէս երեւում էին:

Տիգրանի խոնաւ թաթիկն առի բոլիս մէջ, բայց ինչ ասելու չէ-
մացայ:

— Միւսիւ Վահան, իրնամ հարցնել, թէ մինչեւ ո՞ւր պիտի եր-
թանք:

- Մինչեւ . . . Մալաթիա:
 - Աղբարիկը կըսէ՝ մինչեւ Կազա:
 - Մալաթիան վերջին կէտն է . . .
- Տիգրանի վերջին հարցումը եղաւ այդ. նա սեւեռարիք դիտում
էր ստորեւ տարածւած անդունդը:

**

Մարդիկ սկսեցին հասնել մեզ: Նրանք մի պահ կանգ էին առ-
նում կամուրջի վրա եւ շար հայեացքով վեր-վար նայելով՝ շնչում
էին բերանարաց ու ապա քրտնաթոր շարունակում էին գնալ: Ինքն
ու ճանապարհը - այս էր, կարծես թէ, աշխարհի եւ իր գոյութեան
խորհուրդը:

Վերելքի ծայրին ճանապարհը ոլորապտոյտ թեւում էր դէպի
հարաւ: Ելանք սարի դադաթը: Մեր առջեւ բացւեց մի քարավէժ
լեռնադաշտ: Հասնող մարդիկ շնչասպառ ոտաւորներին՝ մօրը, ման-
Մտքերով անցել էի մեր յետեւը մնացած ոտաւորներին . . . Տիգրանը
չուկին, նրանց մէջ եղած ոտարոպիկ փոքրերին . . . Տիգրանը
լուռ, մտադրաղ եւ ուշադիր դիտում էր վարը յայտնող խմբերը.
երեւի փնտրում էր իւրայիններին: Երբ մեզ մօտեցաւ Պարունակը,
յարմար առիթով խնդրեցի, որ այլեւս չթողնի, որ Տիգրանը ինձ
մօտ գայ: Վերջապէս հասան նաեւ սայլերը ու շարքով տեղ բռնե-
ցին ճանապարհի երկայնութեամբ: Կոյսերը, Ալթունեանները,
միւսների նման, հասան իրենց սայլերի հետ միասին: Յուսահատա-
կան էր դեռատի կոյսի դրուժիւնը. սայլապանների մի խումբ հը-
րափառ աչքերով, փսփսուքներով վերէն-վար գննում էին նրան:
Ըստ երեւոյթին, փրկութեան եւ ոչ մի յոյս կար կոյսի համար: Ե-
րեւի նա զգում էր այդ. իր քայլւածքը մահաւան դատապարտւածի

— Է՛ . . . Է՞ :

— Մեզ բերին մինչեւ այստեղ ու չգիտենք, թէ ուր են տանում . . .

— Միտքդ ի՞նչ է, փափա՛ղ :

— Հիմա խնդրում ենք, որ մեզ յետ ճամբէք Կաւախ, մինչեւ մեր հարցը պարզւի, որովհետեւ մենք կաթուղիկ ենք եւ, ինչպէս արդէն ասացի . . .

— Կաթուղիկ լինելնիդ հասկացանք, ի՞նչ միլլէթ էք, ա՛յն ասա : Լուսթիւն տիրեց : Տէր-հայրը կարկամած նայում էր . . .

— Է՛ . . . Է՞ :

Պարզ էր, որ չի ուզում պատասխանել :

— Հա՞յ էք, թէ չէ՛ . . .

— Հա՛յ ենք, յանկարծ գոչեց տէր-հայրը :

— Դէ՛ որ հայ էք, հայտէ՛ . . . բոլոր ուժով գոռաց ոստիկանը :

Տէր-հայրը մի պահ կանգնած մնաց. աչքերից կրակ էր թափուում, չըթունքները դողում էին : Ապա յանկարծ նա դարձաւ եւ արագ քայլերով անհետացաւ բլուրից դէպի վար : Իւրայիները ցրեցին : Լուսաւորչական հայերից ոմանք միմեանց աչք թարթեցին, ժպտացին :

**

Պահակատանը մօտ երկու ժամից աւելի մնացինք : Ասում էին, թէ սայլապաններն ու ձիերը պէտք է հանգիստ առնեն : Սակայն ձրգձրգումները գնալով մտահոգելի էին դառնում. մարդիկ վախենում էին, որ դիշերը կարող են մեզ այդտեղ պահել. դիմացի անյայտութիւնը ներկայի համեմատութեամբ աւելի տանելի էր թւում :

Արեւն արդէն բաւական թեքւել էր, երբ հրաման տւին շարժելու : Պահակատանից անվտանգ ճամբայ ելնելը բոլորի վրայ բարերար աթիւնանում : Թւում էր, թէ միայն դաղթով է սահմանափակելու նեն ու չլինելն անստոյգ էր, անորոշ եւ դրա համար էլ յուսատու : Միւս կողմից կասկած չէր մնում, որ մեզ վար են դնելու Կաւաչում, ուր, իբր թէ, սպասում էին նոր կարգադրութեան մի օր առաջ Չախալից մեկնած տարազիրները . . .

Ձիերը, քիչ-չատ կազդուրւելով, գնում էին աշխուժով, գլխի վրա կոնաձեւ դարձնելով ականջները : Ծանապարհը շարունակ իջնում էր : Աջ կողմից այժմ երկարում էին տարածուն եւ խիտ մացառ-

ներ : Չախ կողմից՝ քարքարուտներին յաջորդում էին մարդեր, դաշտեր, հովիտներ : Մօտենում էինք Կաւաչին :

Կաւաչ քաղաքը մեծ չէ, բայց յայտնի է իր հանքային ջրերով : Սամսոնցիներից ունեւորները ամրան ամիսներին դալիս էին այստեղ օդափոխութեան, բուժելու : Այժմ տարազիր հայուժեան կարաւանը կանգ էր առել այդ քաղաքի առաջ, իսկ տեղական իշխանութիւնները հրաժարւում էին ներս առնել, իբր թէ, տարափոխիկ հիւանդութիւններից վախենալու պատճառով . . . Որքան մնացինք այդտեղ կանգ առած՝ չեմ յիշում : Գիտեմ միայն, որ արեւը վաղուց արդէն մայր էր մտել : Կաւաչի ոստիկանութիւնը անընդհատ գնում դալիս էր, շարքով կանգնած սայլերի բովանդակ երկարութեամբ : Երբեմն յայտնւում էին բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք կանգ են առնում այս կամ այն սայլի մօտ եւ հարցումներ ուղղում արքունիկին : Ենթադրւում էր, թէ այդ անցուղարձը ի դուր չէ. երբեւի ուզում էին համոզւել, որ մարդիկ միայն հիւժւած, լքւած են ու քաղաքում ընդունւելու համար «վարակիչ հիանդութիւններից» վախ չկայ . . .

Այդ նոյն ժամին, ճանապարհից դուրս, դաշտի վրա, մեր առջեւ պարզեց մի անսովոր տեսարան. քաղաքից իջել էր մի թափոր, որի առջեւից գնում էր մի փոլիս. չորս ուրիշ մարդիկ, պատգարաբակի վրա դրած, տանում էին սաւանով ծածկւած մի դիակ : Անշուք մեծ որդին եւ կինը : Նշան էֆ. մեռել էր . . . Տեղահանութիւնից յուղարկաւորութեան թափորը կազմում էին Նշան էֆ. Չատրճեանի փեր Սամսոնի՝ ցրիւ համայնքի կեանքում առաջին մահն էր այս : Համայնքի բնական նահապետը մեռել էր եւ թաղման պատուի էր արժանացել՝ իր մեծ մարդասիրութեան եւ թուրքերի մէջ ամեն տեղ ժամանակ իր մեծ մարդասիրութեան շնորհիւ . . . Նախախնամութեանցած իր անհաշիւ բարեկամների շնորհիւ մասը, աներեթիւնը ցանկացել էր, որ հայ համայնքի սոււարագոյն անդամի թաղման ւակայի մի ձեւով, ներկայ լինի իր աւագագոյն մարդիկ վար էին անշուք թափորին : Արդար էր : Եւ սայլից-սայլ մարդիկ վար էին առնում Փէսերը, կանգնում, ծունկ չոքում, մինչեւ որ անցնում էր թափորը : Սայլերի երկար շարքի մէջ եղած մարդկանց համար ու սեւեռաբեր տեսքը այդ տարօրինակ յուղարկաւորութեան տալիս էր մի ուրոյն շուք : Արտակարգ էր տեսարանը, խորհրդաւոր ու կանխագորդ, եւ ամէն մարդ, ըստ երեւոյթին, զգում ու գիտակցում էր այդ . . . Յուղարկաւորութեան թափորը վաղուց անհետացել էր, երբ յանկարծ ինձ մտքերից սթափեցրեց Գարեգինը որ լայն ժպիտը դէմքին անապարանքով ասաց . . .

— Նայի՛ր, նայի՛ր, տես ինչպէս է կոտրուում . . .

րեց եւ կարծես թէ անդունդն անցանք: Անիւների խզոցից հասկանում էինք, որ դաշտի մէջ ենք: Աջ, ձախ, յետ, առաջ մթութեան մէջ թանձրանում էին բազմաթիւ սուերներ: Կանգ առանք:


Էլէկին մի դաշտ է: Համատարած խաւարի մէջ ուրիշ ոչինչ յայտնի չէր: Կարգադրում են բեռները վար առնել: Ամէն մարդ անխօս ենթարկւում է: Պարզւում է, որ լուսաբացին սայլերը պէտք է յետ դառնան: Եւ ամէն մարդ սայլապաններին վճարում է այնքան, որքան նրանք պահանջում են: Տեղ բռնելը, գոյութեան նոր պայմանները հասկանալը այնքան հրատապ ու հրամայողական էր, որ բոլոր մնացած հարցերը արժէքազուրկ էին եղել: Եւ դաշտը համակել էր իրարանցումով. մարդիկ քաշքշում էին իրերը, մի-մի կապոց առած վազվզում էին դէս ու դէն, յետ դառնում եւ յուզւած կանչում միւսներին: Այս իրարանցման միանում էին ձայները սայլապանների, որոնք դաշտն ի վար ճամբայ էին բացում, ձիերին հանգիստ տալու համար: Միաժամանակ, դաշտի ընդարձակ տարածութեան վրա, իրարու յետեւից յայտնւում էին մոմի եւ թիթեղէ ճրագների բեկբեկւող լոյսի լեզակներ: Մեր յետեւում, աղօտ լոյսերի տակ, նշմարւում էր մի շէնք, դէպի ուր ուղղւում էին շատերը: Գարեգինն ու Տիկին Ռեբեկան մի-մի կապոց առած հետեւեցին նրանց: Բայց շուտով յետ դարձան: Պարզեց, որ շէնքը մի խարխլած քարանսարայ է, որը արդէն յեցած է մարդկանցով: Տեղ բռնեցինք այդ շէնքի պատի տակ, ուր արդէն գաբուցրիւ տեղաւորւած էին ուրիշները: Այդ գործի մէջ մեզ բաւականաչափ օգնեց Արմենակ Քէչէճեանը, որ վերջին դասարանի սաներից էր. արդէն պատի տակ տեղ բռնելու հնարաւորութիւնն էլ պարտական էինք նրան: Քէչէճեաններից բացի, մեր անմիջական հարեւաններից յիշում եմ նաեւ Հիւսիսեաններին՝ կնոջը, մանչին, աղջկան: Կարապետ էֆէնտին, պատերազմի նախօրեակին, մեկնել էր Բաթում քեռայրիս հետ, որ Բագււից մի քանի օրով եկել էր ինձ տեսութեան:

Դաշտը այժմ լուռ ու հանդարտ էր: Դիմացի անհաշիւ, բեկբեկւող լոյսերից մեղ բաժանում էր մի խաւար գօտի, որ երեւի, ճանապարհ էր եւ տեղ բռնելու համար խորտուրորտ ու անյարմար: Չարմանայի էր, կարծես թէ մթութեան մէջ յիլւած, քարացած հարսանիքի թափոր էր . . .

Պատի տակ նստած աշխատում էի յաղթահարել ինձ համակող թմրութիւնը: Բայց էլ ուժ չկար: Տիրական մի քուն նւաճում էր ինձ:

Կուսրի պէս սեւ երկնքում փայլում էին աստղեր: Դաշտում տիրում էր աստածային անդորրութիւն: Դիմացը հորիզոնաձեւ տարածւած լոյսերը մարում, անհետանում էին: Թւում էր թէ միաժամանակ չըքանում են նաեւ լոյսի մօտ եղած մարդիկ: Որքա՞ն տարօրինակ էր այդ ամենը: Կարծես թէ մէկ լոյսը առանց միւսի չէր կարող վառ մնալ: Մի պահ նրանք նւազեցին այնքան, որ կարելի էր համբել: Ապա համատարած խաւարը թաղաւորեց ամեն տեղ: Ով ուր էր արդեօք . . .

(Շարունակելի)



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՏԱՐՈՆԻ ԱՇԽԱՐՀԸ

VII

ԲԵՐԴԱԿԱ ՍԱՐԸ ԵՒ ՍԱՍՈՒՆԸ

Արշալոյսը բացւած էր, երբ հեւ ի հեւ հազիւ մեզ ձգեցինք Բերդակա սարը ու տեղաւորեցանք հեղեղատի մը մէջ: Հոն դաջի, որ դեռ հիւանդ եմ - բոլորովին ուժէ ինկած էի:

Մշոյ սքանչելի դաշտը մանիչակ մշուշով պարուրւած՝ կը քնանար կարծես: Մեղրագետը եւ աւելի հեռուն Եփրատը՝ պսպղուն երկու երիզներու նման, մանիչակէ Փոնի վրա, ձգւած էին դաշտի մէջ ծայրէն միւսը: Դուրանի գիւղերը կապրէին դեռ . . . իրենց վերջին սեօրերը:

Կէսօր էր, երբ լերան ստորոտէն դէպի մեզ սկսան բարձրանալ քանի մը հողի: Շալակաւորներ էին որ ճաշ էին բերած: Բերդակցի Օսկիանն էր անոնց առաջնորդը: Իրական ուխտեալներէն էր հնաւուրց այդ մարտիկը դեռ Արապոյի, Սերոբ-Աղբիւրի օրերէն: Կարճահասակ, քիչ մը կաղիկ, նիհար, սուր պսպղուն աչքերով 40-ի մօտ մարդ մըն էր, որ անցած էր շատ կրակներէ ու գնդակներէ եւ այժմ ամէն ինչի վրա փիլիսոփայօրէն կը նայէր: «Ինչ որ դրած է գմեր ճակտին, զէն կեղնի» - այս էր անոր դաւանանքը ամենածանր վայրկեաններուն:

Կարծեմ մեր խումբը տաս հողիէ էր բաղկացած: Մաթէոսն էր անոր ղեկավարը: Մեր յեղափոխական պատմութիւնը, բազմաթիւ այլ հազարադիւտ դէմքերու հետ, շատ քիչ բան արձանագրած է անոր մասին:

Յաղթանդամ մարդ մըն էր, բայց մանուկ մը: Ռուսական զինուորութիւն էր ըրած, իսկ հետադային Քրիստափորի աշակերտը դարձաւ եւ կատարեց ահաբեկում մը «Փոթորիկ»ի հրամանով: Ատկեց

*) Հ. Յ. Իաշմակց. անաբեկչական մարմինը.

ետքը աքսորեցաւ Սիւլիբ, ուրիշ փախաւ եւ եկաւ Վասպուրական՝ ծառայելու յեղափոխութեան: «Օսմանեան Սահմանագրութեան» չը հաւատաց: Զաւարեանին հետեւեցաւ դէպի Տարօն եւ հոն մնաց, իբր համեստ զինուոր ու գործիչ: Վերին աստիճանի բարեկէլիթ, մեղմ ու զիւրաբեկ իր զգացումներուն մէջ՝ մոլեռանդօրէն նւիրւած էր Դաշնակցութեան: Դաժան էր ու անդիշող մեր աւանդութիւններու ու ըսկզբունքներու պաշտպանութեան մէջ, միամիտ ու բիւրեղ՝ իր նկարագրով:

Փախուստիս լուրը անմիջապէս տարածեցաւ դաշտի եւ լեռներու մէջ ու թողեց բարոյալքիչ ազդեցութիւն մեր ժողովուրդին վրա: «Կացութիւնը յուսահատական է ուրեմն, որ պահանջուի», - կը հետեւցնէր ժողովուրդը իրաւացիօրէն, որովհետեւ այլ եւս ոչ ոք կը մնար, զէթ երեւոյթները փրկելու համար: Բացայայտ թշնամական վիճակ ստեղծեցաւ մահմետականներու եւ կառավարութեան հետ: Այս հոգեբանութիւնը վարակեց մանաւանդ յեղափոխական մարտիկները, որոնցմէ շատերը զէնքերնին առած լեռը եկան: Մաս մը անոնցմէ յաջողեցանք վերադարձնել, իսկ շատերը մնացին եւ հետամնացին Սասուն կանչեցան:

Մուշէն հեռանալէս յետոյ, Կօտոյի Հաջին, Տիգրանը եւ ուրիշ ընկերներ, հազիւ ժամանակ ունեցած էին քաղաքի զինական ուժերը քիչ շատ կարգի բերելու: Դաշտի գիւղերը ձգւած էին իրենց ճակատագրին: Կազդուրելէս վերջ միայն զգացի թէ ի՞նչ ահաւոր սխալ մը տաղբին: Կազդուրելէս վերջ միայն զգացի թէ ի՞նչ ահաւոր սխալ մը դործած էի՝ ձգելով քաղաքը այդ ծանր օրերուն եւ քաշելով լեռներու ծերպերը: Ի հարկէ միտքէս չէր անցած երբեք կեանքս փրկելու (ինչ որ երբեմն կը գրւի): Տեղական ընկերներուս մտահոգութիւնն եղած էր թոյլ չտալ որ ձերբակալեն զիս եւ յուսալքեն ժողովուրդը, մինչդեռ լեռ բարձրանալովս բողոքի ցոյց մը ըրած կըլլայի կառավարութեան դէմ եւ նախազուշացում մը՝ մեր ժողովուրդին համար: Այս մտահոգութեամբ կը պնդէին որ հեռանամ: Պլլւած հնամաշ անձրեւանոցիս մէջ (միակ իբր որ դուրս բերի Մուշէն եւ որը սանձրեւանոցիս մէջ) հողեպէս կը տառապէի, խղճիս առաջ ցաքարերու ու հողերու մէջ) հողեպէս կը տառապէի, խղճիս առաջ ցալիօրէն յանցաւոր:

Հազիւ 10-15 օր էր անցեր փախուստէս, երբ Օսկիան օր մը նամակ մը յանձնեց ինձի, զոր հայ կին մը բերած էր Մուշէն: Մուշի քիւրտ մէպուս Հաջի Իլիասէն էր, մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ. - «Այս ծանր օրերուն, երբ հայրենիքը վտանգի մէջ է, պէտք է որ ինձի ու քեզի պէս նւիրւած մարդիկ, ձեռք-ձեռքի տըլած, աշխատին. ամօթ է փախչել ու լեռ ելնել աւազակի մը պէս»:

գիտեմ, գէշ մարդիկ միտքդ պղտորած են. վերադարձիր անմիջապէս. մի կասկածիւր երբեք, գլխովս կերաշխաւորեմ. միւթէսարըՔը իր յարգանքը միշտ կը պահէ քեզի հանդէպ» . . . : Հաջի Իլիասին, նոյն ճամբով պատասխանեցի. դրեցի իրեն թէ՛ միւթէսարըՔի եւ իրեն պատրաստած դաւադրութիւններու մասին տեղեկութիւններ ունենալու: Աւելցուցի նաեւ թէ՛ օր մը, եթէ արդարութիւն կայ այս աշխարհի մէջ, պիտի հանդիպինք միմեանց . . . : Արդարութիւն ո՞ր կայ սակայն:

Ատկէ քանի մը օր յետոյ դարձեալ տոմս մը ստացայ: Այս անգամ փոստի միւտիւրէն էր, որ «խիստ կարեւոր խնդրոյ մը առթիւ», կ'ուզէր հանդիպիլ ինծի: Ինքը պիտի գար Մոկոուքի այգիներէն մէկը ու հոն պիտի տեսնէինք: Ընկերներս սակայն կտրուկ հակառակեցան հաւատացած, որ նամակը կեղծ էր եւ պատրաստած էր զիս թակարդ ձգելու համար: Այդ վայրկեանին յոռետես էինք դարձեր որ եւ է թիւրքի նկատմամբ, խեղադարութիւն կը համարէր հաւատ ընծայել նման գրութիւններուն: Ու չգացի: Զարդերէն վերջը միայն կը մեղադրէի ինքզինքս՝ որ գացած չէի. թերեւս իրապէս միւտիւրէն էր գիրը եւ, ո՞վ գիտէ, գուցէ ջարդերէն էր որ կը զգուշացընէր: Ափսոս որ յետին թւով էին այս մտածումներս: Նման վայրկեաններուն ըստիւր եւ մտածական քայլերը ընդհանրապէս օգտակար ենեղած. ես, դժբաղդարար բաւականաչափ չեմ ունեցած այդ յատկութիւնէն: Եղած եմ քիչ մը տատանող եւ «եթէ»ներով ինքզինքս անգամայուծող:

Ամիսը անցած էր, մինչ մենք այդպէս անիմաստ ու աննպատակ կը թափառէինք յոռետեսութեան գաղաթները: Գոնէ՛ կրնայինք երբեմն դաշտ իջնալ եւ օգտակար բոլոր ժողովուրդին, յուսահատ այդ օրերուն՝ ուժ ներշնչելով եւ քիչ թէ շատ կազմակերպելով: Հոն բանի մը կը սպասէինք կարծես: Ի՞նչի, ես այ չեմ գիտեր: Կը յիշեմ միայն, որ թէեւ ընդհանուր, կազմակերպւած ջարդը մեր միտքէն չէր անցներ, բայց զօրեղ ինքնապաշտպանութեան կազմակերպումը կենսական կը համարէինք: Կը սպասէինք քրտական յայտնաբերութիւններու, անիշխանութեան, ականաւոր անձերու եւ մարտիկներու դէմ դաւերու — այս բոլորին կը հաւատայինք:

Ամիսէ մը յետոյ միայն Սասունէն յուր առինք, Կորիւնն էր, որ օր մը պղտիկ խումբով մը եկաւ մեր քով:

Սասնոյ ղեկավարները կարեւոր էին համարած խորհրդակցութիւն մը ունենալ ինծի հետ եւ վերջապէս կուզէին որ ես այ հոն բարձրանամ եւ մնամ իրենց քով:

Մաթէոսին յանձնելով զինւած ուժերը, հետեւեցայ Կորիւնին:

Մահւան չափ տխուր էր այդ լուսկեաց ու խորհրդաւոր հայրուկը. խօսելիք չէր մնացած այլեւս. յոռետես էր միշտ ու իմ քաջալերական բռնադրօսիկ լաւատեսութեանս կը պատասխանէր բերանի մէկ կողմի թախծոտ ժպիտով մը. իր միակ յոյսը ուղտական բանակը եւ մեր կամաւորական գունդերն էին:

Կուրտիկի արեւելեան թեւերէն կը բարձրանայինք գիշերւան ւր ութեան մէջ. գազաթը հասանք, երբ արշալոյսը կը բացւէր. հոն սասունցի պահակներ կը հսկէին: Կարեւոր գիւրք մըն էր, որ կիշիէր Սուշ քաղաքի վրա: Արշալոյսի վարդազոյն լոյսին մէջ, առաջին անգամ տեսայ Անտօքի եւ Ծովասարի դաղաթները, Կէլիէ-Գուզանը եւ Տալուրիկը պատնէշող լեռնաշղթաները, իսկ աւելի մօտ՝ նեղ, երկար ճաւուրիկը պատնէշող լեռնաշղթաները:

Մեր ընկերները Սէմալ էին եկած ու մենք ալ հոն կերթայինք: Արագ կ'ընէինք լեռնէն: Սէմալի եւ Շէնըկի գիւղացիները իրենց կանոնը հետ կ'ընէին արտերը կը մաքրէին, տեղ-տեղ կը ջրէին, կարծես ոչինչ պատահած էր աշխարհիս վրա . . . Կը գիտէի զանոնք յուզումով ու դառնութեամբ եւ կը խորհէի որ ժողովուրդի բնագոյր չի խաբեր իրեն — թերեւս վտանգը անցնի առանց ցնցումի:

— Կ'ընէ կը ջրէ՞ս, Գա'լօ, բարի լուս, ձայնեց Կորիւնը, կարծես արտայայտելով մեր ցաւատանջ մտածումները:

Յաղթանդամ ջրվարը, որին ուղղւած էին այս խօսքերը, դանդաղօրէն գլուխը բարձրացուց, արագ հայեացք մը նետեց մեր կողմ ու շարունակեց թումբերը ուղղել:

— Զրէ՛, ջրէ, որ Մուսաբէզը դայ, ըզբըլն օրհնայ ու ուտէ, թողցր հեղնանքով մը աւելցուց Կորիւնը:

— Ա՛յ, Ասծու բարին վըր քըզի էզնի, պարոն Կորիւն, Մուսաբէզը չուր մըզի դայ, զըմէն կը լմնցունք ու գէնոր լէ մըր ք. . . կը թորէնք, պատասխանեց Գալօն բամբ ձայնով մը ու խնդաց:

Պղտիկ գիւղ մըն էր Սէմալը, Շէնըկէն քիչ մը հեռու: Յեղափոխական փայլուն անցեալ ունէր եւ անոր ամէն քարն ու թուփը՝ իր դիւցազներգութիւնը: Խորհրդաւոր ու ներհան էին այդ բոլորը:

Գիւղին եղրին, խոշոր ծառի մը տակ, հաւաքւած էին Կէլիէկու, զանցի Կիրակոսը, ժողովուրդի հերոսներէն, բարձրահասակ, ջղուտ, նիհար ու շիկահեր մարդ մը, 45-ի մօտ, որ գլխին դրած էր բարձր քօլօզ մը ապօքօշով փաթթած, հագած փոշոտ քեազահին. Սէմալա «Քաթիպ» Մանուկը՝ նոյն հասակի, բայց աւելի կիրթ ու խոհուն գիւմազներով. Մճօն եւ Ռուբէնը:

Այդ միջոցին արդէն իսկ սպառնական շարժումներ կը նկատուէին Սասնոյ դէմ. Գենջի, Հազոյի, Մօտկանի, Խարզանի, Իշխընձորի եւ այլ կողմերու աշխրէթները շարժման մէջ էին դուրսը: Սասնոյ ժողովուրդը եւ յեղափոխական ղեկավարութիւնը կը զգային անշուշտ իմաստը այս շարժումներուն եւ իրենց կողմէ, որքան հնարաւոր էր, պաշարի ու ռազմանիւթի կեդրոնացման պատրաստութիւններ կը տեսնէին:

Մերինները ըսին, թէ կռիւներու կեդրոնը պիտի դառնայ Տաւուրիկը ու Կէլիէկուզանը, իսկ իբր վերջին դիմադրութեան կեդրոն՝ Անտօք լեռը, որ ամէն յարմարութիւններ ունի վերջին դիմադրութիւններու համար: Իսկ մինչ այդ, բոլորի յոյսը ուսական բանակին էր, որ ամէնքի կարծիքով, չի կրնար ուշանալ: Կարիքը ունէին փորձառու մարտիկ-ղեկավարներու եւ մթերքի: Բայց որովհետեւ համառաւ ինչ Սասունի համար գործածելի. դաշտէն կարելոր ուժեր պէտք էր կանչուէին անմիջապէս եւ, հնարաւոր եղածին չափ, ռազմական պարէն կեդրոնացէր:

Այսքան տարիներ անցնելէ վերջ, անուշտ, դժուար է ճշգրիտ պատկերը տալ մեր խորհրդակցութիւններուն, բայց աւելորդ չեմ համարեր գոնէ մօտաւորապէս վերլուծել, յատկապէս տեղական ղեկավարներու տեսակէտները:

Կիրակոսը կը պնդէր, թէ յարձակման նախաձեռնութիւնը պէտք է որ մենք ստանձնէինք եւ կառավարիչը յարձակիլ քաղաքի վրա: «Մուշ վարկէնք», ռազմամթերք եւ պաշար ձեռք կը բերենք, կամբանանք եւ լուր կուտանք ուս բանակին, — կըսէր ան:

Քեթիպ Մանուկը դէմ էր ատոր: Ան կըսէր թէ՛ մեր ուժերը ի վիճակի չեն նման գործ մը կատարելու: Սասունէն ուժերը այլ տեղ տանիլ, կը նշանակէր սկիզբէն իսկ խորտակել մեր միջնաբերդը:

Մճօն եւս յարձակողականի կողմնակից էր, սակայն Սասունի չուրջը մաքրելու եւ լեռները մեր ձեռք պահելու դիտաւորութեամբ:

Կորիւնն էր միայն ընկճւած: Լաւատես չէր մեր գործողութիւններու յաջողութեան նկատմամբ: Պաշար ու ռազմամթերք չունինք, — կըսէր ան, — դաշտը անպատրաստ է եւ անկազմակերպ, քաղաքը չի դիմանար առանց դրսի օժանդակութեան: Սասունը թերեւս քիչ մը կը կուլի, բայց մինչեւ ե՞րբ: Եւ անոր բովանդակ յոյսը ուսական բանակը եւ մեր կամաւորական զուեղերն էին, եթէ միայն ժամանակին հասնէին:

Այսպէս ծանր մտահոգութիւններով ու տատանումներով անյադթելի դժուարութիւններու հանդէպ՝ գրեթէ շաբաթ մը անցուցինք, երբ Վարդավառի օրը, կէսօրէ առաջ Կուրտիկ լեռան մեր պահակներէն սուրհանդակ մը եկաւ յայտնելու թէ՛ արշալոյսին թնդանօթի ուժգին որոտ լսած էին Ս. Կարապետի եւ Վարդոյի կողմէն: Բոլորի ուրախութիւնը մեծ էր. ուրեմն ուսական բանակը մօտեցած է: Հարցերով հեղեղեցին եկողը. քանի՞ հարւած լսած են, շարունակաբար կորոտար, թէ՞ հատ-հատ, որո՞չ էր որ Ս. Կարապետի կողմէն է եւն. եւն.: Աւելի ստոյգ հասկնալու համար, կարծեմ Մճօն էր որ մեկնեցաւ Կուրտիկ՝ իր ախանջով լսելու այդ աւետաբեր որոտները: Ան վերադարձաւ ուշ գիշեր եւ ըսաւ թէ հատ-հատ կը լսէին խուլ որոտներ, բայց չէր կրնար որոշ ըսել թէ՛ ո՞ր կողմէն է որ կուգայ. երբեմն շատ մօտիկէն է, երբեմն հեռուէն: Մճօն, բերած էր նաեւ ուրիշ լուր՝ կառավարական եւ քրտական ուժերը հիւսիսէն կեսակամարածեւ պաշարած էին Սասունը՝ Խօզմակէտուկէն մինչեւ կուրնկի գեօլը. միայն Կուրտիկի դադաթը եւ մօտիկ շրթաները մեր ձեռքը կը մնային:

Ռուսական բանակի մերձեցումը եռանդ ու կորով ներշնչեց ամենուն: Նախայարձակ ըլլալու տեսակէտը կընդհանրանար եւ հաւանաբար գործադրութեան եւս գրէր, եթէ անակնկալ ու չարաշուք լուր մը չի գար տակնուվրա ընելու բոլոր հաշիւները:

Քանի մը օր յետոյ, կիսախելագարի մը երեւոյթով, կիսամերկ ու գրեթէ կիսամեռ, մեղ մօտ հասաւ գուժկանը: Մօտեցաւ, կճեցաւ բանը զմէն կոտորան, հայութիւն չը մնաց. «Ի՞նչ էք նստեր, Դուրեւ կեկանքէն ցնցելով, պատմեց մանրամասնութիւնները: Քրտական բազմաթիւ չէթաներ, նախապէս կտրելով գիւղամիջեան յարաբերութիւնները, երեք օրւան մէջ, առանձին առանձին ջարդած, աւրած, կողոպտած ու վառած են ժողովուրդը, անոր ինչքը ու տունը: Պատմեց, որ կը պաշարէին գիւղ մը ու խուժելով՝ կը հրամայէին որ բոլոր տղամարդիկ հաւաքուին, ապա, իրար կապելով, գիւղէն կը հանէին եւ յարմար վայրի մը մէջ կը գնդակահարէին: Երկուսուսուրդ կանայք, աղջիկներն ու մանուկներն առեւանգած, իսկ տարիքոտ մասը, հաւաքած մարազի մը մէջ՝ կենդանի այրած են: Այդ դժոխքէն ով որ կրցած է իր հողին աղատել, ապաստանած է Հաւատուրիկ եւ Քանա սարերը, այնտեղիցն Սասուն բարձրանալու համար: Բայց տիւշմանը ճամբաները փակեր է ամէն կողմէ, եւ ներկայիս անոնք ամփոփ կը մնան այդ լեռներու վրա, սպասելով ճար մը Սասունէն կամ հայ կամաւորական գունդերուն . . . :

Լսած էր նաեւ, որ քաղաքի հայոց թաղերը թնդանօթի են բռնած ու ժողովուրդը ջարդած են: Իր ըսելով լեռներն են փախած աւելի քան 20,000 հոգի: Կուրտիկէն լսած որտղ այս է եղած ուրեմն . . . :

Ահա ինչպէ՛ս զո՛հ դացինք մենք մեր «ոազմական նախատեսութեան», կարծելով թէ կառավարութիւնը, առանց դաշտին եւ քաղաքին ձեռք դպցնելու, նախ Սասունը պիտի դարնէ. թշնամին թողուց որ դաշտի զինւած ուժերը դուրս հանենք ու կեդրոնանանք Սասնոյ կղզիացած պղտիկ տարածութեան վրա, որուն երեք կողմերը քիւրտ բնակչութիւնն էր եւ միայն դաշտի կողմը բաց էր մեզ համար. թշնամին օգտուելով ուրեմն այս պայմաններէն բնաջնջեց ժողովուրդը: Այս զարհուրելի սխալը դործեցինք մենք՝ ղեկավար ու պատասխանատու ընկերներս, անշուշտ առանց որ եւ է անձնական նկատումի, բայց ենթարկելով քարացած աւանդութիւններուն, յամառ անհեռատեսութեան եւ խաբելով տարիներ առաջ Սասունի նկատամբ թիւրքերու կիրառած ոազմական դործելակերպէն . . . : Պէտք էր գոնէ պաշտպանել ու պահպանել մահէ ազատւած բեկորները: Սակայն ի՞նչպէս: Սասունը հազիւ կրնար ամիս մը կերակրել բնիկ ժողովուրդը: Ատկէ զատ, եթէ կռիւը սկսէր, դուրսէն եկած ժողովրդի բազմութիւնը պիտի կաշկանդէր կուռղնեւը եւ պիտի խանգարէր յարձակումներէ պաշտպանելու: Յրեւ ժողովուրդը լեռներու մէջ եւ թողո՞ւլ իր ճակատագրին: Բայց այդ կը նշանակէր, մատնել զայն բացայայտ ոչնչացման, եթէ միայն ուսական բանակի մեր կամաւորական խումբերէն շուտով չհասնէին մեզի: Կենսական էր մեզ համար, որ եւ է դնով, լուր հասցնել եւ օգնութիւն ուղել, իսկ մինչ այդ՝ պէտք էր պաշտպանել գոնէ, նեղ շըրջաօձի մը մէջ ամփոփւած մնացորդները:

Հողեկան տառապանքս առանց ատոր ալ զարհուրելի էր, որ հեռացած էի Մուշէն: Ատոր վրա կաւելնար այժմ մէկ կողմէ ջարդը, իսկ միւս կողմէ՝ ահաբեկ բեկորներու այս հսկայ խումբի յուսահատական վիճակը . . .

Նոյն օրը, երբ ես եւ Ռուբէնը ծառին տակ մեր վիշտն ու տըրտմութիւնը կապրէինք, նայեցայ իրեն ու վճռական ձայնով ըսի, թէ վար՝ ժողովուրդին քով պիտի երթամ. ի՞նչ ըսելու, ես ալ չեմ գիտեր, բայց անկարելի էր այլեւս մնալ այսպէս հոս:

Ռուբէնը, արցունքոտ աչքերով երկար նայեցաւ ինձի ու շնչաց. «Երեւի մեռնիլ կուղե՞ս, կերթաս մեռնելո՞ւ» . . .

— Չը գիտեմ, ըսի, բայց պէտք է որ երթամ. Երբ սեւ գեղերը կիջնար Շէնիկ-Սէմալի հովիտին մէջ, քանի մը

ղինւորներու հետ, դանդաղ ու մտահոգ, բռնեցինք անվերադարձ այդ ճամբան:

VIII

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐՈՒՆ ԷՍՏ՝ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Արշալոյսը նոր բացւած՝ կանգնած էինք Հաւատուրիկի լեռներուն ամենաբարձր կէտին վրա:

Այդտեղէն, երբ մեր առջեւ տեսանք մշուշապատ Դուրանը, որ կարծես պատանքւած մեռել ըլլար՝ ըմբռնեցիմք ահաւոր աղէտին մեծութիւնը . . . :

Անէացած էր մեր ժողովուրդը: Դաշտի այս ու այն կողմը, գիւղերուն մէջ կամ եղբերուն՝ դիտակով կը տեսնէի բարձրացող խիտ քուլաները սեւ-դեղին մուխի: Հայու թոնիրին ծուկը չէր այդ այլ-լեւս. կայրէին ըմբոստ գիւղերը կամ առանձին տունները. մարազներու մէջ կը հրկիզէր ժողովրդի «ոչ-պիտանի» մասը, որ չէր կրնար յաղեցնել ճիւղներու կիրքերը:

Ահա եւ մնացորդը մեր տարաբախտ ժողովրդի: Մեր կեցած լեռան վարի լանջերուն վրա, Առաքելոց վանքին դիմաց Վը վիտան անոնք՝ բոյներնին քանդուած ահաբեկ մըջիւններու պէս եւ այդ բազմութեան աղմուկը՝ խուլ ու անորոշ՝ կը հասնի մեր ականջներուն: Վանքի մը ուխտի դացած բազմութեան եռուզեռի ալ կը նմանի հեռուէն: Սխալ չէր գուժկանի ըսածը՝ 20 հազարէ ոչ պակաս պէտք է որ ըլլային:

Մղձաւանջային երազ մըն էր կարծես. ուղեղս կայրէր, պայթեցիլու չափ սեղմելով դանդաւ. միտքս կը գործէր ահռելի արագութեամբ, բայց կցկտուր . . .

Ի՞նչ պիտի ընել այժմ, ի՞նչպէս փրկել գոնէ ասոնք, ի՞նչպէս, լուր հասցնել ուսական բանակին, ինչպէ՞ս պաշտպանել. ինչպէ՞ս, ինչպէ՞ս . . . :

Հրանիւի մը պէս աչքերուս առջեւ կը դառնային մարմին առած պատկերները ահաւոր ջարդին, քաղաքի, գիւղերու ժողովրդին, ընկերներուն, անմեղ մանուկներուն ու աչքերուս առջեւ ցցւած այս սարսափելի ուրականներու ամբոխին: Եւ գրեթէ վազելով, հեւ ի հեւ կիջնէինք լեռնէն, խելագարներու նման զարնելով ժայռերուն, իյնալով, մաղլցելով:

Անոնց մէջ ենք ահա: Մօտէն ոչ մէկ արտակարգ յուզում, կարծես իրաւ ուխտի օր է: Կանանց եռուզեռ, ուտելիքի պատրաստութիւն՝ խմոր կը հունցեն, հարիւրաւոր օջախներ չորս կողմ, երեխա-

ներ կը խաղան ամէն կողմ, տղամարդիկ, խումբ-խումբ հաւաքւած այս ու այն կողմ՝ կը խօսէին. իսկ ոչխարի ու կովերու հօտերը բազմութենէն դուրս՝ արօտին մէջ էին:

Անտանելի դարչահոտութիւն բռներ էր ամէն կողմ. մարդիկ իրենց բնական կարիքը դրեթէ իրենց տեղերուն վրա կը կատարէին: Կենդանիներու արիւնը, աղտեղութիւններով լեցուն փորձաքնները՝ կոյտերով տեղին վրա կը մնային ամառան այդ ամիսներուն . . . :

Ազատւածներուն մէջ էին բողոքականներու պատուելի Գրիգորը, միջհասակ, խիստ հաճելի արտաքինով, մեղմ ու կիրթ շարժուածներով մէկը: Հոն էր նաև կաթողիկէ ծերունի քահանայ մը, կարծեմ Նորշէն դիւզէն: Կային նաև աչքի դարնող քանի մը երեւելիներ, որոնք քիչ-չատ աղքեցութիւն կրնային ունենալ ժողովուրդին վրա: Անոնց հետ խորհրդակցարար, որոշեցինք ժողովուրդը փոխադրել նոր եւ պաշտպանման տեսակէտէն յարմար վայր մը, որպէս զի վարակիչ հիւանդութիւններէ դոնէ դերձ պահենք:

Քիչ մը աւելի վար, Հաւատուրիկ դիւզի կոնակը, եւ Առաքելոց վանքի հաւասար բարձրութեան վրա լեռնադաշտ մը ընտրեցինք ու մաս առ մաս հոն փոխադրեցինք ժողովուրդը: Տարիարակէն Սասուն տանող ուղղութեան վրա չըջապատին տիրող բլուրը ընտրեցինք իբր պաշտպանութեան յենարան, եւ Մաթէոսի ջանքերով ու հրահանգով խրամներ ու դիրքեր պատրաստեցան, ուր պահակներ դրինք: Պահակներ դրեցան նաև Հաւատուրիկի երկու կողմերէն դէպի ձորերը տանող ճամբաներուն հսկող բարձրութիւններուն վրա:

Առաջին օրերը, ժողովուրդը եւ զինւած տղամարդիկ դիւրութեամբ կենթարկէին մեր կարգադրութիւններուն: Ոմանք քարերէ կամ ճիւղերէ հիւղակներ պատրաստեցին ու հոն պատասպարեցան, իսկ բազմութիւնը, ընդհանրապէս, բացօթեայ էր:

Հետաքրքիր դէմք էր Գրիգոր պատուելին: Առաջին անգամ կը հանդիպէի իրեն: Սովորական օրերուն նա երեւի իր ժողովարանի կեանքովը միայն կապէր, բայց կրած ահաւոր օրերէն վերջ՝ կերպարանափոխւած էր: Կը փիլիսոփայէր զարմանալի պաղարիւնութեամբ. ժողովրդի իմաստութեամբ կը վերլուծէր յեղափոխական շարժումներու թերութիւնները. չէր ժխտեր, որ ջարդը անխուսափելի էր, քանի որ թիւրքերու հետ կէս դարէ աւելի թշնամի ենք եղած. դառնութեամբ կը քննադատէր ժողովուրդը, որ վտանգը չնախատեսեց եւ չպատրաստեցաւ զիմազրաւելու: Ռուսներու շուտափոյթ հասնելու մասին թերահաւատ էր. կառավարիչէր ամբողջ այդ գանդւածը շարժել դէպի Պուլանըխ կամ Ախլաթ, ուր կը գտնուի երեւի

բանակը, բայց նիւթապէս անկարելի կը համարէր այդ եւ իր մեղամաղձոտ ու խելացի հայեացքը դէպի աւերակ Դուրանը ուղղելով, կը սէր. — «Պիտի ջարդուինք, դիտեմ, բայց դոնէ Տէրը մեզի միջոց եւ ուժ տայ մեր արիւնին վրէժը լուծելու»: Տասնոց ատրճանակ մը ունէր, իսկ իր փեսան թերի հրացան մը:

Երկու կենսական մտահոգութիւններ ունէինք այդ օրերուն՝ ուսական բանակին — աւելի շուտ մեր կամաւորական դունդերուն — լուր հասցնել, որ դիշերով մը ձիաւորները իջնան դաշտ (ուր այդ ատեն ուսական բանակին առջեւէն փախած քիւրտ ու չէրքէզ մուսուկներ էին թափւած) ու մենք, անոնց պաշտպանութեան տակ, անցնէինք սահմանը: Եթէ անոնք Պուլանըխ եւ արեւելեան կողմէն՝ Ախլաթ են հասած, դժւար չէր նման գործողութիւն մը: Երկրորդ մեր մտահոգութիւնը՝ ժողովրդի սնունդն էր եւ ինքապաշտպանութիւնը:


Ջարդերէն վերջ, ազատւած այդ բեկորներուն մէջ, տարօրինակ ծայրայեղութեամբ զարգացած էր ամէն գնով միայն սեփական կեանքը պահպանելու բնազդը: Ամիս մը անցած էր ջարդէն եւ այդ ամբողջ ժամանակամիջոցին «կարգադրիչ մարմինը» ամէն միջոց դորձ դրաւ սննդամթերքը հաշտութեան ենթարկել, համայնացնել ու այդ ձեւով բաշխուած կանոնաւորել, բայց հնարաւոր չեղաւ: Կային ընտանիքներ, որոնք դեռ ունէին տաւար, ոչխար, իւղ եւ այլ մթերք, մեր փորձերը բացարձակ ձախողեցան մթերքը բաժնելու: Նախ ահագին աղմուկ ու կռիւ ծագեցաւ, սպա, հետեւեալ դիշեր, բոլոր ունեւորները թողին հաւաքատեղին ու անհետացան, երեւի որ իշ վայր ընտրեցին կամ Գան լեռը դացին . . . :

Գալով մեր զինական ուժերուն, առաջին օրէն իսկ ձեռնարկեցինք ցուցակադրման, որպէս զի պարզ ըլլայ մեզի համար՝ թէ ի՞նչ ձեւով ու միջոցներով կրնանք մեր գոյութեան ժամանակամիջոցը երկարել ու հաւաքարար պաշտպանել: Քանի մը երիտասարդներ ձեռնարկեցին անոր: 170 հատ քիչ շատ կանոնաւոր զէնք ունէինք՝ պաշտպանելու համար մօտ 20,000 ժողովուրդ որ տեղաւորւած էր այժմ 5-6 քիլոմետր շրջագծով տարածութեան վրա: Իսկ ռազմաւորութե՞րը. չհաշուելով ժանգոտած ու ձեղքւած փամփուշտներու քանակը (որ բաւական մեծ էր՝ խոնաւ տեղեր պահած ըլլալով), իւրաքանչիւր հրացանին, միջին թւով հազիւ 30-35 փամփուշտ կը հասնէր: Բայց դիտէինք նաև, որ կային «սեւ օրւան» համար թագըրնողներ ալ: Այս ողբերգական արդիւնքէն յետոյ, ջանացինք այդ զինւորներ ալ: Այս ողբերգական արդիւնքէն յետոյ, ջանացինք միայն լած ուժերը, դոնէ ժամանակ առ ժամանակ ու փոխ ի փոխ, դիրքերու եւ դիշերային պահպանութեան յատկացնել. անոնցմէ միայն

Սասնոյ լեռանցքը դեռ բունւած էր թշնամիէն, որ առ այժմ չէր շարժեր: Սասունէն ալ ոչինչ չէր լուեր: Բայց առաւօտ մը, մեր դիմաց գտնուող Առաքելոց վանքի ամայի շրջապատին մէջ մարդկանց բազմութիւն տեսանք: Ի՞նչ ընելու էին եկեր: ՅՕամեայ Յովհաննէս վարդապետը՝ այդ առաքելատիպ մարդը, արդէն մորթեր են սեմին վրայ, ջարդի առաջին օրերուն, թալլեր վանքը: Արդեօք, թնդանօթ են բերած ոմբակոծելու մեղ: Յանկարծ տեսանք, որ բազմութեան քանի մը տասնեակ հոգի, աստիճաններով սկսան բարձրանալ վանքի պատերու եւ դմբէթի վրայ. կը քանդէին. ժամերով աշխատեցան, բայց ապարդիւն. դարերու շաղախը քար էր դարձած: Կէսօրէն վերջն էր, որ լսեցինք ուժգին պայթիւններ, եւ դմբէթը տապալեցաւ – հայութեան հետքը կը մաքրէին:

Մեր թիկունքին գտնուող դիրքը, որ Մաթէոսը նախապէս քիչ շատ յարմարեցած էր ռազմական պահանջներուն, ուժեղացուցած էինք: նախազդացում ունէինք, որ յարձակումը կրելու էինք այդ կողմէն եւ արդարեւ, Առաքելոց վանքի քանդումէն քանի մը օր յետոյ, թշնամին համազարկերով կիջնար մեր դիրքերուն վրայ:

Կռիւր սկսաւ կէսօրին մօտ: Մենք՝ մէկ կողմէն ժողովուրդը ձորը կիջեցնէինք Քան լեռը անցնելու համար, միւս կողմէն պահեստի մեր ուժերէն մօտ երեսուն հոգին կը ջանայինք տեղաւորել մեր գլխաւոր դիրքին թիկունքը: Մերինները «խրամ»-ներէն կը պատասխանէին: Թշնամին վերէն շղթայի մը ձեւով բացւած՝ կրակելով կիջնէր, զոհեր տալով: Անոր մէկ թեւը արդէն կիջնար դէպի Հաւատուրիկի ձորը: Կռի տաք մէկ վայրկեանին, երբ տեսնազին կը հետեւէինք կռիւ ընթացքին, յանկարծ տեսանք որ քանի մը տասնեակներ մեր գլխաւոր դիրքի թիկունքէն հորիզոնական շարքերով կը յառաջանային: Մերիններն են արդեօք եւ ինչո՞ւ են ելած դիրքերէն: Սակայն չուտով պարզեցաւ, որ թշնամին, յանկարծակիի բերելով փոսերուն մէջէն կրակող մեր մարտիկները՝ անոնց թիկունքն է անցեր: Պէտք էր պահեստի մեր ուժերը առաջ տանիլ, կրակելով: Հրամաններ, պաղատանք, յանդիմանութիւն արժէք չունեցան. այդ ուժը հազիւ հարիւր քայլ մը առաջանալով կեցաւ. անկարելի եղաւ աւելի առաջ տանիլ. դրեթէ ապարդիւն այդտեղէն կը կրակէին կիսաւեր իրենց հրացաններով, որոնց գնդակները արդէն չէին հասներ թշնամիին: Կը բողբէին արդարացիօրէն, թէ այդ փայտերով (հրացաններ) ինչպէ՞ս կարելի էր առաջ երթալ . . . : Ճարահատ, 8-10 հոգիով քիչ մըն ալ յառաջացանք կրակելով, որպէսզի գոնէ մերինները պաշարման շղթայէն հանէինք: Բարեբաղդաբար վերը կըրողները, օգտուելով թշնամիին վայրկեանական շփոթութենէն, կըցան



ՏԳՆՈՒՄԻ ԴԱՐՄԻ



ՏԳՆՈՒՄԻ ՈՒՅՂՆՈՂ ԼԱՅ

դերքերէն դուրս նետուիլ, եւ կրակելով, քովնորի ձորով վազել դէպի մեզ: Մինչ այդ ժողովուրդը չէր մնացած նախկին տեղին վրա: Թըշնամին դանդաղօրէն կիջնար դերքերէն մեր ուղղութեամբ: Մենք ալ կրակելով, մաս առ մաս, կիջնէինք ձորը՝ Քան անցնելու համար:

Այդ վայրկեանին էր, որ ձորի ճիշդ դահալէժին քով տեսայ երիտասարդ կին մը, որ ոտքերը տակը ծալլած՝ նստած էր եւ պառտազին ձեռքերը մեզի երկարած՝ աղեկտուր ճիշեր կարճակէր. անդամալոյժ է, ըսին: Խնդրեցի մէկ քանիներուն, որ շալկեն ու ձուլեցնեն: Դառն հեղնանքով պատասխանեցին. — «Ողջերը չենք կրնար փրկել. ասիկա՞ պիտի տանինք . . .»:

Ու երբ բաւական մը իջած էինք ձորէն, սարսափելի ճիշ մը հասաւ մեզ, եւ սեւ կոյտ մը ջարդ ու փշուր ինկաւ մեր ոտքերուն քովը. կինն էր . . . :

(Շարունակելի)

ՀԱՅ ԿԱՏՈՒՆ

Բագրատ Վարդ. Գեորգ-Թաւալեան

Ե

Ատրպատականի Սարմատ գաւառի արեւմուտքը, Հին-Քաղաք (Քէօհնա-չահար) մեծ դիւղին մէջէն անցնելով դէպի արեւմտեան հիւսիսը կը մտնենք կանաչազարդ ու գեղեցիկ հովիտ մը, որուն մէջտեղէն կը հոսի Դերիկի գետակը: Բնութեան սքանչելի տեսարանները դիտելով, միշտ գետակի ափերէն յառաջանալով՝ երկու ժամէն կը հասնինք Դերիկի Ս. Աստուածածին վանքը, ուր դարեր առաջ կառուցուած է հարթ բլուրի մը գագաթին, թիկունքին ունենալով բարձր ու լայնահաս լեռներ, առջեւը՝ զողաւոր ու գեղեցիկ լեռնահովիտ մը, որ կը ներկայացնէ բնական ամբուժիչներու եւ անմատչելի բարձունքներու շարան մը: Այս լեռնահովիտն ունի զանազան յիշատակալից վայրեր, որոնց հետ կապուած են ուրախ եւ տխուր յիշուածքներ: Բաֆֆիի վիպական հերոսներու գործունէութեան վայրերէն մէկը եղած է նաեւ Դերիկի լեռնահովիտը, որուն մէջ կը դրանրի «Կայծեր»ի Որսորդ Աւոյի վիպական քարայրը: Դերիկի ամէն մէկ ժայռ, ամէն մէկ բարձունք կը յիշեցնէ մեր ազատագրական արիւնոտ պայքարի դէպքերն ու դէմքերը: Այստեղ է նաեւ Դուշման Դարասին (Թշնամիի ձորը), Դուշմանայ լեռներն իրենց սէգ բարձունքներով եւ խոփու, ահարկու ժայռերով, որոնց ծերպերն ու փայտերը ապաստան դարձեր են քիւրտ աւաղակներուն, հրոսակներուն, ինչպէս նաեւ մեր հայդուկներուն եւ ռազմիկներուն: Այս մըթին ու խորին ձորերն, այս սէգ ու վէս գագաթները, այս ոլորապտոյտ կածաններն ու զարհուրելի կիրճերը ականատես եղած են կեանքի եւ մահուան արիւնալի պայքարներուն, հերոսական ինքնապաշտպանութեանց, դիւցազնական մահերու եւ ինքնակամ նահատակութեան՝ վան աղբի եւ հայրենեաց:

Ընկերներու եւ ուխտաւորներու խումբով մը 1930-ի Յունիսին, Սարմատի Հաֆթեան դիւղէն ճամբայ ելանք դէպի Դերիկը:



ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴ. ԹԱՎԱԼԵԱՆ

Քիչ մնացեր էր որ հասնէինք, երբ թեթեւ բայց հասնելի անձրեւ մը սկսաւ մաղմղել: Մտանք քարի մը տակ, անձրեւը քիչ մը դադարելէ յետոյ ճամբանիս շարունակեցինք: Մեր մէջ կային եւ հասակաւորներ եւ երիտասարդներ – բոլորս ալ ուրախ ենք, կերպենք, կը պատմենք, կը կատակենք:

Լուսաբացին կը մտնենք Դերիկի աւերակ մատուռը, որուն կիսաքանդ դմբէթը երկրաշարժի ատեն (1930 Մայիս 6), հիմնովին կործաներ է: Կը մտնենք Դուշմանայ ձորը, կերթանք ջերմուկները, որոնք խորտակւեր են, կը մտնենք հովիտները, կը բարձրանանք վանքի պարիսպներուն վրա, կը համբուրենք Չաթոյի ու Շէրոյի եւ այլ նահատակ հարգուկներու դերձեղմանները, կերպենք անոնց երգերը եւ յաջորդ օրը կը վերադառնանք Սալմասա:

Դերիկը մեր վանքերու պատմութեան մէջ ուշադրաւ տեղ չունի իբր վանական կամ դրչութեան կեդրոն: Հասարակ ուխտատեղի մը եղած է իր պարզ մատուռով, որուն մօտ կը գտնուի նաեւ համանուն դիւղը – Դերիկ, որ 40 տարի առաջ հայրենակ էր, 10-15 ընտանիքներով, բայց վանքը վերջնական կործանման ենթարկելէ յետոյ դիւղացիք ցրիւ եկան: Դերիկ դիւղն այժմ քրտաբնակ է:

Մեր ժողովրդական զրոյցներու եւ երգերու մէջ Դերիկը կը մեջ-

ւի:
 Ժողովուրդը կը պատմէ, որ օր մը քիւրտի մը կթան ոչխարը (մաքի) կը մտնէ Դերիկի հայերու ոչխանրերու հօտին մէջ: Քիւրտը կուգայ իր ոչխարը փնտռելու: Գիւղացին անոր առջեւ կելլէ եւ հեկուգայ երգումն ընելով կը հաւատացնէ, որ քիւրտի ոչխարը իրենց հօտին մէջ չէ: Ահա այդ ժողորդական երգումը, որուն ի լուր քիւրտը կը հաւատայ, կը միամուխ ու կը հեռանայ:

Ես քե մեռնեմ Դերիկայ դերան,
 Խայու ծաւած քրդու բերան:
 Թէ կերեր եմ քրդու մաքին,
 Թող լու դառնայ իմ խոր խոգին,
 Թէ չեմ կերեր քրդու մաքին,
 Քրդու մօրուք մէջ իմ ք...ին:

Վասպուրականի Շատախ գաւառի Յուսէտ դիւղացի հայրուկ Չաթօն 1894-ի գարնան պատահական գնդակի մը զոհ դարձաւ Դերիկի մէջ: Անոր հայրենակից եւ զինակից ընկեր- հայրուկ Շէրօն ալ 1896-ի Ապրիլին, սպաննւեցաւ Դերիկի օրհասական կուր ժամանակ,

նեց, ահա թէ ինչո՞ւ նա եկաւ Դուշմանայ ձորը, ուր կը վխտային հազար-հազար հարամիներ ու թշնամիներ :

Դարերով լքած, աւերակ եւ ամայի սրբավայրը, որ ուխտատեղի մնալով հանդերձ, եթէ դարձաւ հայ ազատագրութեան պայքարի ռազմավայրերէն մէկը, գլխաւորապէս Թաւաքալեանի անհատական ջանքերուն շնորհիւ էր : Էջմիածնի մեղկ ու հանգիստ կեանքն արհամարհելով նա եկաւ անցաւ այդ դուշմանարնակ Դուշմանայ ձորը, նորոգեց Դերիկը, դարձուց բնակելի, սիրելի վայր մը : Մինչեւ իսկ աւերակ տաճարը նորոգեց, ներքնապէս վարդարեց, ժամասացութիւն ու անտեսութիւն հաստատեց, ուխտաւորներու եւ հայդուկներու համար բնակարաններ շինել տուաւ : Ծառեր տնկեց, բանջարանոց մշակեց, մէկ խօսքով՝ վանքը բարեգարդեց ու շէնցուց : Տօնական օրերուն, երբ ուխտաւորներուն թիւը շատ կըլլար, երբ փոքրիկ մատուռը կը լեցէր բարեպաշտներով եւ շատերն ալ դաւիթին մէջ կաղօթէին, Թաւաքալեանը պատարագիչի իւր հանդերձներով, խաչն ու դաւաղանը ձեռքին՝ ողբերանք ու յուզած քարոզ կը խօսէր : Անոր վանահայրութեան օրով, ուխտաւորներէն մէկը՝ Սէյրիմ այսպէս կը պատմէ իւր սպաւորութիւններն ու Թաւաքալեանի քարոզը *):

«... Սկզբում փոքրիկ, փոքրիկ բլուրներ. նրանց յաջորդում էին աւելի մեծերը, որոնցից սկսում էին լեռներ եւ ապա լեռնաշղթաներ :

«— Դերիկը, Դերիկը, — սրտատրոփ կանչեց ուխտաւորներից մէկը : Հեռում նշմարում էր տաճարի սպիտակ կաթողիկէն :

«Օ՛հ, ինչպէս գլխից մեզ, բոլորիս լեռնալանջում բազմած այն փոքրիկ, կախարդական գմբէթը :

« Թիկունքին լայնահիտ, քարքարոտ սարեր, իսկ առջեւում մի գեղեցիկ, գոգաւոր լեռնահովիտ, հարթ բլրի գլխին նստել է Դերիկը :

« Երեկոյան ժամերգութիւնը դեռ չէր վերջացել : Հաղիւ լացւած ու թափ տուած ճանապարհի փոշին, մենք շտապեցինք համբուրել Ս. Ասւածածնի սեղանը :

« . . . Կիրակի օրւայ պատարագը հանդիսաւոր էր : Ինձ այնպէս էր թւում, որ Դերիկի փոքրիկ, անդարդարանք մատուռում երգերն աւելի վեհ, աւելի սպաւորիչ էին, քան մեր գիւղի փառաւոր եկեղեցում : Գեղեցիկ ու սպաւորիչ էր եւ այն վարդապետը (խօսքը Թաւաքալեանի մասին է. Հ. Ա.) որ կանգնած ամբիոնի վրա, խօսում էր ժողովրդի հետ :

*) Սէյրի - « Դերիկ կամ դէպի անմահութիւն » : Թիֆլիս, 1911, էջ՝ 12-16, 41-48 :

Ահա եւ Թաւաքալեանի քարոզը :

«Հայ ժողովուրդ, դու սիրում ես քո տունը, պաշտում ես քո սրբերը : Լեռների այս ամայութեան մէջ դու հեռաւորեամբ պաշտպանում ես հազար տարիների սրբավայրը : Մի ինչ որ անհասկանալի ուժ կայ քո մէջ, որ միշտ առաջ է մղում քեզ . այդ ուժը քո պահանջն է, որ քեզ հազար տարիներ պահել, պահպանել է, հազար արիւն-գետերից է անցկացրել, հազար սուր ու քրից է փրկել : Դու մի արմատ ունես, որի վրա ամառն անհաւան, որոնք մեծանում ու հոսանքն էլ նա նոր-նոր շիւթ է պրծնում, որոնք մեծանում ու հոսանքն էլ նա նոր-նոր շիւթ է պրծնում : Գո աստղը երբեք չի մարի, քո արմատը վաշտոն անհաւան է : Գո աստղը երբեք չի մարի, քո արմատը երբեք չի չորանայ : Սիրիք քո վաքանը, սիրիք քո աշխատանքը եւ միշտ, ամէն տարի նորոգիր ուխտդ քո պապերին : Սիրիք քո աշխատանքը, քո պապերի արիւնն ու քրտինքը, եւ հաւատա՛, որ դու կը գտնես քո անմահութիւնը . . . » :

Եւ վարդապետի ձայնը զանգակի պէս ղողանջում էր, ամբողջ մատուռը լցնում :

«Էդպէս վարդապետ դեռ չէր տեսել Սալմաստը», — նստած վրանների առաջ՝ խօսում էին ուխտաւորները՝ երեկոյան պլպլացող աստղերի տակ . — առաքեալի պէս էր խօսում :

« . . . Բայց ես ծերունի Մեսրոպի կողքին նստած լսում եմ նրա պատմութիւնները : Գիշերից անցել էր : Դեռ եւս լսում էին թմբուկի ձայնը եւ պարողների ուրախ ու հնչուն երգը :

« — Այստեղ, Դերիկում կրակ վառեցին Բաֆֆի կայծերը, — ողբերանք խօսում էր ծերունի Մեսրոպը, — այստեղ էր որսորդ Աւօի բոլոր լծան վրա, հերկ էր անում Հասօն : Այստեղ էին որսորդ Աւօի աշակերտները՝ Ասլանը, Կարօն՝ իրանց ընկերներով :

« . . . Հաղիւ անցել էր այդ օրերից մի, թէ երկու տարի, մի օր բերեցին ու մեր գիւղի եկեղեցում պահեցին Դերիկի մատուռի ըզրգեստները, պատկերները, աշտանակները եւ ուրիշ անթիւները : Մի ուրիշ օր էլ բերեցին ուրիշ բաներ, որոնց մէջ էին Դերիկի կաշէ ահաբեկ խնոցին եւ մի անտուկ, որը առջևի կողմից կային երկու ծակեր՝ ծածկած խոշորացոյց ապակիներով :

« . . . Ի՞նչ էր պատահել ի՞նչու մեր գիւղն էին բերում Դերիկի հարստութիւնը :

« Հայաստանի մէջ, հեռու սարերի վրա, ինչ որ բաներ էին կատարել : Քրդերը սուր վերցրած՝ հասել էին մինչեւ Դերիկ եւ սպառնում էին յարձակել ու ամէն ինչ աւերել : Այդ պատճառով տեղափոխում էր Դերիկի ունեցած հարստութիւնը :

« Հայաստանի մէջ, հեռու սարերի վրա, ինչ որ բաներ էին կատարել : Քրդերը սուր վերցրած՝ հասել էին մինչեւ Դերիկ եւ սպառնում էին յարձակել ու ամէն ինչ աւերել : Այդ պատճառով տեղափոխում էր Դերիկի ունեցած հարստութիւնը :

« . . . Դերիկը կործանեց . . . : Մեծ հրդեհ էր բռնկել Հայոց աշխարհում , վառում էր հրդեհը եւ հանգցնող չկար : Գնացին Դերիկի քաջերը , գնացին այն հրդեհի մէջ , ու էլ չվերադարձան :

« Գնաց եւ Դերիկի անձնէր հայր սուրբը :

« Դերիկը մնաց անտէր : Եւ եկան քրդերը , ծածկեցին այն գեղածիծաղ լեռները , լցրին այն ծիծաղախիտ ձորերը , կողոպտեցին ու ալբերցին փոքրիկ մատուռը , եւ աւերն ու արիւնը թաղաւորեցին Դերիկի վրա եւ լռեցին անուշ երգերն ու սուրբ տաղերը այն գեղածիծաղ լեռներում , եւ այն ծիծաղախիտ ձորերում . . . » :

Թաւաքալեանի կեանքի եւ գործունէութեան շքեղ էջերը Մայր Երկրի եւ Դերիկի մէջ անցուցած տարիներն են : Այնուհետեւ անոր ժողովրդանէր սիրտն ու սրաթուիչ հոգին ենթարկւեցան բազմատեսակ կաշկանդումներու : Անոր կեանքի վերջին տարիները յուսահատ ու թաւաքալոր վայրէջք ունեցան , Ազգին ու հայրենիքին ներկած ուխտեալ քարոզիչը , «Դերիկի հերոս» վարդապետը քաղաքական գործունէութեան եւ յեղափոխական աշխատանքի լծած ըլլալու փաստերով հետապնդման ենթարկւեցաւ Իրանի , Թուրքիոյ եւ Ռուսաստանի կառավարութեանց կողմէ , մինչեւ որ Խրիմեան Հայրիկն ալ ստիպւած եղաւ 1893-ի աշնան կանչել էջմիածին :

Զ .

Ամբողջ էութեամբ ու խառնուածքով յեղափոխական ծնած Թաւաքալեանի յոյսերն ու երազները մոխիր դարձան կրօնական ասպարէզի մէջ : Պաշտօնականութեան եւ հրամաններու ցանցերը կաշկանդեցին անոր սրաթուիչ թեւերը : Վեղարակիր յեղափոխականը խորապէս հիասթափուեցաւ նաեւ «Անդրանիկ յեղափոխական եւ մեծ դեմոկրատ» , Վասպուրականի Արծիւ Խրիմեան Հայրիկէն , երբ սա պետութեանց ճնշումներու վրա Դերիկի վանահայրը էջմիածին բերել տաւ եւ լծեց անոր հոգիին ու սրտին խորթ եւ անհրապոյր աշխատանքներու :

Դերիկի մատուռին , լեռներուն , ձորերուն , հովիտներուն հոգեպէս կապւած Թաւաքալեանը մէկ նպատակ ունեցած է միայն : Այն է՝ Դերիկը դարձնել շէն եւ ապահով վանք-կայան մը , որ ապաստան եւ հանգստավայր , իջեան ըլլար դէպի երկիր երթեւեկող յեղափոխական խումբերուն , սուրհանդակներուն , զինատար խումբերուն : Ինքը նստէր Դերիկը եւ դառնար յարաբերութեան կապն ու օղակը երկրի եւ կովկասի ու Ատրպատականի միջեւ : Անոր ցանկութիւնն էր ապրել ժողովուրդի մէջ , յեղափոխականներու մէջ , հեռու մնար

էջմիածնի աղբեցութենէն եւ ի պահանջել հարկին իր վեղարն ու սքեմն ալ իբր արտաքին շարժումներ՝ յարաբերութեան մէջ դնէր պետական պաշտօնեաներու հետ , անոնց վրա հարկ եղած աղբեցութիւնը բանեցնելու համար :

Հանրային գործիչը միշտ ենթակայ եղած է ստոր զրպարտութեանց եւ բամբասանքներու : Այս վիճակին ենթարկւեցաւ նաեւ Թաւաքալեանը , որ ոչ միայն վանքի եկամուտները , այլ մինչեւ իսկ անձնական համեստ զրամական մուտքերը ի սպաս դրաւ յեղափոխական գործին : Գիւղէ գիւղ՝ Սալմաստի մէջ շրջադայեցաւ եւ Դերիկի վանքի համար հանգանակութիւն կատարեց : Անոր այս աշխատանքն ալ ըսի-ըսուներու տեղի տաւ թէեւ , բայց նա կանգնած մնաց իր բարոյական բարձրութեան վրա : Հակառակորդները անգոր եղան զրպարտութեան կնիքը դրոշմելու անոր ճակատին : Եւ ազնիւ վարդապետը ցաւ ի սիրտ իր նամակներէն մէկուն մէջ կը գրէ .

« . . . Ափսոս իմ կրած աղամայ , անիրաւ արտաքոյ կարգի հոգեկան տանջանքներին , ափսո՛ս իմ անկեղծ յուզումներին : Աղօթեցէք ինձ համար » :

Երախտապարտ ենք ընկ . Սիմ . Վրացեանին , որ կրցաւ Հ . Յ . Դաշնակցութեան դիւանի մէջէն հանել եւ խնամւած , հմուտ դասաւորութեամբ ու ծանօթութիւններով հրատարակութեան տալ Թաւաքալեանի նամակները , *) որոնք անոր կեանքի վերջին տասնամեակի գործունէութեան եւ փոթորկայոյզ ապրումներու վաւերական աղբիւրներն են :

«Թաւաքալեան նամակները , - կըսէ ընկ . Ս . Վրացեան , ոչ միայն փաստեր ու տեղեկութիւններ են պարունակում , այլ եւ տալիս են դունազեղ , յաճախ մութ ներկերով նկարած բարքային ու կենցաղային պատկերներ : Այդ նիւթից օգտուելիս երբեք չպէտք է անտես առնել ոչ հեղինակի բնաւորութիւնն ընդհանրապէս , ոչ էլ այն օրէնքի նրա հոգեկան զրգուած վիճակը : Թաւաքալեանի նամակներին պէտք է մօտենալ քննադատաբար , օգտուել զլիսաւորապէս փաստերից ու ժամանակագրութիւնից , իսկ մեկնաբանական մասի վերաբերմամբ լինել խիստ զգոյշ ու վերապահ :

« . . . Առհասարակ Թաւաքալեանի նամակներից երեւան է դալիս մի չափազանց կասկածամիտ , ջղաբոլոր , հիւանդոտ տրամադրութիւն : Ամէն կողմից նա տեսնում է թշնամանք դէպի իր անձն ու գործունէութիւնը : Նկատուում է նւ որոշ հիասթափութիւն : Առանձ-

*) «Հայրենիք» ամսագիր 1933, Բիւ 1, էջ՝ 103-110, 1933, Բիւ 2, էջ՝ 98-112, 1934, Բիւ 3, էջ՝ 84-95:

նապէս դժգոհ է իր բարձրադաս իշխանութեան ցոյց տւած վերաբերումից: Նրա նամակները լինքն են վշտով ու դառնութիւններով:

Ինչպէս վերը յիշեցի, Թաւաքալեանի գործունէութիւնը Սալմաստի եւ Դերիկի մէջ գրաւեց ոչ միայն պարսից, այլ եւ տաճկաց ու ռուսաց կառավարութեանց ուշադրութիւնը: Թաւրիզի տաճկական հիւպատոսը ուշի ուշով կը դիտէր սահմանադիւսի վրա կատարուող աշխատանքները եւ ճնշում գործ կը դնէր պարսից կառաարութեան վրա Թաւաքալեանը հեռացնելու համար:

Սեւ-Քարեցի Սաքօն Թաւաքալեանին յայտնած էր, որ - « Հին Նախիջևեանի ռուս դաւառապետը մի անգամ կանչել է Սարգսին (Սաքօյին) եւ հարցրել է Դ . . . ի (Դերեկի) վան . . . (վանահայր) Թա . . . նի (Թաւաքալեանի) մասին»:

Այս հարցապնդումները, բնական է, չէին կարող անհետեւանք մնալ: Կառավարութեանց բողոքները հասած էին մինչեւ էջմիածին: Եւ Թաւաքալեանը 1893 թ. աշնան դրած իր նամակներու մէջ էջմիածին երթալու ակնարկներ կընէ հակառակ իր ցանկութեան: Սակայն նա բնաւ չի ցանկար էջմիածին երթալ:

« Ես առաջ էլ, հիմա էլ ասում եմ՝ կամ Դ . (երիկ), կամ Սեւան . վասլամ: Ինչ գործ ունիմ ես ինտրիզների կեղտոտ աշխարհի մէջ . . . : Ես իսկի այստեղի մանր ինտրիզներին չեմ կարողանում դիմանալ, ուր մնաց այնտեղի անվերջ ու աննպատակ ինտրիզներին խառնեմ»:

Թաւաքալեանը 1893 թ. Հոկտեմբեր 18-ին կը ներկայանայ Սալմաստի գաւառապետ Հաջի Խանին, գրել կուտայ «մի փառաւոր վէճիլլամա», որով Սարգիս Սարիբէգ օղլին (Սեւ-Քարեցի Սաքօն) «լիազոր ներկայացուցիչ եւ կառավարիչ է ներկայանում (Դերիկի) Ս. Ասուածամօր մենաստանի եւ նրա գիւղի ու հողերի վրա մինչեւ վանահօր Սուրբ էջմիածնից վերադառնալը»:

Սեւ-Քարեցի Սաքօն «վէճիլլ» էր նաեւ Ս. Ստեփաննոս Նախա-վկայի վանքի վանահայր Վահան վարդապետին եւ բացարձակ լիազորութիւն կը վայելէր վանքի գործերուն մէջ:

Դերիկի անվեղար վանահայրը, նոյնինքն Սաքօն՝ «ամէն մի նոր կարեւոր գործի համար, եթէ ժամանակը ներում է, պարտաւոր է դիմել Ս. էջմիածին, վանահօրը, իսկ եթէ որ ժամանակը խիստ նեղ է, պարտաւոր է հարցնել այն անձանց խորհուրդը, որոնց կը յանձնէ վանահայրը գնալու ժամանակ»:

Եւ 1893 թ. աշնան (հաւանաբար նոյեմբեր ամսին) Թաւաքալեանը հրաժեշտ տուաւ իր սիրելի Դերիկին, Սալմաստի եւ Թաւրիզի ընկերներուն ու դնաց էջմիածին, ուր «ինչ որ տեսնում է, նրան ուղ-

ղակի սպանում է հողեպէս: Հիասթափուում, յուսահատում, ընկճւում է»:

« Թաւրիզի ընկերները - կը շարունակէ ընկ. Ս. Վրացեանը, - իրար յետեւից նամակներ են գրում նրան, պահանջում են պատասխանել, բայց նա լուում է. սիրտ չկայ, չի կարողանում գրել: Վերջապէս, 1894 թ. ապր. 22 նամակով նա նկարագրում է իր հողեկան տանջանքները եւ այլաբանական պատմածքներով յայտնում իր գըլտախին եկած դժբախտութիւնը, իր սիրած էակի դաւաճանութիւնն ու կորուստը, իր հողեկան փրկուումը: Սիրած առարկան գեղեցիկ վարդանն է՝ Խրիմեան Հայրիկը»:

Եւ Թաւաքալեանը ծանր խօսքերով ու որակումներով կը քննադատէ Խրիմեան Հայրիկի իրաւացի կամ յանիրաւի ընթացքը՝ էջմիածնի գործերուն մէջ եւ այլն եւ այլն: Կարեւորն այն է, որ նա մինչեւ իր մահը հիասթափուած մնաց Խրիմեան Հայրիկէն, որ երբեք չուզեց Թաւաքալեանը Դերիկ վերադարձնել նոր դժգոհութեանց եւ բողոքներու առիթ չտալու համար: Իսկ Թաւաքալեանը լիայոյս էր, որ նորէն Դերիկ պիտի երթայ եւ շարունակէ իր յեղափոխական աշխատանքները:

Թաւաքալեանը 1894 թ. Ապրիլ 22 թւակիր նամակին մէջ իր ցանկալի վերադարձին մասին կը գրէ՝

« . . . Ես ուզում էի Ձատկից անմիջապէս յետոյ վերադառնալ, բայց Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն բարեհաճութեանն էի սպանում: Չնայելով որ Սրբազան Առաջնորդը (խօսքը Ատրպատասկանի Հայոց Առաջնորդ Սուքիաս Եպիսկոպոս Պարգեանցի մասին է. Հ. Ա.) խնդրել է, որ ինձ ուղարկեն իր մօտ, բայց ձգձգում են . . . Սկզբումը ուզեցին ղրկել, բայց յետոյ տատանեցին իսկ այժմ բարձրագոյն հրաման եմ ստացել գնալ Կարս եւ նրա նահանգի մէջ գետեղւած դաղթականների մասին հոգալ եւ փող բաժանել»:

Սակայն, Թաւաքալեանի բուռն ցանկութիւնն է Դերիկ երթալ. « - Ի՞նչ կայ հոն, որ դուրս կը պատուեցնես երթալու համար», կը հարցնէ Խրիմեան Հայրիկը:

« - Դէ՛, արի, ասա, թէ ի՞նչ կայ, ասելով բեղարեցի, էլի հարցընում է», կը գրէ Թաւաքալեանը, եւ միջոցներու կը դիմէ, որպէս զի Կարս չերթայ:

Չարքաչ եւ տանջւած Թաւաքալեանը իր երկարատեւ թափառումներու ընթացքին ստացած էր բրոնխիտի եւ յօղացաւի հիւանդութիւնները, որոնք շատ ծանր ազդեր էին նաեւ անոր հողեկանի վրա: Գաղթականներուն դրամ բաժնելու գործով 1894 թ. Ապրիլ


կարօտով ալ գերեզման իջաւ: Մարմինն ամփոփեցաւ Բագուի Պարապետի Հայոց եկեղեցոյ բակին մէջ:

Այսպէս առկայծող մոմի մը պէս մարեցաւ Թաւաքալեանը, բայց անոր անունը իր մահէն յետոյ անմահ մնաց ու յիշատակը միշտ սիրելի:

Հիմա ամայի եւ աւերակ է Դերիկի մենաստանը, որուն առջեւէն խլջալով կերթայ սառնորակ գետակը: Լուռ ու զարհուրելի է Դուշմանայ ձորը, լքած է որսորդ Աւոյի տնակը: Բաֆրի եւ Դերիկի հերոսները չկան այլևս . . . անոնք դացին ընդմիշտ եւ անդարձ:

Սակայն Դերիկի աւերակ մատուռին ուխտի դացող իւրաքանչիւր հայր խորին պատկառանքով կը յիշէ Բագրատ վարդապետի սիրելի անունը: Վանքի աւերակ պարիսպներն իսկ վկայ են թէ յեղափոխական վարդապետը որպիսի՝ անձնւիրութեամբ լծւած էր Հայութեան ազատագրութեան սրբազան գործին, որուն նախակարապետներէն եւ ուխտեալ առաքեալներէն մէկն ալ հէնց ինքը՝ Բագրատ վարդապետ Թաւաքալեանը եղաւ:

Թաւրիգ



ԱՅՑԵԱԼԲ

ԵՂԻՇԷ ԹԱԴԵՈՍԵԱՆ

Այս տարւայ յունար 24-ին Թիֆլիզում մեռել է նկարիչ Եղիշէ Թադէոսեանը: Հանդուցեալը ծնւել է 1870 թւին Վաղարշապատում: Երկրորդական կրթութիւնը ստացել է Լազարեան ձեմարանում, որից յետոյ ուսել է Մոսկուայի նկարչական դպրոցում, որը եւ աւարտել է 1895 թւին:

Դպրոցի պրոֆեսորներէր թադէոսեանի վրա ամենից շատ ազդել է յայտնի նկարիչ Պօլենովը, որի հետ նա հետագային բարեկամական մօտիկ յարաբերութիւններ է ունեցել: Պօլենովից զատ, Ե. Թադէոսեանը մօտիկ ծանօթութիւն է ունեցել աշխարհահռչակ Բեպիկի եւ Բոյախանի նկարիչ Սերովի, Կորովինի, Լեվիտանի, Վասնեցովի եւ Բորիսով-Մուսատովի հետ, որոնք եւ ազդել են նրա տաղանդի վրա:

Նկարչական գործունէութիւնը Թադէոսեանը սկսել է Մոսկուայում եւ առաջին իսկ գործերէրց յետոյ հռչակ է ձեռք բերել, շահելով նախ Մորոզովի եւ ապա Բեպիկի անւան մրցանակները:

1901 թ. նա փոխադրւել է Թիֆլիզ եւ կարգւել է նկարչական դպրոցի դասախօս: Այդ պաշտօնը նա վարել է մինչեւ իր մահը: Խորհրդային իշխանութեան օրով հալածանքների է ենթարկւել ի միջի այլոց նաեւ այն պատճառով, որ 1926-ին իր տան արհեստանոցի մէջ աւարտել է տարիներ առաջ յղացած իր «Յիսուս Գեթսեմանի պարտեզի մէջ» նկարը: Այս «ոճրագործութեան» համար Թադէոսեանը արտաքսւել է դպրոցից, զրկւել է իր բնակարանից եւ երկար ժամանակ քաշքշւել է Չեկա ու ենթարկւել այնտեղ հաւատաքնութեան: Սիբերիոյ աքսորից ազատւել է շնորհիւ իր վրացի պաշտօնակիցների արտակարգ ճիգերի:

Թադէոսեանը եղել է հայ նկարչութեան հիմնադիրը: 48 տարւայ նկարչական գործունէութեան ընթացքում արտադրել է մօտաւորապէս 450 պատասառներ, որոնց մէջ տիրական տեղ են բռնում հայկական նկարները: Իր հակումներով հանդուցեալը բնանկարիչ էր (փէյզաժիստ) եւ ամենագեղեցիկ գործերի մէջ վերարտադրել է հայ բնաշխարհի տեսարանները: 16 նկարներ վերաբերում են Սեւանին, 7-ը Արագածին, 12-ը՝ Բիւրականին, 13-ը՝ Մասիսին, 15-ը՝ Վաղարշապատին եւ Էջմիածնի վանքերին, 9-ը՝ Լոռիի տեսարաններին եւ 12-ը՝ Ադուլիսի տներին ու տեսարաններին:

Դիմանկարներ քիչ է տուել, ընդամենը մի քանի հատ: Դրանց մէջ յայտնի են Կոմիտասի երկու պորտուէտները եւ Յովհ. Թումանեանի սքանչելի դիմանկարը:

ՆՆԵՐՍԷՍ ՕՂԱՆԵԱՆ

Տարագրութեան բնրոյալը ամբողջովն պայմաններու մէջ տառապելով՝ վերջերս Փարիզի մէջ մեռաւ մէկը մեր լաւագոյն այլ համեստ հասարակական գործիչներէն: Երբեք կուսակցական չէ եղած, բայց լաւագոյն բարեկամն էր ամէն անոնց, որոնց մէջ կը տեսնէր անշահախնդիր ու նւիրուած իրական մշակը հայ հայրենիքի եւ ժողովրդի:

Որք էր եւ որբանոցներու մէջ մեծցաւ, ու երբ նետուեցաւ կեանքին երախը, նւիրուեցաւ ազգային-հասարակական ասպարէզին, իրեն յատուկ եռանդովն ու անշահախնդիր խանդովը: 1890-1918 թ. Պոլսոյ հայ հասարակական եւ ազգային գործիչներէն էր: Համեստ էր անոր մտաւոր պաշարը, բայց բովանդակ իր կարողութիւնը ու մանաւանդ բարոյական կորովը ի սպաս դրած էր ժողովուրդին:

Մասնաւորապէս ջերմ գուրգուրանք մը ունէր ղէպի գեոահաս սերունդը. հայրիկն էր անոնց իր բովանդակ առումով. անոնց ամէն մէկ կրթական, մարզական եւ այլ դաստիարակիչ ձեռնարկ կամ շարժում կը քաջալերէր անով: Ներսէս Օհանեանը իր բովանդակ բարոյական դիմագծով եւ գգալուն հոգիով աչքի գարկաւ մանաւանդ սահմանադրութեան տարիներէն մինչեւ ընդհ. պտերադմին սկիզբը:

Սահմանադրութեան առաջին գերագոյն խանդավառութիւններու շրջաններուն, մանկական յաիշտակութեամբ կը հետեւէր հայ զարթոնքին ու անոր առաքեալներու քայլերուն: Այդ տարիներուն ազգային երեսփոխան էր եւ ժողովին խղճի ձայնն էր յաճախ՝ բոլոր ներքին աղտեղութիւններու մթնոլորտին մէջ: Երբեմն կուսակցական կիրքը իր ծայրայեղ աստիճաններուն հասած վայրկեացներն, անոր հուժկու եւ խոր ցաւով ու անկեղծութեամբ լեցուն, մերթ յանդիմանական եւ մերթ աղերսական շեշտն էր, որ կը մեղմացնէր կիրքերը: Բազմաթիւ անգամներ նա իւրովի միջնորդի դեր ստանձնած է կուսակցութիւններու միջեւ տիրող տարակարծութիւնները վերացնելու եւ համագործակցութիւն ստեղծելու համար:

Շատ կապուած էր Վոսմեանին եւ Չարդարեանին. երկրպագուն էր Շահրիբեանի մտրակող բնաւորութեանը:

Այս նւիրուած ու ժողովրդասէր մարդը, համեստ իր դիրքովը, լուսաւոր շող մըն էր անցեալ երկու տասնամեակներու արեւմտահայ քաղաքական եւ հասարակական կեանքին մէջ:

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

40-ԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԸ (1896 - 1936)

Ամերիկայի Համալսարանի Կեդրոնական Մարմնայ նախագահութեամբ Յունիսին պիտի տօնի այս տարեդարձը: Բազմաթիւ բերքեր հաւանաբար առանձին բիւրնուի այս եղբրական եւ միանգամայն դիւցագոնական պայքարին, որ վասպուրականցիները «Մեծ դէպք» կ'անուանեն:

1895-ի Սասունի բնրոտացումը դաժանօրէն գոպնեցաւ եւ կրակի ու աւարի տրեցաւ Տարօնի աշխարհը: «Մայիսեան բարեկրթութեան» մըշակեցան պետութիւններու կողմէ, որ բիրտբեր փոխարինեցին ընդհանուր ջարդով . . . :

Ընդհանուր արտակարգ բնիչ ըրշանակուած Շաքը փաշան ղրկեցաւ գործադրելու գայն: Եւ անոր փոխանորդ Պահրի փաշան, Սաստիտաի փաշայի, անմիջական հրամանատարութեամբ ձեռնարկեց վասպուրականը եւս ենթարկելու երոյ սրոյ:

Սակայն վասպուրականը անօգ եւ անմտունջ չկրեց այդ հարածը:

Տարիներէ ի վեր երիւնհանի եւ Փորքուգալեանի պատրաստած սերունդը գերագոյն ճիգը գործ դրաւ պաշտպանելու անդէմ ժողովուրդը, իր գլխով ունենալով երեք հայ կուսակցութիւններու միացած ուժը եւ միասոյլ վնասակարէութիւնը:

Ինքնապաշտպանութեան սեփական ոգին էր Մկրտիչ Թերթեմեզեանը -

«Աւետիսեան», որ իբր տեղացի մեծ յարգանք կը վայելէր ժողովուրդին մէջ եւ երիտասարդ վագրէն Տէրայեանը: Հ. Յեղ. Դաշնակցութիւնը, իր հասակով պատմի (1891-ին կազմակերպուած), վասպուրական էր ղրկած ուխտեալ ու պատրաստած գործիչներէն Պետոն, իսկ լեռնային մասերու պաշտպանութիւնը կը կազմակերպէր Հայ Կամաւորական Գումգերու ապագայ հրամանատար վարդապետ խումբ մը անուանի քաջերու հետ, որոնց թմը կը պատկանէր Դումանը: Հոն էր անաւ հնչակեան նւիրուած ու գաղափարական գործիչներէն Մարտիկը (Մարտիկոս Սարալխանեան), որ համալսարանի նստարանէն նետած էր յեղափոխական ասպարէզը:

Այս սկանաւոր ու կարգ յեղ. գործիչներու ղեկավարութեամբ կազմակերպուած էր կատաղի ընդդիմութիւն վան-Այգեստանի բոլոր բաղերուն մէջ:

Աւելի քան քսան օր տեւեց այդ անհաւասար կռիւը: Թշնամիին կանոնաւոր գործերու եւ բրտական բազմաթիւ հորդանքերու գրունքը հանդիպեցան պողպատէ կոյրձեփերու: Բայց անաբնդամօքներու ետեւէն երեւան կուգայ տեղի անգլիական հիւպատոսը (Բնդամօք սպայ մը), որ անձամբ կը վայրէ ուրակածուր . . . :

Հայ մարտիկներու դիրքերը կը խորտակին. գործն ու խումբները կը սեղմեն շրջան, դժոխային կրակի մէջ

առնելով զանոնք, ու կստիպեմք բողոս դիրքերը:

Օտար պետութիւններու ներկայացուցիչները հաւատացուցին կուռղներուն քէ՛ կքէ՛ հեռանա քաղաքէն իրենք կերաշխատրեն ժողովուրդի ապահովութիւնը. հակառակ պարագային՝ կոտորածը անխուսափելի է . . . :

Ինչպէս յանալս, մանաւանդ պայքարի նախնական այդ շրջանին, մերինները, հաւատ ընծայեցին անոնց խօսքերուն եւ գիշեր մը բողոսցին քաղաքը: Հազարէ աւելի երիտասարդներ ապաստանեցան վարագայ սարը:

Հոն է ահա, որ օտար ներկայացուցիչներու խոստումներու նկատմամբ յռոտեցան երեսն եկամ, որոնց մեծ մասը կը կազմէին անոնք, որոնց ընտանիքները մնացած էին անպաշտպան: Անոնք յայտնեցին քէ պիտի վերադառնան քաղաք: 200-է աւելի երիտասարդներ գաղտնօրէն մտան քաղաք, մնացողներէն 83 հոգի, Պետոյի հետ որոշեցին Գարահիսար լեռան մամբայէն հոյ անցնիլ, իսկ ուժերու մնացեալ մեծ մասը ուղղուեցաւ դէպի Սալմաստ Ա-

ւերսիսանի եւ Մարտիկեանի առաջնորդութեամբ:

Կառավարութիւնը նախապէս գիտէր ի հարկէ, որ միակ մամբան ըմբոստներու՝ Պարսկաստանն է: Նա ֆիւրտերով բռնել տաւ յիշեալ մամբաները, եւ անխուսափելի տեղի ունեցաւ . . . :

Աղբակի Բարդուղիմէոս վանքին առջեւ փուած դաշտին մէջ, կեանքի եւ մահուան զարեւոյթի կռիւներու մէջ ինկան 800 երիտասարդներ իրենց առաջնորդ Աւերսիսանի եւ Մարտիկի հետ, իսկ Գարահիսար լեռան վրայ ինկաւ Պետոն իր մարտիկներով:

Սակայն Հայ Յեղ. Գաշնակցութիւնը անպատիժ չը բողոսց այս նախնիքի դերակատարները:

Մէկ տարի յետոյ Շէրիֆ Բէգի ցեղախումբը կատաղի յարակում կը բաց հանասօրի մէջ ու ջարդուեցաւ: Ապա կազմակերպուեցաւ Բանկ Օտտօմանի ումբային ցոյցը - այդ քուսն էր հայ ժողովրդի եւ ցասումը յեղափոխականներու:

Վ. Փ.

ԹԵՐԹԵՐՈՒ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ

Հայ հասարակութեան անձանօք չէ հայ քերթի հրատարակութեան եւ մանաւանդ «տեւական»-ը հրատարակութեան հետ կապուած տածանելի դժարութիւնները: Հայ խմբագիրը՝ քերեսու դասապարտած կիսաքաղց ապրելու, մոլեռանդ կորովով ու յամառութեամբ կը շարունակէ իւր քերթի հրատարակութիւնը:

Գաղութահայութեան ցեղային դիմագծի պահպանութեան, հայեցի դաստիարակութեան, աւանդական բարոյական ոգիի պահպանման եւ մանաւանդ ապագայի կենսատու յոյսերուն կապուած պա-

հելու մէջ հայ տարագիր քերթերը ամենախոշոր դերն ունին կատարելիք ու այդ պատուաւոր դերը, սակաւ բացառութեամբ, անոնք կը կատարեն, հակառակ այդ քերթերուն մէջ նկատուած քերութիւններուն:

Հայ քերթը ապրեցաւ դժնդակ պայմաններուն մէջ, ապրեցաւ տարագիր ժողովուրդին հետ անոր հոգեկան ցաւերը, անոր տառապանքներն ու, ընդհանուր առմամբ, մնաց իր կոչման բարձրութեան վրա: Երբեմն, իբրեւ ծընունդ մեր անբնական պայմաններու, ան ունեցաւ յախումն պոքկուսներ ու

պայքարներ, սակայն իրենց ծայրայեղութեամբ հանդերձ՝ առնով շատ պարագաներու մէջ կազդուրիչ եւս եղան:

Վերջին ամիսներուն մէջ գաղթահայ քերթերէն մէկ քանին տօնեցին իրենց գոյութեան տարեդարձները: Մենք պարտք կը համարենք մատնանշել այս տեղ հայ մշակութային կեանքի մէջ տեղի ունեցած այդ կազդուրիչ ու յուսատու երեւոյթը:

Սօփիայի «Ազատ խօսք»-ը տօնեց իւր տասնամեակը:

Իրապէս այս քերթը ժառանգորդն է 1905-ին Սօփիայի մէջ, նահատակ Ռուբին Զարդարեանի խմբագրութեամբ, լոյս տեսնող «Ռազմիկ»-ի, որ այնքան ժողովրդական էր ու սիրելի: Անոր յաջորդեց (գանազան ընդմիջումներով) «Հաստատան»-ը (1926-ին), «Արաքս»-ը, «Նոր Արաքս»-ը եւ այսօր՝ «Ազատ խօսք»-ը, որ բուրգաբանայ գաղութի մէջ կը կատարէ իբրեւ հասարակական-ազգային կարեւոր դերը:

«Ազատ խօսք»-ը, Մարտ 2-ի առանձին համար է ներած իւր տասնամեակին:

Յորեւեարներէն երկրորդն է Կահիրէի «Յուսարբեր»-ը, որ կը բուսակոյտ իւր 21-րդ տարին:

Քերթը շատ համեստ է եղած ինքն իրեն վերագնահատութեան մէջ: Իրապէս ան բարոյական մեծ արժէք կը ներկայացնէ, իբր օրգան ոչ միայն Եգիպտոսի, այլ ամբողջ Արեւելի: Ան մնացած է միշտ իւր բարոյական բարձրութեան վրա, անխաղախ ու անվերապահ արտայայտիչն է եղած աշխատաւոր ժողովուրդի հոգեկան ձգտումներուն ու անխնայ եւ յախումն ձգողով անոր մտաբանութիւններուն. այսպիսով անոր մտաբանութիւնը եղած է պահել անհղարակ հայ ցեղի զինավիճակ, փրկել գայն օտարութեան աւերիչ ու քայքայիչ մթնոլորտի ազդեցութենէն, կապուած պահելով հայ հայրենիքի, լուսաւոր ապագայի եւ ցեղային առաքինութիւններուն հետ:

«Ալիք», որ կը հրատարակուի Թէհրանի մէջ, կը տօնէ իր «Ինքամեակը»:

Համեստ ու լռիկ սկիզբ մը ունեցաւ այս քերթը, բայց քիչ ատենու մէջ, շնորհիւ իւր շուրջ հաւաքուած քանի մը տասնեակ ներքու աշխատակիցներու, այսօր իրանահայութեան համար դարձած է կենսական պահանջ: Իւր բովանդակութեան շնորհիւ, ան գրաւած է նահապետութեան շնորհիւ, ան գրաւած է նահապետութեան շնորհիւ, ան գրաւած է նահապետութեան շնորհիւ: Իւր գոյութեամբ ան շաղախը դարձաւ իրանահայութեան, մանաւանդ երիտասարդութեան հասարակական ներքու միջն ու ջանքերուն: Կազմուած ըլլալով արտեայ կիրքերէն վեր, «Ալիք»-ը, շնորհիւ իր լրջութեան գրաւած է իրանահայութեան համակրանքը եւ ձեռք բերած է բարոյական հեղինակութիւն:

«Նոր Օր» - Աթէնք կը լրացնէ 14-ամեակը իր հրատարակութեան:

14-ամեակը իր հրատարակութեան: Իր խմբագրականը (Մարտ 25) ամենէն միշտ կը բնորոշէ անոր ուղղութիւնը. «14 տարիէ ի վեր այս մամբան վրա ենք, հաւատաւոր ու յատուկ պէս: Շատ դժարութիւններու հանդիպեցինք, բազմաթիւ խոչընդոտներու դէմ պայքարեցանք, բայց քայքայեցինք անվիատ, յաղթանակին յոյսով: Ունեցանք քերութիւններ, ունեցանք սայթաքումներ, ապառաջներ կատարուեցան: Բայց երբեք կամայ եւ հարկադրական. չդաւանանք մեզ անոր հոգեկան դասաւոր իդէալին, մեր քաղաքական դասաւոր իդէալին, որուն հոգեկան փարեցանք, մեր ձայնորդ եւ ուրախ օրերուն:

«Այս քերթը եւ անոր դաւանակից քերթերը, մէկ հոգարտամք ունին, մէկ սփոփանք: Անոնք հաւատացին ցեղին իսկական, պայքարեցան այդ իդէալին համար, գոհեցան իրարակամ, ֆիզիկական ինչպէս նաեւ բարոյական միջոցները:

«Նոր Օր», հպարտ է անոր համար, որ դրոշակ ունեցաւ, որուն ծալքերուն տակ համախմբեցան այս գաղութին մեծերն ու պոտիկները, հաւաքաբար ծառայելու համար ցեղին եւ անոր հետնապնդած նպատակներուն:»

Ընկերական եւ եղբայրական մեր ջերմ

Վ. Փ.

ԱՆՅՈՒՇ ԹԷ ԱՆՈՒՇ


«Վեմ»-ի 1934-ի Դ. համարում գըրել էի, որ Արշակ Բ.-ի բերդը պիտի կոչուի «Անուշ» եւ ոչ թէ «Անյուշ»:

Գրիգոր Եղիկեանը նոյն տարւայ «Վեմ»-ի յաջորդ համարում պարզաբանում է, որ պիտի կոչուի «Անյուշ» եւ ոչ «Անուշ»:

Փաստորը եւ հորեմացին յիշում են եւ «Անուշ» եւ «Անյուշ» անունով, եւս Ընդմիջն անամբ հուժիստանում, եւ հիշտ որ կասր Շիրինը (Անուշ բերդը) հուժիստանում չէ, ինչպէս ընդհանրապէս ընդունւած էր կարծել, եւ ես կարծում էի:

ու սրտագին շնորհաւորութիւնները յիշեալ բերքերուն: Կը մաղթեմք անոնց յարատեւութիւն ու մանաւանդ տոկունութիւն՝ կուրծք տալու համար տարագիր կեանքի պէսպէս դժուարութիւններուն:

Պրպտումները ցոյց տւին, որ «Անյուշ Բերդ» - կասր Ֆերամուշ» անունով՝ յատուկ բերդ չկայ պարսկական հին բերդերի շարքում: Ֆերամուշ անունով, որ նշանակում է անյիշելի, անյիշատակելի, տրում էր այն բանտին, որի բանտարկեալը դատապարտւած էր մահուան. այսօր էլ Երէ մէկը դատապարտում է մահուան, նրա բանտարկւած տեղը համարում է «Ֆերամուշ», անյիշելի, անյուշ: Արշակ Բ.-ի բերդը պիտի գտնուի լինէր Տիգրանի շրջաններում եւ պիտի կոչուէր «Անյուշ բերդ» եւ ոչ «Անուշ»: X.



ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» հանդէսը.

Խորհրդակայ կեանքի եւ մասնաւորապէս «կուլտուրական ֆրոնտի» զարգացման պատմութեան մէջ իր ուշագրաւ տեղն ունի մամուլի օրգանների եւ սրբանց շարքում առանձնապէս հաստատուած ամսագրի պատմութիւնը: Բուշուիկեան 15-ամեայ տիրապետութեան ընթացքում բազմաթիւ փորձեր են արել օրաթերքերի կողմէն ունենալ տեսակներին լոյս տեսնող ու հաստատուն հիմքերի վրա դրած ամսագրեր, սակայն այդ բոլոր փորձերն էլ անցել են անյաջող: Մէկ կողմ բողած առ այժմ բովանդակութեան խնդիրը, անոնք, օրինակ, այնպիսի մի արտաքին փաստ, ինչպիսին է երկարատեւ ընդմիջումները ամսական հանդէսների հրատարակութեան մէջ եւ նրանց վերհրատարակութիւնները տարբեր անուններով տակ ու որպէս տարբեր, մէկը միւսի հետ կապ չունեցող, օրգաններ: Մինչդեռ Խորհրդ. Հայաստանում լոյս տեսնող կեդրոնական օրաթերքը այս 15 եւ կէս տարւայ ընթացքում միայն մէկ անգամ է փոխել իր անունը, ընդ որում մի բանի ամիս միայն հրատարակող «Կոմունիստ»-ին (1920 թ. Դեկտ. 5-ից մինչեւ 1921 թ. մայիս 27-ը) յաջորդել է «Պրոլետարիւ Հայաստան»ը, որ պահում է իր գոյութիւնը ամբողջ 15 տարի շարունակ, կեդրոնական ամսագրեր յիշեալ ժամանակամիջոցում լոյս են տեսել հինգ հատ՝ «Նորը», «Նոր Աշխարհ», «Նոր Ուղի», «Վերելք» եւ «Պրոլետարիւ Գրականութիւն»: Առաջ տանելով համեմատութիւնը, կարող ենք մատնանշել նաեւ հետեւ-

եալ տարբերութիւնը: Օրաթերքը հրատարակել է կանոնաւորապէս, օրը օրին, մինչդեռ վերայիշեալ ամսագիրը, համարեա առանց բացառութեան եւ յաճախ նոյնիսկ երկրորդ քւից սկսած վեր են ածել պարբերական հանդէսների, լոյս տեսնելով երկու, երեք եւ մինչեւ անգամ չորս ամիսը մէկ անգամ եւ նոյն ծաւալով, ինչ որ սահմանւած է եղել ամսական գրքոյկի համար:

Ինչ է այս ուշագրաւ երեւոյթի պատճառը: Նիւթական միջոցների պակասը, բաժանորդների սակաւութիւնը, թէ աշխատակիցներ չհարելու հանգամանքը: Ով էին թէ շատ ծանօթ է հրատարակչական գործի առանձնատկութիւններին խորհրդային երկիրներում, նա գիտէ, որ վերայիշեալ պայմաններից եւ ոչ մէկը չի կարող որ եւ է ձեռով վրձնական նշանակութիւն ունենալ այս դեպքում: Հրատարակչական ամբողջ գործը մասնաւոր անհատների ձեռքից խլում ու պետութեան սեփականութիւն է դարձւած այսօրայ Հայաստանում: Նիւթականի խնդիրը, այսպիսով, որ եւ է դեր չի կատարում մամուլի օրգանների հրատարակութեան մէջ, որովհետեւ անգամ եւ Հայաստանը իր ազգատիկ ռիւզեյով ի վիճակի է հոգալ գոնէ մէկ հատ ամսագրի հրատարակութեան ծախքերը: Չի կարող խօսք լինել նաեւ աշխատակիցների սակաւութեան մասին, որովհետեւ «գրական կադրերը» խորհրդային երկիրներում ազատ գրադուստրութիւն մարդկանցից չեն կազմւած, այլ գրագէտներից, որոնք պետական (կու-

սակցական) պաշտօնեաներ են համարուում եւ որպէս այդպիսիք՝ ենթակայ են «մտքի լիզակայի» ու կարող են «գործուղել» «գրական ֆրոնտ»ի այս կամ այն «նակատամասում» աշխատանքներ կատարելու:

Ուրեմն, ի՞նչ է պատճառը, որ խորհրդային Հայաստանում «չի ֆալուս» հաստատիր ամսագիրը: Մեր կարծիքով պատճառը ամսագրի իւրապատուկ բնույթի այն անտեսումն է, որ մամուլի հանդէպ բոլշեւիկների ցոյց տաժ ֆաղափականութեան հիմնական գծերից մէկն է կազմում: Խորհրդային վարչիչները քիւրիւմացութեամբ կարծում են, որ օրաքերքի հետ միասին նաեւ ամսօրեայ հանդէսները կարելի է դարձնել կուսակցական հրատապ հարցերի համար մարտնչող ֆաղափական օրգաններ, առանց վնաս հասցնելու դրանց գոյութեան, որի գլխաւոր նպատակն է, ինչպէս գիտենք, ծառայել գերագնացապէս մշակութային նշանակութիւն ունեցող խընդիրների ֆնուութեան ու լուսարանութեան: Եթէ կարելի է ներդրանք օրաքերքի հիմը, ու դարձնել այն տեսակ կուսակցութեան մարտական պաշտօնաքերքը, առանց սակայն, վտանգելու նրա գոյութիւնը, «գրական, գեղարւեստական, ֆննդատական եւ տեսական» հանդէսի հետ նոյն ձեւով եւ անպատիժ կերպով վարելի չի կարելի: Այդ է պատճառը, որ այս կամ այն կուսակցութեան ազդեցութեան տակ գտնուող ամսագիրը միշտ աւելի լայնախոս է լինում, քան օրաքերքը: Եւ այդ է պատճառը նաեւ, որ ամէն անգամ, երբ անտեսում է այս անհրաժեշտ պարագան, վտանգում է ամսագրի գոյութիւնը:

Մտանցած վերոյիշեալ օրէնքը հաստատում է նաեւ խորհրդային ամսագրերի բովանդակութեանց համեմատութեամբ: Այդ ամսագրերից նրանք, որոնք հրատարակել են բոլշեւիկեան քե-

ծիմի համեմատաբար մեղմ շրջանում, աւելի նոյս ու հետաքրքրական բովանդակութիւն ունեն, քան նրանք, որոնք լոյս են ընծայել ծայրայեղ խստութիւններով աչքի ընկնող ժամանակաշրջանում: Մրա հետեւանալով, օրինակ, «Նորը»-ը, որ խորհրդային ամսօրեայ հանդէսի առաջին փորձն է համարում, եւ որը սակայն հրատարակել է Նէպոլի (Նոր տնտեսական ֆաղափականութիւն) տարիներում (1922-1923) աւելի նոյս ու հետաքրքրական բովանդակութիւն ունի, քան 1930-1932-ի «Նոր-Ուղի»-ները եւ կամ «Վերելք»-ները, որոնք լոյս են տեսել առաջին հնգամեակի սեւ շրջանում:

Եւ նոյն այդ պատճառով «Նոր-Ուղի»-ի Գրականութիւն» հանդէսը, որ սկսել է հրատարակել 1934-ի վերջերին, երբ Մտալինը արդէն կատարել է իր շրջադարձը գրական ֆաղափականութեան մէջ, գերագնացում է խորհրդային նախկին բոլոր ամսաքերքերին, բացի «Նորը»-ից: Ճիշդ է Հայաստանի խորհրդային Գրողների Միութիւնը, որի օրգանն է համարում այս պարբերականը, խրատելով «Նոր Ուղի»-ի փորձից, անւանել է այս պարբերականը Հանդէս եւ ոչ թէ ամսագիր եւ լոյս է ընծայում ոչ թէ ամսէ ամիս, այլ տարեկան 5-6 գիրք, բայց ամենագլխաւոր կողմով, այսինքն բովանդակութեան տեսակետից, «Նոր-Ուղի»-ի Գրականութիւն»-ը գգալի մի ֆայլ է դէպի առաջ:

Մեր ձեռքի տակ է այս հանդէսի 1935 տարւայ 1-5 քիւերը եւ դրանց մասին է լինելու մեր ասելիքը: Առաջինը, որ աչքի է գարնում հանդէսի բովանդակութեան մէջ, գեղարւեստական բաժնի գերակշռութիւնն է «ֆննդատական եւ տեսական» բաժնիների վրա: Համարեաքէ բոլոր գրքերում էջերի կէսից աւելին յատկացած է գրական եւ գեղարւեստական նիւթերին: Ինչ վերաբերում է աշխատակիցներին, մենք այս հանդէսի մէջ գտնում ենք բոլոր այն ծանօթ-

անունները, որոնք անցել են բոլշեւիկեան ֆուրայով ու վերջնականապէս արժանացել խորհրդային գրողի պատիւին: Ա. Բակունց, Ստ. Զօրեան, Մ. Արմէն, Գ. Մահարի, Գեր. Գեմիրեան, Վ. Թորովնց, Գեղ. Սարեան, Վ. Նորնց, Ալազան, Ն. Զարեան, Արազի, Իսկ նորերից՝ Աղաւնի, Բերբերեան, Սիրաս, Սարմէն, Լ. Թարգիւլ - ահա այն գրողները, որոնք նիւթեր ունեն հանդէսի արձակի եւ բանաստեղծութեանց բաժնում:

Ինչպէս եւ պէտք էր սպասել, ամենագեղեցիկ ու ամենայաջող գործը պատկանում է Ա. Բակունցի գրչին: Մեր տաղանդաւոր արձակագիրը ձեռնարկել է գրել հաշտուր Արովեանի կեանքից մի մեծ վէպ, որից մի քանի գուլիս արկազրւել են այս հանդէսի 1-3 գրքայկներում: Առաջին հատածը կոչւում է «Գործ Մայրանա, դասեր մկրտում է»: Նրա մէջ պատմում է հաշտուր Արովեանի կեանքի այն շրջանին մասին, երբ նա Գորպատից վերադարձած տեսաչ էր կարգած երեւանի գաւառակում «Լիւրեր Արժէնիեր» խորագրի տակ արկազրւած է ուսանողների համալսարանական կեանքը, նրանց քեֆերը, ինչպէս եւ ընտանեկան կեանքն այս պրոֆեսորների (Պարբոտ, Աուլեմդեր), որոնց հետ մօտիկ յարաբերութիւններ ունէր Խ. Արովեանը: Դատելով այս հատածներից, Բակունցի վէպը մի շատ գեղեցիկ գործ է դառնալու եւ շատ ցաւալի կլինէր, եթէ նա էլ արժանանար «կարմրաքար»-ի բախտին:

Արձակի բաժնում երկրորդ աչքի ընկնող գործը Ստ. Զօրեանի «Մի կեանքի պատմութիւն»ն է, որի մէջ նա գեղարւեստական ձեւով տալիս է իր կեանքի պատմութիւնը: Տպագրւած է առ այժմ առաջին մասը:

Այս երկու վէպերի նիւթն էլ առնւած են մեր անցեալից եւ անմիջական առընչութիւն չունին «սոցիալիստական շինա-

բարութեան» հետ: Ամենաուշագրանայն է, որ անցեալի մասին խօսելիս, յիշեալ հեղինակները առանձնապէս հաշի չեն առնում կուսկուսի մինչեւ վերջերս կիրարկուող պահանջը՝ ներկայացրել անցեալը սեւ գծերով, որպէս զի ներկան աւելի պայծառ ու հանելի երեւայ խորհրդային ֆաղափանքի աշիւն: Ահա այս նոր գիծը, որ սկսել է նշմարել խորհրդային եւ խորհրդային գրականութեան մէջ, իր որոշ դրոշմն է դրել հանդէսի բոլոր հինգ քիւերի բովանդակութեան վրա եւ դրանով գրական այս նոր պարբերականը գատորոշել է այս կարգի նախկին հրատարակութիւններից:

Այս միեւնոյն ֆաղափականութեան դրոշմը նկատելի է նաեւ հանդէսի գրքայկներում տեղ գտած ռոտանտորների վրա: Նրանց մէջ ֆնարբգական յայտնաբեր «անհատապաշտական» ու «մանրրոժուական» այն « մտտիւնք» չեն, որոնք պիտի դուրս մղւեն խորհրդային պոէզիայից, այլ այն քեմա-հրդային պոէզիայից, այլ այն քեմա-ները, որոնց մասին կարելի է գրել ու անպատիժ մնալ: Բնորոշ է, որ այս կարգի մտտիւնք երգելիս խորհրդային բանաստեղծներից նոյնիսկ ամենամտադանդները տալիս են գործեր, որոնք կարդացում են հանոյալով: Այսպէս, օրինակ, Ալազանի «Հարստութիւն» գրքից շարքում տեղ գտած այն մի քանի ռոտանտորներն, որոնց մէջ նա երգում է գարունն ու վարդերը, անհամեմատ աւելի լաւ են, քան նրա «երկաք ու բեռնիւն» նիւթում եւ երկաքի ու բեռնի նման չոր ու կարծր ռոտանտորներն ու պօէմները, որ տեղ են գտել նրա լոյս ընծայած հատորներում:

Ինչ վերաբերում է «Խորհրդ. Գրականութիւն» հանդէսի քննադատական եւ տեսական բաժնիներին, նրանք, ինչպէս ասացինք, նախեառաջ շատ ազգաւ են: Բացի այդ, աչքի գարնող չափով մաքրագործած են այն կարգի յօդածներից

որոնց նպատակն է «գիծ շտկել»: Այդ գործի փառապանծ վարպետները, ինչպէս օրինակ, Ա. Ոսկերչեանը, Ն. Դաբաղեանը եւ այլն, իրենց տեղերը գիջելն «աջ-ազգայնական քեհում» ունեցող Ա. Յովհաննիսեանին, Ա. Կարինեանին, եւ միջին ուղեգծով ընթացող Ս. Մելիքեանին, Ս. Սողոմոնեանին եւ Ս. Յարութիւնեանին:

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՊԱՐՅԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Գրեթէ բոլոր երկիրներու մէջ հաստատուած հայ տարագիրները կիս-նոր, ունին իրենց օրաքերքը, երկօրեան կամ շաբաթաքերքը: Ասկէ գատ, կարեւոր կեդրոններու մէջ, ուր հայերը զանգուածաբար կ'ապրին եւ մասնաձող այն գաղութներու մէջ, ուր անոնք ունին իրենց մէջ մտաւարականներու մեծ քիւ մը, կը հրատարակուին ամսագիրներ:

Այս սեսակէտէ ամենէն բեղմնաւորը Փարիզն է հարկաւ, ուր կը հրատարակուին «Վէճ», «Անահիտ», «Կեանք եւ Արեւստ», «Երկունք», «Հայ Արի», «Հայ Բոյժ», Յետոյ կուգայ Ամերիկա, ուր լոյս կը տեսնեն «Հայրենիք», բեղուն եւ ճոխ ամսագիրը, «Նոր Գիրք», եւ «Կոչանակ» ու «Կանթեղ» կրօնաքերքերը: Երկու ուրիշ կրօնաքերքեր՝ «Միօն» եւ «Հասկ» կը հրատարակուին Երուսաղէմի ու Ամերիկայի մէջ: Ամսագիրներու այս շարքին մէջ իրենց պատուար տեղն ունին վեհապետի «Բաղմակէտ»ը եւ վեհապետի «Հանդէս Ամսօրեան»:

Այս բոլոր ամսաքերքերը իրենց խոշոր դերը ունին տարագիր հայութեան մտաւոր, հոգեկան եւ ցեղային դիմագծի պահպանման եւ զարգացման մէջ: Ուրիշ առփիւ քերես աղբարդառնանք անոնց:

Ամենէն մեծ բացը, որ կը մնար եւ որ

Արձանագրելով «Նորհրդային Գրա-կանութիւն» հանդէսի վերոյիշեալ դրական կողմերը, ցաւով պիտի մտնանք նշեմք, որ նաեւ այս հրատարակութիւնը բունի է նախկինների ուղին: Նոր գիրք վաղուց է ինչ լոյս չէ տեսնում եւ հանդէսն, դատելով բոլոր երեւոյթներէ, սպրում է իր վերջին օրերը:

Ա. Խ.

կը կարծենք թէ չափազանց կարեւոր ու էական բաց մըն է օտար միջավայրերու մէջ հասակ նետող մոր սերունդին համար, մանկական պարբերաթերթերու եւ գրականութեան բացակայութիւնն է:

Այդ պատիւը «Արի»-ին կը պատկանի հարկաւ, որ 3-րդ տարին կը բոլորէ եւ օգտակար իր դերը կը կատարէ ամերիկահայ սերունդին մէջ: Թողնելով հետագային անդրադառնալու անոր եւ նման փանի մը պարբերաքերքերու մասին, այս անգամ կուզեմք հայ ծնողներու ուշադրութեանը յանձնել հեռուոր իրանի մայրաքաղաքի՝ Թեհրանի մէջ հրատարակող «Նոր Հասկեր» երկշաբաթաքերքը, որ հակառակ գոյութիւն ունեցող ծանր պայմաններուն, համած է իր 13-14-րդ թիւը, նախանձելի կորուզումը մը:

Ինչպէս ըսինք, խիստ մեծ արժէք ունի եւ կենսական պէտք մը կը ներկայացնէ այն եւ այդ պատճառով ալ, բող ներքին մեզ այդ օգտակար ձեռնարկի նկատմամբ մեր փանի մը դիտողութիւնները եւ քննադատութիւնները յայտնել:

Բոլոր ազգերու մէջ, մանկական հրատարակութիւններու նկատմամբ, մանկաբայժ-հոգեբանները միշտ յատուկ տեղ մը տւած են լեզուի եւ ոճի հարցին:

Պէտք է տալ ֆերականօրէն ճիշդ, խը-

նամուած, պարզ եւ գեղեցիկ լեզու մը: Պէտք է համեմել զայն յաճախ ծողովըրդական ճինն հետ, բայց անհրաժեշտ պայմանով մը, որ այդ լեզուն ըլլայ մանկան մտքի մակարդակէն ոչ բարձր, ըլլայ դիւրըմբռնելի եւ հասկնալի:

Այդպիսի լեզուով պէտք է պատմել մանուկին, նոյն իսկ ամենէն բարդ խնդիրներու մասին գրելու ատեն: Բարդ նիւքերը հասկնալի եւ մարտելի դարձնելու արեւստն է, որ կը պահանջուի մանկական գրականութիւն հրապարակ բերողներէ: «Նոր Հասկեր»-ի մէջ թէեւ կը նկատուի այդ ձգտումը, բայց քիչ անգամ կը յաջողի:

Մեր կարծիքով հետեւեալ նպատակներուն պիտի ծառայէ մանկական գրականութիւնը:—

Ա. Դաստիարակել փոքրիկի բնաւորութիւնը, ներշնչելով անոր ազնիւի ու բարիի գաղափարը, դարձնել զայն արի ու յանդուգն, մշակելով անոր մէջ յարքելու կամք:

Բ.— Զարգացնել անոր երեւակայութեան պատկերաւուսները, բարիքը՝ առանց, անուշտ, անկարելիութիւններու եւ առանց եքերներուն մէջ նախընտալու անոր հոգին:

Գ.— Օժտել անոր նախապատրաստական օգտակար գիտելիքներով, մանաւանդ բնական գիտութիւններու մարզին մէջ:

Դ.— Գիտելու, նկարագրելու, բնագոյտելու եւ ատման ձեւակերպելու արեստը զարգացնել անոր մէջ:

Ե.— Ներշնչել անոր ազգութեան եւ հայրենիքի գաղափարը, տալով մեր կիսն եւ նոր պատմութիւններէն դաստիարակիչ դրագներ, կենսագրականներ, անանդալէպեր եւ դիւցազնական շրջաններէն կեփեարքներ:

Զ.— Հարգողակից դարձնել զայն եւրոպական ֆալսակարգութեան գեղեցիկ արդիւններուն (արեւստ, գիտութիւն եւ կեանք):

«Նոր-Հասկեր»ը կարող անձերու ձեռք կը գտնուի: Շատ գեղեցիկ ու նպատակայարմար են ձեռագիրներով փոքրիկ պատմածքներու հրատարակութիւնը, պատկերներու կողմէ գրւածքները եւ ծաղրանկարներէն շատերը:

Ողջունելով այս յաջող հրատարակութիւնը կը քննադատելիք Պարսկաստանէն դուրս գտնուող ծնողներուն եւս օգտուի այդ կրթիչ հրատարակութիւնն, որով հրատարակիչները հնարաւորութիւն պիտի ունենան աւելի նոյնացնելու, գեղեցկացնելու ու խնամք դնելու քերքին վրա:

Մանկական փանի մտեցող գրեյկներու հրատարակութիւններու ձեռնարկած է նաեւ Ռուսաստանի «Մասիս» ընկերութիւնը:

Այս հրատարակութիւնները մեծապէս ուշադրութեան արժանի են եւ պէտք է որ առանձին խօսքով այս մասին:

«Բաղմակէտ»ը եւ «Հանդէս-Ամսօրեան» առանձին թիւեր են ներած ատուածաշնչի բարգմանութեան 1500-ամեակին: Հմուտ բանասէրներու այդ երկու հրատարակութիւնները (մանաւանդ առաջինը իր շփեղութեամբ եւ նիւքերու նոյնութեամբ) պատիւ կը բերեն Միջին արեւմտեան եւ մնայուն արժէք կը ներկայացնեն մեր պատմագիտական գրականութեան համար իրենց հարուստ ու հետաքրքրական նիւքերով:

Պարսկաստան երաշխները գոհողութիւն (արդարեւ) յանձն առած են հրատարակելու «Կեանք եւ Արեւստ» ամսագիրը, որուն 5-րդ թիւը արդէն լոյս տեսած է:

Իր ծաւալով փոքրիկ (32-35 էր.), սակայն հարուստ եւ հետաքրքրական յօդուածներով օժտուած այս պարբերականը աչի կը գարնէ իր խնամատ ու մշակուած լեզուով ու բովանդակութեամբ:


Պ. Զօպանեանը եօք տարիէ ի վեր կը հրատարակէ իր «Անահիտ»ը, եռամսեայ

հանդէսը որ աւելի շուտ ժողովածուի մը պատահականութեամբ կը հրատարակուի - հաւանաբար նիւթական արգելֆներու պատճառով, ինչ որ յատուկ չէ միայն անոր: Վերջերս լոյս տեսած է 1936 միացեալ 1-3 թիւը: Հարուստ բովանդակութիւն ունի: Առանձնապէս հետաքրքրական է բանասէր Սագրզեանի գեղեցիկ

մանրանկարչութեամբ զարդարած 1 ուսումնասիրութիւնը 1274 թիւն գրած աւետարանի մը մասին:

Միացեալ այդ թիւին 3-րդ մասին մէջ գետեղած են այն նաոերը որ արտասանեցան Աստուածաշնչի տարեդարձի առթիւ տեղի ունեցած հանդէսին մէջ:

Փ.



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

«ՍԱՍՆԱՅ ԾՌՆԵՐ» -- Խմբագրեց Պրոֆ Մ. Արեղեան, աշխատակցութեամբ Կարապետ Մելիք Օհանջանեանի. Երեւան, 1936 թ.

Երեւանում ձեռնարկել են հայ ժողովրդական վէպի հրատարակութեան: Արդէն լոյս է տեսել ծրագրած երկու հատորից առաջինը, որ նւիրած է Սասնոյ ժողովրդական վէպին, որը յայտնի է «Սասնայ ծռեր» անունով: Սուրբ մի հատոր է այդ, 1200 էջից բաղկացած, որի մէջ տեղ են գտել 25 տարբերակ: Դրանցից հինգը գրի են առնւած վերջին տարիներում, մնացածը՝ նախայեղափոխական շրջանում:

Սասնոյ վէպը հայ հասարակութեանը առաջին անգամ ծանօթացրել է Գարեգին Վարդ. Սրւանձտեանցը, որ 1874 թիւն լոյս ընծայած իր *Գրոց ու Բրոց* ժողովածուի մէջ հրատարակել է այդ վէպի մի տարբերակը, «Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» անունով: Սըրւանձտեանցի գործը ահագին տպաւորութիւն թողեց այն ժամանակայ գրագէտ ու ընթերցող հայ հասարակութեան վերա ու յարուցեց նրա մէջ մեծ հետաքրքրութիւն դէպի հայ ժողովրդական վէպը ու, մասնաւորապէս, դէպի Սասնոյ վէպը: Արդիւնքն եղաւ այն, որ մէկը միւսի յետեւից սկսան լոյս տեսնել այդ վէպի մի շարք նոր տարբերակներ, որոնք եւ տեղ են գտել Երեւանի այս ժողովածուի մէջ: Թւում է, թէ զարմանալի մի պատահականութեան պիտի վերագրել, որ Գարեգին Վարդ. Սրւանձտեանցի գրի առած տարբերակը տեղ չի գտնուի այս հատորի մէջ:

Ժողովածուի խմբագիր Մ. Արեղեանի

եւ նրա աշխատակից Կ. Մելիք Օհանջանեանի անունները հանդիսանում են ամենալաւ երաշխիքները հատորի մէջ տեղ գտած բնագրերի ձեռնհաս ու բարեխիղճ խմբագրութեան: Եւ իբրք, բոլոր տարբերակներն էլ, թէ դասաւորութեան եւ թէ բնագրերի արտաքին կարգաւորման տեսակէտից հրատարակւած են օրինակելի կերպով: Պ. Մ. Արեղեանը, որ վաղուց է ինչ գրագուտ է ժողովրդական վէպով, կարողացել է զգալ ու ըմբռնել այն տաղաչափութիւնը, որ գործ են ածում պատմողները եւ ուսանողների ձեռով է տպագրել այն բոլոր բնագիրները, որոնք գրի առնողների կողմից շարագրւած են մեծ մասամբ արձակով:

Տարբերակների բնագրերի հրատարակութեան նկատմամբ մէկ դիտողութիւն կարելի է անել: Նրանց մէջ չի կիրառւած միատեսակ ուղղագրութիւն: Խըմբագիրները պահել են, մի քանի թեթեւ շտկումներով, այն ուղղագրութիւնը, ինչ որ գործ է ածել գրի առնողը: Այդ պատճառով էլ յաճախ միեւնոյն բառը տպւած է տարբեր տառադարձութեամբ: Հրատարակիչները այդ չէին կարող չի նկատել, քանի որ այն ուղղագրութիւնը, որ գործ է ածել նրանցից մէկը՝ Կ. Մելիք Օհանջանեանը իր գրի առած 6 տարբերակների մէջ, հետեւողականօրէն միատեսակ է եւ համապատասխանում է սասունցիների բարբառի այն հնչիւնաբանութեան (ֆոնետիկայ), որ որոշել ու սահմանել են խմբագիրները: Հասկանա-

լի է, ի հարկէ, որ ժողովածուի մէջ տեղ գտած բոլոր նիւթերի նկատմամբ միատեսակ ուղղագրութեան կիրարկումը կը պահանջէր անհազին աշխատանք, ու ժամանակ եւ, ըստ երեւոյթի, դրա անաչ է, որ կանգ են առել խմբագիրները:

Բնագրերի դասաւորութիւնը կատարելի է ըստ առանձին պատմաժողովրդական վանդակութեան, ընդ որում խմբագիրները կարգը որոշելիս առաջնորդել են այն բանով, թէ երբեք սերունդներից՝ Սանասար, Սանասարի որդի Դաւիթ եւ սրա որդի Մհեր՝ ո՞ր մէկին են պատկանում գլխաւոր հերոսները, որոնց շուրջը եւ խմբում են սրանց հետ ազգակցական կապեր ունեցող միւս գործող անձերը:

Հատորին կցւած է մի կարճ, բայց վերին աստիճանի բովանդակալից ներածութիւն, որի մէջ նախառաջ բերւած են այն պատմական դէպքերը, որոնք այս կամ այն ձեւով իրենց արտայայտութիւնն են գտել Սասնոյ վէպի մէջ եւ ապա վերամշակւած են վիպական խումբակցութիւնների այն առանձին տիպերը, որոնք հանդէս են գալիս յիշեալ պատմաժողովրդի մէջ:

Ժողովածուի մէջ տեղ գտած տարբերակների մանրամասն ուսումնասիրութիւնը կատարելու է երկրորդ հատորով: Այդ հատորը, որ այժմ պատրաստում է հրատարակութեան համար, Մ. Արեղեանի մէկ անգամ արդէն լոյս ընծայած «Հայ Ժողովրդական Վէպը» գրքի վերամշակութիւնն է լինելու:

Ներածութեան մէջ բերւած են նաեւ Մ. Արեղեանի կողմից մշակւած օրէնքներն այն սաղաշափութեան, որ գործ են ածում պատմողները: Յետոյ կայ աշխարհագրական մի ակնարկ այն մասին, թէ հնում ո՞րտեղ են գտնւել Մոկս, Շատալս, Սպարակերտ, Գաւաշ եւ Հայոց Զոր պատմական վայրերը: Ներածութիւնը վերջանում է յիշեալ գաւառ-

ների բարբառների հնչիւնաբանական եւ քերականական առանձնայատկութիւններին ներած մի կարճ յօդւածով: Խմբագիրներն առիթ են ունեցել գետնադիւ ժողովածուի մէջ միեւնոյն պատմողի կողմից արւած 2 տարբերակներ, որոնցից երկրորդը գրի է առնւել առաջինից վեց տարի յետոյ: Տարբերութիւնը դրանց մէջ զգալի չափով աչքի է զարնում: Այս պարագան շատ կարեւոր է այն տեսակետից, որ նա հնարաւորութիւն է տալիս մեզ գաղափար կազմելու այն փոփոխութիւնների մասին, որ տեղի է ունենում ժողովրդական վէպի բովանդակութեան մէջ, սերնդից սերունդ փոխանցելիս:

«Սասնայ ծուր» գրքի մէջ գետնադիւ է պատարժան խմբագրի՝ Մ. Արեղեանի դիմանկարը եւ 18 նկարներ առանձին էջերի վրա: Սրանց մի մասը Հայաստանի պատմական յուշարձանների նկարներ են, իսկ մնացածները՝ վէպի այր եւ կին պատմողների դիմանկարները: Այս վերջինների մէջ աչքի են ընկնում պատմող Մ. Յարութիւնեանի մի նկարը, որ գրեթէ է մատիտով նկարիչ Մ. Սարեանը եւ Աւօ Զագսեանի վերին աստիճանի հետաքրքրական դիմանկարը, որ պատկերացնում է նրան վէպը երգասելու ժամանակ: Հատորի գարդն է կազմում տեղական տարազ հագած Նախօ քեռու (Մոկացի) գունաւոր մի հոյակապ ներկարը, որ պատկանում է հանգուցեալ նկարիչ Վարդգէս Սուրէնեանի վրձինին: Նախօ քեռին այն պատմողն է, որից Մանուկ Արեղեանը գրի է առել Դաւիթ եւ Մհեր վէպը: Բնագրի մէջ տեղ գրեւորած բազմաթիւ գարդանկարները, որոնք պատկանում են նկարիչ Կոչոյեանին, շատ գեղեցիկ են:

Հայ բանահիւսութեան համար վերին աստիճանի արժէքաւոր ու շահեկան այս հատորի հրատարակութիւնը կատարւած է անթերի:

Յ. ԶԱԻՐԵԱՆ

Ռ.Ա.ՖԱՅԵԼ, ԶԱՐԴԱՐՆԱՆ, «Դու եւ ես»:

Այս հատորի մէջ տեղ գտած արձակ բանաստեղծութիւնների մեծ մասը, ինչպէս վկայում է հեղինակը, գրւած են կովկասում 1916 եւ 1917 թւին: Ուշագրաւ է, որ այդ օրերի յեղափոխական պիւնդուրիստները համարեա թէ արձագանգ չեն ունեցել հեղինակի յոյզերի ու ապրումների վրա, եւ հատորի մէջ բացառութիւն են կազմում «Բաղաճափական մտորանքներ» ներքաշ փոքրածրագրերը (LXXXI եւ այլն):

«Դու եւ ես»-ի մէջ երկու տիրակալ յոյգ կայ՝ կնոջական սէրը եւ կորուսած հօր կարօտը:

Սիրոյ յոյգը արտայայտւած է որպէս կուսական մի ապրում, մահուր ու անբիծ մի տենչ, որ յատուկ է պատանեկան հոգիներին: Այդ այն սէրն է, որ երգել է Պ. Դուրեանը եւ նրանից տասնեակ տարիներ յետոյ՝ Վ. Տէրեանը: Այդ սէրը շիկնող արշալոյսն է իր ակնախոս գոյներով եւ ոչ թէ երկնում անազալոյս կրակ ու բոցը, որի մէջ մարմնի հետ միասին այրւում է նաեւ հոգին:

Ես կը սիրեմ արշալոյսը որ կը բռնկի լեռներուն կատարէն, կը սիրեմ առաջին շնորհները զարթնումի:

Ես կը սիրեմ զո արշալոյսը, իմ սիրտ առաջին սարսուռները, ոտուսները անլարժ՝ դէպի անվերջ նոր երկինքներ:

«Առաջին սարսուռներով» տրոպիան սրտի սիրած էակն էլ մի «ամէլիտ աղջիկ է», «արտերուն մէջ միմակ, երագին ժպտացող մանկան պէս», որ փախչում է բանաստեղծից եւ հէց իր այդ փախուստով էլ սիրելի է նրա համար:

Կը սիրեմ թախծը զո անծիր, Համբոյրը ու սիրոյ խօսքերը թովշական, որ չըսիր:

Կը յիշեմ դիւրը լուսնայ, թոթո - վուսն իմ զողորմ, վախուսող ամէլիտ աղջկայ:

Ու իմ զոյս, իմ ջնջոյ սրտակից, զուրկութեանդ զողորմի կյուղէ այնքան բաղբորէն ինձ՝

Երբ յանկարծ կ'յիշեմ զեզ այնպէս, արտերուն մէջ միմակ, երագին ժպտացող մանկան պէս:

Երագային ու երբային են նաեւ սիրային պահերն ու այն հանդիպումները սիրած էակի հետ, որ նկարագրւած են այս փոքրածրագրի մէջ: Մարմնական սիրով ու կրքով առգորուող էակներ չեն, որ հանդիպում են միմեանց, այլ կոյս հոգիներ, որոնց գգուսները ձեռքը ձեռքի մէջ առնելուց այն կողմը չեն անցնում:

Եւ երբ մի անգամ տղան տեսնում է աղջկայ սրտմեծները՝ «բախանցիկ մետաքս գուլպաներուն տակ բազմած» եւ նրա մէջ ցանկութիւն է առաջանում իր զողորմուն շրթներով համարելու այդ սրտմեծները, անմիջապէս մի ուրիշ գգացում ծառանում է դրա դէմ եւ արգելում «այսպիսի բան խորհիլը», որով հետեւ գիտէ, որ այդ «ամօթ է»:

Դպրոցական պատանիներին յատուկ սիրոյ այս գգացումը փիզիքական ոչինչ ունի իր մէջ: Նրանով համակւած տրոպայի համար սիրոյ առարկայ կարող է լինել միայն երեւոյթական մի աղջիկ, որին չի դիպել մարմնական սիրոյ կոպիտ քեր: Իսկ երբ նա կին է դառնում ու երբ, մանաւանդ, նա կրում է իր վրա փիզիքական սիրոյ արտայայտութիւնը, միայն եւ միայն հակադրանք է յարուցանում բանաստեղծի հոգում:

Տիկին

Դուք ամուսնացած էք:

Այնպէս այլակերպ է ձեր դէմքը հիմա եւ ձեր որովայնի ստեղծադործ կողմերը սակայն, շատ աններդաշնակ կատերագծի զեղեցիկ վերջալոյսի ֆոնին վրա պարտէզի:

... Ձեր դրեթէ ապշած նայածքը, զեղակորոյս ձեր կուրծեան այս անտարբեր հետաքրքրութիւնը վերջին՝ ուղղւած է դէպի ինձ:

Բայց բանաստեղծը խորշում է արդէն այդ կնոջից, որը «այնպէս փոխւած է» այժմ: Չկան այլեւս առաջաջ ծաղիկները, «այրւել են թիթեռները լապտերի բոցէն» եւ շուշան աղջիկը դարձել է ... «նշուղ մի դիակ»:

Այսպիսի մի մաքրամաքու սիրով շուշանաման աղջկան սիրել կարելի է ոչ թէ մեծ քաղաքների սրմաբաններում, այլ «բարձր ծառերու սուրբներում տակ», «աստղերում հետ», «անյայտ լընակի ամիս», «լեռնալանջի ծաղկաւտ գերեզմանի» քով բաց «հրաբայր եղբերեւեմի» տերեւների սասափումն ունկրելիք: Եւ բնութեան ներքին բազմաբնու գեղեցիկ նկարագրութիւններ կան այս հատորի մէջ, որոնք վկայում են այն մասին, որ կնոջական սիրոյ կողմին բանաստեղծի հոգին հրահրող միւս սիրական յոյզն է բնութեան սէրը:

Գարուն, դարուն, դարուն:
Գլուխս կիշնայ ծաղիկներուն ու երազանքն իր թեւերուն՝ ինձ կը տանի:
Կանաչազեղ հորիզոններն համբուրող սա կապոյտը քաղցրանհուն, ամպերու սա ցանցնւած դողող զնացքը դէպի հեռու անծանօթներն անըջական:

Յաւերթական վտակները գլզլան՝ ունինրու սուրբափակ խորունկն, դաւանքը մեղմաշունչ հովերուն, սոսաւիւնը երեսասարդ ճիւղերուն, թռիչքը փոքրիկ թեւերու՝ երկնակապոյտի մաքուր կամարէն:

... Ինչպէ՞ս ըսել, ինչո՞ւ երգել, երբ լինելուն ու դաշնածայն, քաղցրա-

տարած եւ անդորր, մայր բնութիւնը կերպէ՛:

Բնորոշ է, որ նայելիս բնութեան մէջ բանաստեղծը սիրում է նրա առաջին գարթօնքը՝ մքնաշաղք, արշալոյսը, գարունը եւ, առհասարակ, մեղմ պահերը: Ահարկու փոքորիկները, տակնուվրայութիւնն ու ալեկոծութիւնը չեն գրաւում նրան:

Գեղեցիկ են նաեւ այն փերթածները, որոնց մէջ արտայայտւած է բանաստեղծի կարօտը իր կարւած հոր համար:

Հայր, երբ պիտի դաս:
Կարօտդ ծովացաւ սրտիս մէջ, տես:
Հոգիս՝ տառապանքէն հողմալար՝
Կուրծքիս տակ տերեւի պէս կը դողա:
Չպիտի՞ լինա:

Այս կարօտը առանձնապէս ուժեղանում է, երբ գարնան գալով կենդանանում է բնութիւնը: Բանաստեղծի «հոգին խելար» այդ ժամանակ քաշում է դէպի հայրը: Նա հիացած է «բացւած ծաղիկներով», «կանաչ արտերով» ու «քնոյն իմերով» եւ ուզում է, որ իր խնդրութիւնը կատարեալ լինի ու ներշնչում է իրեն այն սին հաւատը, թէ «այս առաւօտ, վերջապէս, դարունին հետ հայրիկս մեզի կուգա՛յ»: Եւ նրա երեւակայութիւնը ծրագրում է համդիպման մանրամասնութիւնները:

Ես կը նետե՛մ դանդուրներէս լիւնները հրասարսուտ, դէպի դալար դաշտերէն ու ոսկեծուփ արտերէն, մոռնալով արցունքը քայլերուս տակ մեռնող ծաղիկներուն՝

Ես քեզի՛ կուզամ, հայրիկ, մայիսեան երգով, դարնան թեւերով, փարեւու փոշեթաթաւ ծոռնդերուդ եւ աչքերս, խնթութիւնով լեցուն աչքերս՝ ներբակ՝ կուրծքիդ վրա թաղելու:

«Դու եւ ես»-ի բանաստեղծութիւնը յոյզերի եւ ոչ թէ խոհերի բանաստեղծութիւն է եւ այդ պատճառով էլ նրա արժէքը գերազանցապէս ձեռի եւ ոչ թէ խորքի մէջ փնտռելու է: Ա. Խ.

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԳԻՐՔ. Ա. տարի *»
(Հրատ. «Համագրային Ընկերութեան»)

Հանելի արտաքինով այս տարեգիրքին մէջ տեղ են գտած բազմաթիւ աւագ եւ երիտասարդ գրիչներ:

Տարեգիրքը ունի գրականութեան, քննադատութեան, ուսումնասիրութիւններու, պատմագիտութեան-բանասիրութեան, գիտութեան եւ գեղարեստի բաժիններ ինչպէս նաեւ գրական արձագանգ ու հայ կեանքի տեսութիւններ:


Ամէնէն արժէքաւորն այս բաժիններու մէջ, անկասկած, գրական քննադատութեան եւ պատմագիտութեան ներքին մասն է, որում մէջ, տեղ ունին Յ. Օշականը, Ե. Տէր-Անդրէասեանը, Գ. Մխիթարեանը, Մ. Թէօօլեանը, Յ. Իրազեկը եւ Ռ. Բերբերեանը:

Հետաքրքրական են, մասնաւորապէս, Գ. Գիւզպեանի «Հայ Մշակայքի վարիչը ըստ Մտ. Նազարեանի», Ա. Խոնդկարեանի «Գրական շարժում Հայաստանում», Յ. ձ. Սիրունիի «Արեւիքն ու արեւմուտքը հայ հոգիին մէջ» ուսումնասիրութիւնները:

Պատմագիտական բաժինը գրեթէ ամբողջովին կը պարունակէ կարեւոր նիւթեր եւ ուսումնասիրութիւններ: Անշուշտ Տարեգիրքի ծաւալը բոլոր չի տար նիւթերու աւելի ընդարձակման, ինչպէս եւ լայն ուսումնասիրութիւններու: Գրականութեան բաժինն մէջ տեղ են գրւած Հր. Զարդարեանի, Լասի, Տարօնեանի, Մեհեանի եւ Սոս-Վանիի փոքրիկ պատմութիւնները: Զափածոյ գրածքներու մէջ շատ գեղեցիկ է Համաստեղի «Տոմար Մաքիական»-ը եւ Ամէն-Անուշի ջերմութեամբ լեցուն «Արմենիա» փերթածը:

«Համագրային Տարեգիրքը» մինչեւ այժմ լայն տեսած տարեգիրքերու մէջ նորութիւն մըն է իր նախորդներ, նիւթերու բազմազանութեամբ եւ լըջութեամբ: Գիրքը գարդարւած է աշխատակիցներու պատկերներով: Վ. փ.

*) Խմբագրութիւնս, դժբախտաբար հաճոյքը չունեցաւ ստանալու տարեգիրքէն. բարեկամէ մը ձեռք բերինք:



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր յարգելի Գործակալներուն եւ Բաժանորդներուն .

Ստիպւած ենք այս կոչով դիմել Ձեզ խնդրելով որ փութաք որ առաջ վարչութեանս զրկել 1935-ի տարեշրջանէն մնացած ինչպէս նաեւ 1936-ի նոր բաժանորդադիւնները :

Տպագրութեան եւ առաքման դանդաղեցման դիտարար պատճառը , չենք ծածկեր , նիւթական դժւարութիւններն են :

Ուստի կրկին կը խնդրէինք Ձեզ , որ չը մերժէք ստիպողարար ընդառաջ երթալ մեր այս դիմումին :

«ՎԵՄ»-ի ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- «Անահիտ», քիւ 1-3, միացեալ համար .
- «Սիօն», քիւ 3-5 .
- «Կեանք եւ Արեւստ», քիւ 1-5 .
- «Նոր Հասկեր», քիւ 11-12, 13-14 .
- «Երկունք», քիւ 2 .
- «Կանթեղ», քիւ 5-8 .
- «Նոր դեր», քիւ 2 .
- «Հանդէս Ամսօրեայ», քիւ 10-12, 1935 .
- «Հայ Բոյժ», քիւ 19 եւ 20 .
- «Բարձրակէտ», 1-2 միացեալ քիւ .
- «Պալ-Ուխտի», Մարտ .

- Յիշատակի հատոր Բաղձավէպի . Ս. Ղազար, վեցնետիկ . Աստուածաշունչի 1500ամեակին նւիրած .
- Գ. Գեղարբունի, Հին հայ բանաստեղծութիւնը .
- Ա. Սարգսեան. Ֆիլոզոֆի եւ Մովսէս Խորենացիին .
- Սար. Սարգսեան, Չորսվանք (ֆերբւստիւմներ) .
- Դուրիթ Վաչնաձէ, վրաստանը Հիւսիսի եւ Հարաւի միջիւ (ռուսերէմ) .



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Փ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 ,,
ՀԱՅՐԵՆԻՓ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ ՄԻԱՍԻՆ	
Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 ,,
Հասցէ՝	

13-15 Shawmut st.

BOSTON MASS (U.S.A.)

Ա Ս Պ Ա Ր Է Ձ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամերիկա, տարեկան,	1.50 դոլար
Արտասահման	2.00 ,,
Հասցէ՝	

"ASBAREZ" P. O. Box 865
Fresno, Calif., U. S. A.

Ա Ձ Ա Տ Խ Օ Ս Փ

ՕՐԱԹԵՐԹ

Բուլգարիա՝ տարեկան	550 լիւ
Բուլգարիա՝ վեցամսեայ	300 լիւ
Ամերիկա՝ տարեկան	6 դր.
Ուրիշ երկիրներ՝ տարեկան	150 ֆր.
Հասցէ՝	

45, Blvd. M. Louiza,
Sofia, (Bulgarie)

Ա Լ Ի Փ

ԵՐԿՈՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան	85 դիալ
Վեց ամիսը՝	45 դիալ
Արտասահման	
Տարեկան՝	170 ֆր. ֆր.
Հասցէ՝	

"ALIK", Impr. Moderne
Khiabane Posthané, Teheran
(Iran)

Յ Ո Ւ Ս Ա Ք Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան,	150 եգ. դի.
,, վեցամսեայ,	80 ,,
Արտասահման, տարեկան,	40 շիլինգ
,, վեցամսեայ	20 ,,
Հասցէ՝	

'Houssaper', B. P. 868
Le CAIRE (EGYPTE)

Մ Ե Ղ Ո Ւ

Երգիծական Շարքաքերք

Ներքին՝ տարեկան	100 լիւ
,, վեցամսեայ	50 լիւ
Ամերիկա Տարեկան	2 դոլար
Արտասահման Տարեկան	30 ֆրանկ
Հասցէ՝	

K. Kaladjian
B. P. 444, Sofia, (Bulgarie).

Հ Ո Ր Ի Ձ Ո Ն

ՕՐԱԹԵՐԹ

Ներքին՝ տարեկան	300 տր.
Արտասահման՝ տարեկան	150 ֆր.
Հասցէ՝	

Rue Mitropoleos, 14.
Salonique, (Grece)

Ս Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 անգլ. շիլինգ կամ 1.50 դր.	
Հասցէ՝	

Patriarcat Arménien, Jérusalem
(Palestine)

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	3.50 դոլար
Հասցէ՝	

"Pazmaveb", St. Lazar, Venise
(Italie)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱՌՆԻԿ ԳԻՒԶԱԼԵԱՆ .- Մեծ Յոբելեանի առթիւ 1

ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ .- Յուշատետրէս 12

ՇԱՌԼ ԴԻԼ .- Հայկական շարտարապետութիւնը 17

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ .- Հայաստանի գմբէթաւոր եկեղեցիները
 և անոնց հարտարապետական արժէքը 24

ՇԱԻԱՐՇ ՆԱՐԳՈՒՆԻ .- Նպաստ մը հայ և բուրբ աշուղական
 գրականութեան 31

ԻՌԻԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ .- Մ. Նալբանդեանցի անտիպ երկերը 38

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՍԻՐԵԱՆ .- Արհաւիրքի օրեր 66

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ .- Համաշխարհային պատերազմը և
 Տարօնի աշխարհը 82

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ .- Բագրատ վարդապետ Գէորգ-Թաւափայեան 96

ԱՆՅԵԱԼՔ .- Եղիշէ Թաղէոսեան .- Ներսէս Օհանեան 109

ԿԵԱՆՔ և ՄՇԱԿՈՅԹ .- Վասպուրականի ինքնապաշտպանութեան
 40-ամեայ տարեդարձը, Վ. Փ. - Թերթերու տարե-
 դարձներ, Վ. Փ. - «Անյս՞յշ» թէ «Անուշ», 111

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ .- «Խորհրդային Գրականութիւն» հանդէսը,
 Ա. Խ. - Գաղութահայ պարբերական մամուլը, Փ. - 115

ԳՐԱՆՈՍԱԿԱՆ .- «Մասնայ ծոեր», Յ. Զարեան .- Ռ. Զարդար-
 եան՝ «Դու և ես», Ա. Խ. - «Համագգային Տարե-
 գիրք», Վ. Փ. 121

ՅԱԻԵԼԻԱԾ .- Վահրամ եպ. Մանկունի, «Գէորգ Գ. և իր
 ժամանակը» 193

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝
 տարեկան 70 ֆրանք

Ֆրանսա և մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանք

Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիւրիա, և
 Պարսկաստան՝ ,, 50 ֆրանք

ՆԱՆՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐԱՔԱՆԶԻՐ ՏԱՐԻՈՅ 6 ԳԻՐՔԸ՝ 25 ՖՐ.
 Հասցէ՝ նամակների, դրամի, յողաձների և ուրիշ ամէն
 տեսակ առաքումների համար .-

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)
 Gérant: V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquièrre, PARIS (17^e)

« Վ Է Մ » - Ի Ն

Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը .-


- Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.
- Ն. Կակոսեան, (Մարտէլլի և շրջակայքի ընդհ. գործակալ)
 49, Rue Nationale, Marseille.
- Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.
- Կիպրոս՝ Յ. Մահտեան, Arasta St. No. 1, Nicosia.
- Բուլղարիա՝ Գ. Հալաճեան, K. Haladjian, B. B. 444, Sofia.
- Ռումանիա՝ Ե. Սարգսեան,
 Typ "Astoria", 14, Str. Pictor Lichian, Bucarest.
- Եգիպտոս՝ Գ. Մխիթարեան, խմբագր. «Յուսարեր»-ի,
 B. P. 868, Le Caire.
- Եթովպիա՝ Յ. Գ. Պուրսալեան, Hirna.
- Պաղեստին, Վախան կէտիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.
- Սիւրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 310, Alep.
- ,, Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.
- Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Badaveen, 27-1, Bagdad.
- Իրան՝ Խ. Մելքոնեան, Թաւրիզ:
 ,, Ա. Գէորգեան (Խուղիստանի ընդհ. գործակալ),
 Թեհրան՝ Ա. Պոյաճեան,
 A. Khodjayan. Magasin «Khochnoud», Avenue Lalezar, Téhéran.
- Սպանիա - Զուլա՝ Թաղ. Թաղէոսեան
- Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կոբոյեան,
 H. Gopioian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.)
- Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Խաչերեան, Canning 1245, Buenos-Aires

« Յ Ա Ռ Ա Զ »

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
 Խմբագիր՝ ՇԱԻԱՐՇ ՄՐԱՍԲԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Եռամսեայ
Ֆրանսա և Գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Եգիպտոս, Եթովպիա, Իտալիա	250 ֆրանք	130 ֆրանք	
Ռուսի երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	
Ամերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	

ՀԱՍԹ. — 17, Rue Damesme, Paris XIII



Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)